


ՆՆՈՒՐՈՒՄ Է ԱՈՅՆ ԳՐԵԸ
ԴՈՒՏՈՐ Գ. ՄԱՇՏՈՒՐՅԱՆԻ
ՁԵՆՈՒՄԻՆ ԻՐ ԱՅԻՆԻ



ԴՈՒՏ. Գ. ՄԱՇՏՈՒՐՅԱՆ

ԽՈՐԵ ՍՈՒՆԻ, ԹԵՂԵՐԱՆ
1944



A ^{III}
5093


ԳՈՒՔՏ. ԳՈՍՊՈՐ ՄԱՇՈՒՐԵՆՆ

499

ՆԻՐԻՏԻՄ Է ՍՈՅՆ ԳԻՐԲԸ
ԴՈՎՏՈՐ Գ. ՄԱՇՈՒՐԵԱՆԻ
ՅԻՇԱՏԱԿԻՆ
ԻՐ ԱՅՐԻՑ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

3448-80



ՏՊԱՐԱՆ «ՄՈՂԵՐՆ», ԹԵՀՐԱՆ
1944

Ե Ր Կ Ո Ւ Խ Օ Ս Ք



Այս մտածումների մէկ հատւածը՝ «ԽՈՐՀՈՒՄՆԵՐ» վերնագրի տակ, առջին անգամ հրատարակւած է 1918 թւին, իտալերէն լեզուով, Հոստոնում լոյս տեսնող «La Rivista delle Battaglie» հանգէսի նոյն թւի օգոստոս 31-ի № 7 ի մէջ:

Այն ժամանակ որոշել էի մտածումներս առանձին հատորով լոյս ընծայել, և չնայած այն հանգամանքին, որ աշխատութիւնս լրիւ կազմուած էր, սակայն, դժբախտ մի պատահարի հետեանքով՝ ի վիճակի չեղայ սուս-զըրութեան յանձնել:

Վերոյիշեալ հանգէսի խմբագիր պ. Ֆրանչեսկո Սպադաչիոն-ն իր ամսագրի 1918 թ. № 8-ի մէջ գրել է հետեւեալը.

«Յաջորդիւ մամուլին պիտի յանձնուի գործնական փիլիսոփայութեան մի հետաքրքրական հատոր, որն առաջին հերթին մենք ճաշակելով՝ գտնի ենք գերազանց, և իր ժամանակին կը յանձնարարենք մեր ընթերցողներին: Գրքի խորագիրը պիտի լինի «ԽՈՐՀՈՒՄՆԵՐ»: Հեղինակն է մեր բարեկամ և աշխատակից Գ. Մաշուրեանը՝ վեհանձն և ազնիւ Հայաստանից»:

Տարիներ անցնելուց յետոյ, նոյն մտածումները, ընդարձակ յաւելումներով, «ԽՈՐՀՈՒՄՆԵՐ» վերնագրի տակ, լոյս տեսան հրատարակւած «Ալիք» ժողովածուի (1937 թ.) և «Նաւասարգ» հանգէսի 1937—39 Ա. Բ. Ե. Ը. և Թ. թերթի մէջ:

Հայերէն լեզուով լոյս տեսած մեր այս մտածումների որոշ հատւածներն արտասպեցին «Կեանք» և «Արեւիկ» (Փարիզ, 1937 թ. № 9), «Արմենիա» (Բուէնոս Այրէս, 1937 թ. մայիս 11), «Հորիզոն» (Սալոնիկ, 1937 թ. ապրիլ 11), «Ազգակ» (Բէյրութ, 1937 թ. ապրիլ 21) և արտասահմանում լոյս տեսնող հայկական այլ թերթեր:

Միաժամանակ, արտասահմանեան հայ թերթերում, նաև Քեհերանում հրատարակող «Ալիք» երկօրեայի մէջ լոյս տեսան դրախօսական և կենսագրական յօդուածներ՝ զնահատական ջերմ արտայայտութիւններով:

Այսպէս օրինակ, «Կեանք» և «Արեւստի» գրագատ Ա. Արազեանը նոյն ամսագրի 1937 թ. № 8-ի մէջ գրելով նոր հրատարակութիւնների մասին, և անդրադառնալով մեր աշխատութեան, յայտնում է հետեւեալ կարծիքը.

«Մասնաւոր հետաքրքրութեամբ կը կը կարդացի դոքա. Գ. Մաշուրեանի ԽՈՐՀՈՒՄՆԵՐ վերնագիրը կրող յօդուածաշարքը: Գիտական փիլիսոփայական բովանդակութիւն ունեցող այս գրութիւնը ջջախիթ է: Կեանքի»:

Մանուկ, Սիրոյ եւ Յալիսեանկանութեան հետ կապւած բազմաթիւ խնդիրներ, որոնց հեղինակը նմանօրինակ շարք մըն ալ լոյս կընծայէ Թեհրանի «Ալիք» երկօրեային մէջ, «Գերեզմաննոցի լուծեան մէջ» ընդհանուր խորագրով... Յաջորդով դոքա. Մաշուրեանի կենսագրական տեղեկութիւնները*):

«Հայրենիք» անասարկ 1938 թ. № 12-ի մէջ, «Նաւասարդ» հանդէսին ներքեւ գրախօսականում, ստորագրւած Ա. Ա. (պրոֆ. դոքտ. Ա. Արեղեան), գրւած է հետեւեալը.

«Մի կարգ յօգւածներէից յիշատակենք... դոքա. Գ. Մաշուրեան՝ Խորհուրդներ, պրոֆ. Ե. Կողպէտիանց՝ Մարդկութիւնը եւ արեւի բծերի ազդեցութեան, Վերջին երկուսը թարգմանական աշխատութիւններ են: Սրանով մէկտեղ, «Նաւասարդ»-ի խմբագրութիւնը չէ սխալել տեղ տալ զրանց: Ոչ միայն նրա համար, որ իրանահայ կարող դէմքեր են հեղինակները, այլ և նրա համար, որ մի առանձին շահեկանութիւն են ներկայացնում այդ գրւածքները: Մասնաւոր յիշատակութեան արժանի է մանաւանդ Մաշուրեանի Խորհուրդներ աշխատութիւնը: Փիլիսոփայական հետաքրքրաշարժ խորհրդածութիւններ են զրանք՝ Կեանքի, Սիրոյ և Մահուան անդձեւածներէ շուրջը: Սիտսնի վերածւած մտածումներ չեն զրանք, այլ աֆորիզմների ձևով արտայայտւած խորհրդածութիւններ: Կենդանի և վառ, միևնոյն ժամանակ՝ նրբին... Մաշուրեանից հետո է յոռետես փիլիսոփայութիւնը. անգամ Մահուան խորհուրդը վերլուծելիս՝ Նա զրական, գործնական և միանգամայն լաւատես փիլիսոփայող է: Կեանքը չի բացատրում՝ անգամ Մահուան ի տես: Խորհուրդները կարգացում են մեծ հետաքրքրութեամբ: «Ալիք» ժողովածուի և թերթի մէջ ևս լոյս են տեսած Խորհուրդներ-ի տարբեր հատւածներ: Արժէ որ զրանք ամէնը հաւաքեն և լոյս ընծայեն հատորի ձևով ևս: Թարգմանութիւնը կատարւած է մաքուր հայերէնով»:

1937 թ. սեպտեմբեր 19, № 383 թւի մէջ, «Ալիք»-ը տալով կենսագրական տեղեկութիւններ, հետեւեալ կարծիքն է յայտնում.

«Աւելորդ կամ չափազանցւած մեծարանք չէ, որ ընծայում ենք դոքա. Գ. Մաշուրեանին, այլ իր փիլիսոփայական խոհերի և երկերի արժէքի գիտակցութեամբ առաջնորդւած մի գնահատանք»:

«Իր երկերով նա մի նոր սեռ է մտնում հայ գրականութեան անդաստանը: Գրական մի սեռ, որ անձանօթ է օտար լիզու չը գիտցող հայ ընթերցողին: Պիտի գիտենք նաև, որ մտաւորական անձերից ոմանք նոյն իսկ, առաջին պահ, ինչպէս որ հարկն է, չեն անգրադաւանում գրւածքում արծարծւած փիլիսոփայական մտքերի արժէքին: Այս երևոյթը պիտի բա՛

*) կենսագրական տեղեկութիւնները տպւած են «Կեանք և Արեւստ»-ի 1937 թ. № 9-ի մէջ:

ցատրել նրանով, որ մաքրի այդ բնագաւառը նրանց քիչ է զբաղեցրել:

«Հմուտ փիլիսոփայութեան և գրականութեան՝ դոքտ. Գ. Մաշուրեան իր պատրաստութեան կարողութեամբ ու նաև հին ու նոր փիլիսոփայ գրագէտների մտքերի օժանդակութեամբ վերլուծման է ենթարկում հիանքի, Սիրոյ և Մահուան ու Տիեզերքի խորհուրդները: Իր մեթոդը պատմողական ու վերլուծական է միաժամանակ... Դեռևս տարիներ առաջ խալիկան մասովը գնահատել է իր իմաստասիրական «Խորհուրդներ»ը:

«Մահուան խորհուրդը վերլուծելու դժուար գործին հայ գրագէտներից հազիւ մէկ երկուսն են մինչև այժմ ձեռնամուկ եղել, այն էլ թերի և անյաջող: Այդ տեսակէտից Գ. Մաշուրեանի գործն աւելի հիմնական և արժէքաւոր է»:

Տալով վերոյիշակալ ծանօթութիւնները՝ իմ մտածումների առթիւ արտայայտած կարծիքների մասին, այսու, նախ պարտք եմ համարում խորին շնորհակալութիւններս յայտնելու պ. Անդրէ Տէր Օհանեանին, որն ամենայն սիրալիութեամբ բարի եղաւ հայերէնի վերածել իմ մտածումները՝ ընտիր և յաջող թարգմանութեամբ:

Երկ, որը՝ ջերմագին շնորհակալութիւններս նաև վերևում յիշատակած թերթերի խմբագրութեանց և յարգելի գրախօսներին՝ իմ «Խորհուրդներ»ի վերաբերմամբ իրենց ընծայած ուշադրութեան և գնահատութեան համար:

Յոյս ունենալով որ Մտածումներս կարող են գրասէր հասարակութեան կողմից հետաքրքրութեան արժանանալ և ընդառաջելով հայ մասուլի մէջ արտայայտած բարի ցանկութեան՝ աշխատութիւնս ընդարձակելով և կատարելով որոշ յաւելումներ, լոյս եմ ընծայում ներկայ հատորով:

Աւելորդ չեմ համարում նշել, որ օտար հեղինակների գործերը ցարդ հայերէն լեզուով թարգմանւած չլինելու պատճառով, հարկ եմ համարել նրանց մտքերը տեղ-տեղ ներկայացնել ընդարձակ մէջբերումներով:

Գ. Մ.



ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՆՏԱՌՈՒՄ

ՄԱՐԴՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՏԻԵՋԵՐՔԻ ՄԷՉ

Մեծ Գաղսնիք, միակ Գաղսնիք, ինչ որ կայ՝ Գաղսնիք է:

Մ. ՄԵՅԵՐԼԻՆԿ

Գիշերայ մէջ,—ուր մենք յայտն գտնում ենք,—գիտնականը
զուլար խփում է պատին, իսկ սգէսը մնում է նանգիս՝ սեն-
եակի մէջեղ:

ԱՆԱՏՈՒ ՏՐԱՆՍ

— Երբ մտնենք Խորհուրդների Մտի մէջ, ի՞նչ կը գտնենք այնտեղ:

== Հրատարի՛մ:

ԴՈՔՏ. Գ. ՄԱՇՈՒՐԵԱՆ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ



Մարդու կեանքն անցնում է չորս Խորհուրդների միջով՝ Յղացում, Կեանք, Սէր և Մահ:

* * *

Մարդու մէջ և Մարդու շուրջ ամէն ինչ Խորհուրդ է և հրաշք. Հողի, Սէր, Ճշմարտութիւն, Մահ, Ծաղիկներ և Աստղեր:

* * *

Բայց հակառակ որ Մարդն ապրում է իր Խորհուրդների մէջ, հակառակ որ նա սնւում է այդ Խորհուրդներով, պարուրած է հրաշքներով, նա նրանց չի ճանաչում: Նրանց բնոյթը, նրանց բուն էութիւնը և այդ Խորհուրդների հետապնդած նպատակը նրան մնում են անծանօթ:

* * *

Այս Խորհուրդներն այնքան խորն են, որ ամենահմուտ գիտուններն ու փիլիսոփաները մնում են կաշկանդւած, շփոթւած իրենց յայտնութիւնների փնտառութի մէջ և իրենց աչքերի առջև՝ մի մշուշ. ճիշտ է, որ այդ մշուշը թեթև է, բայց որը մթագնում է նրանց ծանօթութեանց զէմքը և սրա վրայ նետում մի սաւեր: Աստուածներն այս նիւթի վրայ խորին լըսութիւն են պահպանում և բոլոր դարերն անգիտանում են նրանց ինչ լինելը: Գարող է լինել, որ այս Խորհուրդները հէնց այն բաներն են, որոնք պիտի մնան միշտ անծանօթ. Գրւած է. «Մի՛ փորձէք բնաւ թափանցելու այն բանի մէջ, ինչ որ դուք չէք կարող գիտնալ. դուք հաշիւ կը տաք լըսողութեան, տեսողութեան և ձեր սրտին»¹⁾:

¹⁾ Երկնային գիրք. «Գիշերային ճամբորդութիւն», էջ 288.

* *

Մարդու և Տիեզերական Խորհուրդների միջև մի անթափանցելի քող է տարածւած:

* *

Կեանքի Խորհուրդն աւելի խորն է Մահւան Խորհուրդից, քանզի Մահւան գոյութիւնը մեզ համար գէթ ակնյայտ է և զգալի: Մահը, հետեաբար, Մարդու համար չունի մէկ կարեոր Խորհուրդ:

Ընդհակառակը, ամենակարեւոր Խորհուրդը մահկանացուների համար՝ հէնց ինքը կեանքն է: Քանզի Մահը, իր խորքում, այն է ինչ կայ:

Մէկ ոչինչ ամէն ինչ է. լուծումն իր նախնական տարրերի և ձեւափոխումը նոր տարրերով: Մինչդեռ կեանքը՝ բազմազան և ալլափոխ ձևի տակ, և ձևի տակ հրաշագան ու աստուածային՝ թաղցնում է խկապէս արտասովոր բաներ, որոնք, Մահւան Խորհուրդների համեմատութեամբ, մարդուն թւում են հեղուկների և կամ խմիչքների պէս գերազանց և կենսադործ, որոնց էութիւնը թոյն է, վասնզի նա՝ կեանքը, իրականութեան հրեոյթի տակ և երեոյթի տակ յստակութեան, ակնյայտութեան և պարզութեան՝ իր բուն էութեան մէջ մնում է անհասկանալի, անըմբռնելի և համբ, որպէս սֆիւնքսը:

Մարդն այդ տեսնում է, զգում, նա ապրում է նրա մէջ և նրանով, նա մասնակցում է նրա բազմաասակ արտայայտութիւններին և նա նոյնպէս մասնակցում է կեանքին, բայց, սակայն, չի կարող նրան ճանաչել:

Հակառակ որ կեանքն ակներև է, մարդն անզոր է թափանցելու նրա Խորհուրդները, որովհետև կեանքի ծնունդը, վախճանը, բուն էութիւնը, իր հրաշք բնոյթը նրան մնում են բացարձակապէս անծանօթ: Այս բոլոր հարցերի համար մարդու մտածողութիւնը ոչ մի դրական պատասխան չունի: Նա բացարձակապէս չը գիտէ, թէ նրա մէջ ինչ տեսակի Խորհուրդներ են թաղնւած:

* *

Մարդը մեծ է, վասնզի նա ապրում է մեծ Խորհուրդների մէջ, որոնք նրան շրջապատում են և պարուրում:

Մարդը, երկրորդ հերթին մեծ է, վասնզի մեր մտորակի այսքան էակների մէջ նա միայնակ է, միակն է, որ սահմանւած է փնտռելու այս գաղանիքների բանալին և միակն է, որ գիտակցութիւն ունի այս Խորհուրդների մասին և միակն է, որ կարող է հասկանալ Տիեզերքի այս սարսափելի

խորհուրդները բնոյթն ու վախճանը: Նա գերագոյն առաքելութիւն ունի նրանց քողազերծելու: Այս խորհուրդները քողը մինչև այժմ չէ վերցած Մարգու գիտութեան կողմից, բայց մէկ անգամ որ նա վերցի, Մարգը կը դառնայ փոքր, շատ փոքր:

Երկնային գրքում խորիմաստօրէն գրւած է, որ՝ «Այն օրը, երբ գազանիքները կը քողազերծեն, Մարգը չի ունենայ ոչ կարողութիւն, ոչ յինարան»:

* * *

Բայց լաւ է նաև Մարգու մեծութեան և երջանկութեան համար, որ Անսահմանութիւնը նրանից թագցնում է այդ խորհուրդների բանալին: Իր գազանիքները նրա համար սուրբ են, որովհետև եթէ Անսահմանութիւնը մեզ հետաքրքրում է՝ դա իր անթափանցելի խորհուրդների պատճառով է: Իսկապէս՝ Մարգն իրեն զժգոհ է գգում Անծանօթի ներկայութեամբ. վասն զի իր բնոյթը բնականաբար կերտւած է գիտնալու և ճանաչելու համար:

Այն բոլորը, որ անծանօթ է և գազանախորհուրդ, նրան անհանգըստացնում և ասեղնատում է: Իր տգիտութիւնը, որքան տեսւմ է, Մարգու համար մի տառապանք է, որ տեղի է տալիս հաճոյքին՝ երբ լուսաւորում է:

Տիեզերքի և Բնութեան խորհուրդները ճանաչելու և գտնելու այս ցանկութիւնից է ծնւել գիտութիւնը և փիլիսոփայութիւնը:

Հ. Պուանկարէն, հետևելով Պասկալի մտքին, որն իր հերթին կըրկնի է աստուածային Պատանի միտքը, մեզ արգարացիօրէն ասում է.

«Այն բոլորը, որ մտածողութիւնն չէ, պարզ ոչնչութիւն է. անէութիւն. ըստ որում մենք չենք կարող մտածել քան միօյն մտածել և որ բոլոր բռները, որ մենք գործածում ենք բաներ ասելու, պիտի արտայայտեն ոչ այլ ինչ, եթէ ոչ միայն մտքեր. ասել թէ մի այլ բան կայ. քան միտքը, դա կը լինի մի պնդում, որ չի կարող իմաստ ունենալ»:

Եւ սակայն տարօրինակ հակասութիւն նրանց համար, որ հաւատում են ժամանակին. երկրաբանական պատմութիւնը մեզ ցուցնում է, որ կհանքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի կարճ դրւագ մահաւան երկու յաւիտենութիւնների մէջ և որ այդ դրւագի մէջ իսկ գիտակից միտքը չի տեսել և չի տեսել քան մէկ պահ:

Միտքն այլ բան չէ, եթէ ոչ մի ցոլք՝ մէկ խոր գիշերի մէջ. Բայց հէնց այդ ցոլքն է, որ ամէն ինչ է»¹⁾:

Բայց Դեմոկրիտան արդէն ասել է, որ մենք իրապէս ոչինչ գիտենք. ճշմարտութիւնը անզուսպի խորքումն է:

1) Henri Poincaré. «La valeur de la science», p. 276.

* * *

Մարդը թափանցելով այնքան թագնւած ճշմարտութիւնների մէջ, յայտը նկատուած որպէս անթափանցելի խորհուրդներ, գիտական յայտնութիւններից-յայտնութիւն, նա իր վերջին անսպասելի յայտնութեամբ կը գտնի անտեսանելի էակին, որ միլիոնաւոր դարերի ընթացքում թագնւած էր Տիեզերական իրերի խորհուրդների մէջ:

* * *

Յաւիտենութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ Լոտութիւն:

* * *

Մարդու և կամ իր գիտութեան վերջին յայտնութիւնը Աստուծոյ գիւտն է, որ թագնւած է Տիեզերքում:

* * *

Մարդու կեանքն այս աշխարհում հաւատարիմ հայելին է ճակատագրի. նա անցնում է առանց գիտնալու ինչպէս և ինչու՝ մէկ խոր գիշերի սարսափի մէջ՝ հողի տակ:

* * *

Մահը կեանքի համար նոյնն է, ինչ որ սուերը գիւտնկարի համար. նա նրան ոյժ և փայլ է տալիս:

* * *

Երկիրը Տիեզերքի մեծութեան մէջ հազու նշմարելի մի կէտ է և Մարդկութիւնը՝ երկնային կեանքի անսահման դարերի մէջ՝ մի աննշմարելի հիւլէ:

Եւ Մարդու կեանքը.

Նա վայրկենական մի դժգոյն ցոլք է, ամառային խորունկ գիշերի մէջ:

* * *

Նա, որ հետամուտ է հասկանալու Անսահմանութիւնը, անեզրութեան զգացումի պակասն ունի: Պէտք է, որ այգպիսին յիմարանոց զբւրի:

* * *

Մարդու կեանքն անցնում է Մահւան և կեանքի միջով. որպէս մի ցոլք, որ ընկնում է անէ:

Մարդու կեանքը, սկզբից մինչև վերջ, ծնունդից մինչև մահ, ըս-
պառուում է շարունակաբար: Ամէն մի ժամ, որ անցնում է, Մահը մեր կեան-
քից որևէ բան է վերցնում, մեր կենսական ոյժի մէկ շնչին մասը. նման
ջրով լի այն ճաքած անօթին, որի ջուրը, թէկուզ նւագագոյն չափով, ամէն
վայրկեան քամում է:

Երիտասարդութիւնն անցնում է, դեղիցկութիւնը՝ խամրում և
մարմինն ամբողջովին գոլորշիանում է: Մենք ամէն վայրկեան շարունակա-
բար կորցնում ենք՝ ոյժ, լոյս, գոյն և շնորհք, ինչպէս այն գեղեցիկ ծաղի-
կը, որի կեանքը մի օր է տևում միայն:

Նոյնպէս և յիշողութիւնն է թուլանում, գիտակցութիւնը՝ մթազ-
նում, կամքն անզօր է դառնում հրամաններ արձակելու, հոգին՝ նոյնպէս
յամբօրէն անյայտանում է մարմնից: Ահա Մարգը՝ սէգ, հպարտ, փառասէր,
դաժան՝ դէպի իր նմանները՝ Վերջը նա ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի շիւղ՝ ճա-
կատագրօրէն դատապարտած տապալելու քամու ամենաթեթիկ շնչից:

* * *

Մարդն իր մենակեաց և մռայլ, ողբերգական և երգիծական կեանք-
քում, աչքերն յառելով դարերի խորութեան մէջ, ուր իր կեանքն է անցել,
տառապում ու ձանձրանում է իր սեփական դէմքը դիտելու, որովհետև նա
ահռելիօրէն այլանդակ է. մի յարատև սպանութիւն իր նմանների:

* * *

Մեծ ճշմարտութիւնները ախուր են. գուցէ և ամէն բանի մէջ խո-
րանալով միևնոյնն է. թէ գնալ դէպի անյուսութիւն, դէպի անդունդի եզրը:

* * *

Գիշերային խոկուններն ամենից և արտակ խորն են, գուցէ և ար-
մենից ճշմարիտը:

* * *

Մենք ելնում ենք կեանքից, որպէս ելոյթ մի գեղեցիկ երազից:

* * *

Մահւան քերթւածքն աւելի գեղեցիկ է, քան քերթւածքը կեանք-
քի, քանզի նա աւելի առինքնող է և տպաւորիչ, ողբերգական:

* * *

Մի յաւերժական լուսթիւն Մահւանից թագցնում է Կեանքը:
Կեանքը Մահից բաժանւում է յաւերժական մի լուսթեամբ:

* * *

Բոլոր իրերի և բոլոր էակների վախճանը լուսթիւնն է:

* * *

Ապրիլ, յի Մարտ, ապրիլ երկար՝ որքան կամենաս, բայց դու
չես կարող ոչինչ թագցնել Մահւան յաւերժութիւնից, վասն զի դու նոյն-
պէս մի մասն ես յաւերանական Մահւան:

* * *

Ղիովին երջանիկ լինելու համար պէտք է սիրել Մահը:

* * *

Մահւան հզօրութեան մասին խորհող հոգին դառնում է աւելի
խոնարհ, աւելի արդար, աւելի բարի, աւելի յստակ և աւելի գեղեցիկ:

* * *

Ձը կայ ոչինչ աւելի գեղեցիկ, աւելի խոր և աւելի ազգու ինքն
իրեն մխիթարելու համար, քան Մահւան հզօրութեան մասին մտածելը:

* * *

Մահն աւելի դիւրին է տանել նրա մասին անընդհատ խորհելով,
քան նրան իր մտքից անընդհատ վանելով:

* * *

Կեանքի և Մահւան միջև մի քող կայ կախւած՝ Սիրոյ լուսթեան
միջոցով: Սիրոյ լուսթեան բնոյթը հասկանալ, նշանակում է Կեանքի և
Մահւան բոլոր խորհուրդները հասկանալ: Որովհետև հոգու և նիւթի միջև
եղած միջոցը, և միջոց գիտակցութեան ու անգիտակցութեան, ձեռի և էութեան՝
իրերի և էակների, ուր նրանք ազդում և հակազդում են փոխադարձաբար,
անցնում է Տիեզերքի լուսթեան միջոցով:

* * *

Չը ծնւածները դեռևս գտնուում են կեանքի սուերում, Սիրոյ խորհրդաւոր լուսթեան մէջ, երբ Սէրը բաց է անում իր թեքը, նրանք իրենց ցուցնում են որպէս ծաղիկների կոկոններ և թիթեանների պէս թևում են դէպի Մահ:

* * *

Մահը ծնւում է մեզ հետ: Նա մեզ հետևում և մեզ ուղեկցում է մեր կեանքի ամէն մի պահին և իւրաքանչիւր քայլում, որովհետև նա մեր մէջ է և մենք՝ նրա մէջ: Նա մի սուեր չէ և ոչ էլ ցնորք, այլ իրականութիւն՝ կենդանի և շօշափելի, որովհետև կեանքի տարրերի և յաւտենութեան մէջ արդէն կան Մահեան տարրեր:

* * *

Ապրողները սակայն, անյուսօրէն մաքառում են նրա դէմ խեղդւողների պէս, որ ընկղմւում են: Այսուամենայնիւ պէտք է մեռնել. անյայտանալ, ապրիլ Մահեան կեանքով, կեանքը Մահեան մէջ գոյութիւն է ունեցել, գոյութիւն կունենայ մեզ հետ և մեր միջոցով՝ մի յարատև շարունակականութեան մէջ:

* * *

Մարդու կեանքը սկսւում և վերջանում է լուսթեան երկու ծայրերում, որովհետև ելնելով մի կնոջ լոին և խաւար արգանդից՝ առանց իր կեանքի ծագման գիտակցութիւնն ունենալու, նա՝ Մարդը, լուսթեամբ հասնում է՝ առանց իմանալու ինչ՞ա և ի՞նչպէս՝ դռանը մի այլ լոին մթութեան, մի փոսի՝ վերջնականօրէն մտնելու համար գերեզմանի լոին խորշի մէջ, լուսթեան յաւտենական դիշերով պարուրւած:

Նա՝ Մարդը, ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի աննշմարելի կէտ Յաւտենականութեան երկու լուսթիւնների միջև, երկու խորապէս խաւար գիշերների, երկու ոչնչութիւնների... Խեղճ մարդ:

* * *

Մի մեծ լուսթիւն ոչ միայն բաժանում է կեանքը Մահից, Ապրողներին Մեռեալներից, այլ և մի խորհրդաւոր լուսթիւն բաժանում է կենդանի էակներին միմեանցից, լուսթիւնը՝ մարդու և կենդանիների, բոսիերի և կենդանիների, հանքերի և բոսիերի մէջ: Կենդանիներն զգում են՝ ինչպէս Մարդը, նրանք միևնոյն զգայնութիւններն ու զգացումներն ունեն, ինչ որ

մարդը՝ բնութեան արքան: Նրանք բնախօսական միևնոյն գործառնութիւն-
ներն են կատարում, ինչ որ մարդը: Եւ սակայն... մի մեծ պատուար, մի ա-
նանցանելի, խորհրդաւոր պատուար նրանց բաժանում է Մարդուց: Նրանք
համը են, դատապարտւած լռութեան մէջ ապրելու, զրկւած խօսքի ընդու-
նակութիւնից, իրենց զգացումներն արտայայտելուց: Ի՞նչ խորհուրդ:

* * *

Բայց Տիեզերքը, հակառակ էակաների և բոյսերի այս վշտագին
և համատարած լռութեան, անկարող չէ հասկանալ այդ վեհապանծ և յաւի-
տենական համը լեզուն:

* * *

Լռութիւնը նոյնպէս իր մեծութիւնն ու գեղեցկութիւնն ունի և
իր անհասկանալի գաղտնիքները, որովհետև երբ լուս կեանքով ենք ապրում,
աւելի խորն ենք զգում իրերի և էակաների ներքին բնոյթը. զգում ենք Տի-
եզերքի գաղտնիքը և թագուն ցնծութիւն կրում. Լռութիւնը որ մեզ շրջա-
պատում է, լի է Յաւիտենականութեան համանւագնների նախազգացումով և
Տիեզերքի հրգ-հրգոցով:

«Երբ լռութեան մէջ ենք ապրում,—արդարացիօրէն դիտում է մի
մտածող,—հասնում ենք իրերի աղբւրներն, և երբ ելնում ենք այնտեղից, զը-
րահաւորւած ենք շատ մութ բաների և պիղծ հոգու տէր մարդկանց դէմ»:

Եստ բան չկայ մտածելու մարդու կեանքի վրայ, որի գերա-
զոյն իդէալը լռութիւնն է, մահը կեանքի մէջ, մահը՝ պիղծ բաների և կեղ-
ծիքի, որովհետև այդ լռին մահն է, ճշմարտապէս և իրապէս, իսկական
կեանքը. կեանքը՝ մաքուր, իրական, աստուածային, գեղեցիկ:

* * *

Բնութեան կեանքը պատրաստում և ստեղծում է ձմրան լուս-
թեան մէջ Մարդու համար լռութեան ամենագեղեցիկ ձևերից մէկը՝ մենու-
թիւնն է, մենակ երազանքը բնութեան զրկում: Ամենագեղեցիկ և ամենա-
մեծ ստեղծագործութիւնները, յաւերժատե երկերը, որ լինին արեւստագի-
տական, գիտական, իմաստասիրական, բարոյական և կրօնական՝ ըմբռնւած,
պատրաստւած և ծնւած են զրոյի հոգու լռութեան խորքերում. այսպէս՝
Ռուզբան, Յիսուսը, Պլատոնը, Մահմէդը, Դանտէն, Լէօպարդին, Դեկարտը,
Ռուսօսն, Պասկալը, Կանտը, Նիցշէն, Ալիշանը, Էմերսոնը, Իբսէնը, Կարլայ-
լը, Դարբինը, Բեթհովէնը և այլն: Այն զրոյը, որ մենութիւն չի սիրում, որ

անկարող է լին կեանքով ապրելու, չի կարող երբեք տեական գործեր ըստեղծել, որովհետև ստեղծագործութեան անհրաժեշտ տարրերից մէկը լուսմտորուսն է մենութեան մէջ: Մեծ գրողները, ստեղծագործողները և հանձարները գերազանցօրէն բոլորն էլ մենաւորներ են, որ իրենց ներշնչութեան փնտռում են իրենցմով: Նրանց լուսութիւնը մահուան լուսութիւն չէ, այլ այդ լուսութեան մէջ ապրում է կայծակը, բոցը, փոթորիկը. խոր տառապանք և ներգոր ուրախութիւն:

* * *

Մըջիւնը, որ մի ահաւոր մահով ոչնչանում է քայլերով աղօթող մի հաւատացեալի կրօնակի տակ, աւելի արժանի է գթութեան և սիրոյ, քան հաւատացեալը՝ դարձանքի և յարգանքի: Կակների Արարչի առաջ եղած աղօթքի արժէքը ոչինչ է, վասն զի նա գրողմած է մի անմիջ արարածի արեան բիծով:

* * *

Երջանկութիւնը կայանում է լաւ առողջութեան և իր ցանկութիւնների բաւարարման տենչի մէջ: Հետևաբար մարդկութեան մէջ երկու տեսակի դժբախտներ կան. առաջինները նրանք են, որ չեն կարողանում բաւարարել իրենց բոլոր ցանկութիւններին և երկրորդները նրանք՝ որ բաւարարել են իրենց բոլոր ցանկութիւններին և որոնք այլևս ոչինչ ունեն ցանկանալու: Վերջիններն աւելի դժբախտ են քան առաջինները, որովհետև առաջինները տենչում են որևէ բան իրականացնել, մինչդեռ երկրորդներն այլևս որևէ պատճառ չունին տենչալու:

3448-80

ՄԱՐԴՈՒ ԽՈՐՀՈՒԿԸ

Ա.

Մարդը գտնւում է Տիեզերքի Խորհուրդների սուերներում և երբ նա ցաւազիւօրէն ճիգ է գործ դնում նրանց սիրանալու՝ էութիւնն ըմբռնելու համար, և հազիւ նկատած մի քանիսի հրաշագործ բանալին, որի միջոցով իր աչքը թափանցում է գաղտնիքների սուերը, նա անմիջապէս տարւում է անտեսանելի թևերովը Կեանքի, Սիրոյ և Մահուան՝ դէպի Յաւիտենական Լուսութեան թագաւորութիւնը, ուր բնակւում են Խորհուրդներն և Հրաշալիքները: Որովհետև Խորհուրդներն անվերջանալի և յաւիտենական



են և Մարգը ոչ այլ ինչ է, եթէ ոչ վախճանական և վաղանցուկ մի էակ:
Վաղանցուկ էակներ, — սուսու էր արդարացիորէն Աստուածների
մէկ զաւակը՝ Պինդար, — ինչ հնք մենք, և ինչ չենք մենք:
«Մարգը, — սուսու է նա, — սուսերի երազն է»:
Սա ամենագեղեցիկ, ամենաճիշտ և ամենախորը բնորոշումն է
Մարգն, որ արւած է մինչև այժմ:

* * *

Այն, ինչ Մարգու համար ամենից խորհրդաւորն է Բնութեան
մէջ՝ դա հէնց նոյն ինքը Մարգն է:

Նա, Բնութեան մէջ, Մարգու գիտութեան համար մի մեծ խոր-
հուրդ է. նա, գուցէ և բոլոր խորհուրդներից ամենախորն է: Այնքան խոր-
հուրդների մէջ, որոնցով շրջապատւած է, նա աշխարհիս խորհրդաւորների
խորհրդաւորն է:

* * *

Եւ Մարգու մէջ այն, ինչ ամենից խորհրդաւորն է, Մարգու իսկ
համար ամենամեծ գաղտնիքը՝ դա իր Հոգին է, որ խորհուրդների խոր-
հուրդն է,

* * *

Մարգն ուզում է տիրել աշխարհին, իրերին և էակներին, իշխել
իր նմանների և կենդանիների վրայ, իր «խոնարհ եղբայրներին», նոյնպէս
և ճանաչել Տիեզերքի գաղտնիքները, այն ժամանակ երբ ինքը չի ճանա-
չում իր սեփական բնութիւնը, ինքն իրեն, և չի կարողանում, չը գիտէ ոչ
տիրել իրեն և ոչ էլ իշխել վասն զի նա ստորուկն է իր սեփական կրքերի
և իր գոհնիկ բնազդների:

Իր բնութեան խորքը, իրեն համար մնում է անճանաչելի մի
խորհուրդ: Որովհետեւ նա ենթակայ է ենթագիտակցութեան և Անգիտակ-
ցութեան, որոնք խուսափում են իր Գիտակցութեան ճանաչողութիւնից, իր
Բանականութեան հակակշռից և իր Կամքի կարողութիւնից: Որքան ծիծա-
ղելի է Մարգը:

* * *

Մի մեծ սխալ է՝ Տիեզերքի և Բնութեան գաղտնիքների ուսում-
նասիրութեան մէջ բաժանել Մարգու և իր խորհուրդների ուսումնասիրու-

թիւնը, որովհետեւ Մարգն էլ մասն է կազմում այդ խորհուրդների, Սա հիմնական բաժինն է, դուցէ և ամենակարևոր մասը՝ իրերի էութեան ըմբռնողութեան մէջ, իրերն ինքնին՝ Տիեզերքի մէջ: Նա նրանց բանալին իսկ է:

* * *

Մարգու խորքը հասկանալ և ըմբռնել Հոգու իսկութիւնը, միևնոյն է թէ հասկանալ Բնութեան խորքը և ըմբռնել իրերի իսկութիւնն ինքնին:

* * *

Յոյ մարգն ուսումնասիրի մարդուն—իրեն, թող նա՝ Բնութեան և Տիեզերքի խորհուրդների ուսումնասիրութեանը ձեռնարկելուց առաջ՝ խորապէս ուսումնասիրի սերտ և փոխադարձ յարաբերութիւնները իր Մարմնի և Հոգու միջև:

Յոյ Մարմնի բոլոր մասերը, անասնմանօրէն փոքրիկ բջիջները և Հոգու բոլոր արտայայտութիւնները ամենաաննշան իրողութիւնները մանրակրկիտօրէն ուսումնասիրեն:

Եւ երբ որ ձեռք կը բերւի մի ճշգրիտ, որոշ և դիտական ծանօթութիւն Մարմնի կեանքի ազդեցութեան՝ Հոգու կեանքի վրայ, բնախօսական գործունէութեան ազդեցութեան՝ հոգեկան գործունէութեան վրայ և ընդհակառակը, այնուհետեւ է միայն, որ կարելի է ձեռք բերել Բնութեան գաղանփների մի ճշգրիտ ծանօթութիւն:

Հէնց այդ պահուն է, արդարացիօրէն նկատում է Հ. Թէնը, որ զգում ենք բնութեան զգացողութիւնը մեր մէջ ծնւելիս: Անհրաժեշտութեան այս դասակարգութեան միջոցով աշխարհը կազմում է միակ մի էակ. անբաժանելի, որի անդամներն են բոլոր էակները: Իրերի գերագոյն կատարին, լուսաւոր ու անհասանելի եթերի ամենաբարձունքում հնչում է յաւիտենական ճշմարտութիւնը և այդ ստղեծագործ բանաձևի շարունակական թնդիւնը յօրինում է, իր անսպառ ալիքաւորումներով, Տիեզերքի վիթխարութեւթիւնը:

Ամէն ձև, ամէն փոփոխութիւն, ամէն շարժում, ամէն գաղափար՝ իր գործերից մէկն է: Նա ապրում է բոլոր իրերով և չի սահմանափակւած որևէ իրով:

Նիւթը և մտածողութիւնը, մոլորակը և մարգը, արևների կոյտը, և խլրտումը միջատի, կեանքն ու մահը, վիղտն և ուրախութիւնը՝ ոչինչ կայ, որ նրան չարտայայտի և ոչինչ կայ, որ նրան ամբողջովին արտայայտի:

Նա լեցնում է ժամանակն ու տարածութիւնը և մնում ժամանակից ու տարածութիւնից վեր: Նա բնաւ չի հասկացում նրանցով և նրանք նրանից են առաջ դալիս:

Ամբողջ կեանքն իր ժոմենտներից մէկն է, ամէն էակ՝ իր ձևերից մէկը. և իրերի շարքը նրանցից է սերում՝ ըստ իր ոսկէ շղթայի աստածային օղակների:

Անտարբերութիւն, անասան, յաւիտենական, ամենակարող, արարիչ՝ ոչ մի անուն նրան չի սպառում, և երբ քօղազերծւում է իր պայծառ ու վտեմ դէմքը, չը կայ մարդկային միտք, որ նրան մեկնարանէ՝ պաշտամունքից և սարսափից աճարեկ:

Միևնոյն պահուն այդ միտքը վեր է ելնում. նա մտտանում է իր մահկանացութիւնը և փոքրութիւնը. նա ցնծում է համակրանքով այդ անվախճանութեան, որ խորհում է և մասնակցում իր մեծութեան¹⁾:

* * *

Այն ամէնը, ինչ որ Մահից կեանքի է ծնւում՝ իրեր, էակներ և մոլորակներ՝ մի օր բացարձակապէս պիտի աւրի կեանքի իսկ միջոցով, որովհետև կեանքն անզօր է նրանց պահպանել իր կարողութեամբ: Իր կարողութիւնը պատրանքային է. ըստ որում այդ բոլորը գտնւում են իր կարողութեան, կեանքի լիակատար դերիշխանութեան տակ. և, հակառակ սրան, նա մնում է անընդունակ և անզօր՝ Մահւան առաջ, որովհետև նա չի կարողանում նրանց պահել իր կարողութեան հովանու ներքոյ և սահմանների մէջ:

Բայց սիրել և ստեղծագործել հակառակ անողորելի Մահւան, դա կեանքի և Սիրոյ վաղանցուկ յաղթանակն է յաւերժական Մահւան դէմ՝ իրերի, էակների և մոլորակների մշտնջենական սկզբնաւորութեան և վերջսկզբնաւորութեան մէջ: Դա վաղանցուկ փառքն է կամ պատրանքը յաւերժութեան, որ սրբագործում է մեծահարաշ և խորհրդաւոր աստածացումը կեանքի՝ Սիրոյ միջոցով, որ փակում է Մարգու «յաւիտենական» եղբրախաղը, ողբերգութիւնը և կատակերգութիւնը:

* * *

Հաւաքական Մարգու կամ Մարդկութեան կենսականութիւնը նրամանօրինակ է Բնութեան, որ միշտ ստեղծողն է և միշտ աւրողը. կառուցելու կիրքը համընթաց է աւրելու մոլեգնութեան. մի մեծ պարզութիւն՝ կեանքի փառաւորման մէջ Մահւան ջատագովութեամբ վերջաւորող:

* * *

Ամէն ինչ որ Մարգն անում է, այլ բան չէ, եթէ ոչ երևակայական մշակած մի պարտէզ՝ Յաւիտենական Մտացութեան անապատում:

¹⁾ H. Taine, «19-րդ դարու դասական փիլիսոփաները», էջ 371, վեցերորդ հրատարակութիւն, Փարիզ, «Hachette» 1888.

ՄԱՐԻՈՒ ԽՈՐՀՈՒՐԿԸ

Բ.

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԱՄԵՆՕՐԵԱՆ ԵՒ ՄԱՐԿԸ

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԺԱՄԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԿԸ

* * *

Ամէն մարդ, կեանքի ժամերի հոսանքում, ունի իր Ողբերգական ժամերը, իր Ողբերգական Ամենօրեան:

* * *

Ամէն Մարդու համար, կեանքի ամէն մի պահուն, գոյութիւն ունի մի բաց վիճ իրեն մօտ՝ նրան կլանելու համար: Մարդն անցնում է այդ վիճը և վերստին անցնում՝ ամէն ժամ. բայց մի ճակատագրական կուրուքեամբ նա այդ վիճը չի նկատում իր կեանքի շարժումների պահուն, նա միայն իր վախճանին է նկատում նրան, երբ արդէն իսկ ընկել է վիճի մէջ. վասն զի Մարդը իր բոլոր մտածումներով, զգացումներով, նոյնպէս և իր գործունէութեամբ՝ իր կեանքի բոլոր պահերին՝ կախած է մի խումբ գիտակցական և անգիտակցական ոյժերից, որոնք պարբերաբար ազդում են նրա վրայ, նրա կամքի վրայ, իշխելով իր մտքերին և զգացմունքներին:

Բայց սրտեղ է գտնուում գործելու ազատութիւնը, իր ստեղծագործական կարողութեան ոյժը և իր կամքի ազատութիւնը:

Նա գտնուում է Ողբերգական ժամերի իշխանութեան տակ. նա թագնւած է Ողբերգական Ամենօրեայի մէջ:

* * *

Մարդը, գարերի հոսանքի լուծեան մէջ, այս կեանքում ինքնին մի խոռվք է, մի անձկութիւն: Նա սենակ է, մենմենակ՝ անվախճան խաւարների լուծեան մէջ, Ողբերգական խաւարների, որոնց միջով նա անցնում է: Մէկ խօսքով՝ նա ապրում է, առանց գիտնալու, Ողբերգական Ամենօրեայի մէջ:

Բոլոր մահկանացուները, ամէն մէկը իր փոքրիկ կեանքում, իր կեանքի ամենօրեայ ժամերում կարծում է յաղթանակել, յաղթահարել իր պայքարի մէջ՝ ժամանակի ողբերգական ոյժերին, բայց աւանդ, ընդհակառակը, զրանք թշաւո, թոյլ և միջոտ պարտւած էակներ են՝ Յաւերժական Գիշերի, Ողբերգական ժամերի Խորհուրդով պարուրւած:

* * *

Մարդն ապրում է մաքրի մի մշտական պատրանքի մէջ. նա կարծում է թէ ապրում է կեանքում և ամենօրեայ կեանքի փոքրիկ արկածներն ու դէպքերը, որ կոչուում է բնականոն կեանք. մի խիստ և խորը տրամաբանական կեանք:

Բայց սա մի ծանր սխալ և պատրանք է. Մարդը, ընդհակառակը, անողոք աշխարհում ապրում է ճակատագրական մեծ պահեր, ողբերգական մեծ ժամեր, այս աշխարհը, որ ինքնին թւում է աւելի ու աւելի լաւ իրականութիւն, նախատեսւած և որոշւած խորը Տրամաբանութեամբ և առաջնորդւած՝ ողջմտութեամբ:

Սակայն ոչինչ աւելի կեղծ և անճիշտ: Տրամաբանութիւնն ու Ողջմտութիւնը ոչ մի դիր չեն խաղում ամենօրեայ այս իրականութեան մէջ:

Այս իրականութիւնը, ամենօրեայ իրականութիւնը ճակատագրականութիւնն ինքն է, առաջնորդւած ծանր Ողբերգական ժամերով՝ Ողբերգական Ամենօրեան, անգիտակցականը կամ ենթագիտակցականը:

* * *

Ողբերգական Ամենօրեան հետու չէ մեզնից. ամէն օր մենք նախում ենք իր ստակալի աչքերին և իր դաժան գէժքին՝ մեր կեանքի զանազան արտայայտութիւնների մէջ. նա արտայայտուած է հիւանդութիւնների, զանազան արկածների, պատերազմների, յեղափոխութիւնների մէջ: Նա ջուլջանում է իր ներկայութիւնը մեր կրքերի արտայայտութիւնների մէջ՝ աստիճանութիւն, բարկութիւն, նախանձ, արհամարհանք, ազահութիւն և այլն:

Դա անկարողութիւնն է իրեն ղեկավարելու, նոյնպէս և անկարողութիւնն է մարդկանց՝ ժողովուրդներին ղեկավարելու:

Եւ, հետեւաբար, պէտք է ընդունել, որ այն բաները, որոնցից մենք կախում ունենք, անցնում են մի շրջանակ, որը կախում չունի մեզնից:

Ամէն ինչ, ընդհանրապէս, տողորւած է ողբերգականութեամբ, որի մէջ մենք թաւալում ենք. մեր օրերի ազդակալի յորձանքը:

Խեղճ Մարդ, Որքան թոյլ է նա ու դժբախտ՝ բնութեան արքայի իր յաւակնութեամբ:

* * *

Մարդը, բնութեան արքան կարծեցեալ, իշխւած է Ողբերգական ժամերով, Ողբերգական Ամենօրեայով:

Մեծ բաները, կեանքի կարեւոր գործերը.—ճշտութեամբ նկատուած է Ֆ. Դը Միոմանդը, առանց դրդապատճառի մի սպանութեան առթիւ.— գրեթէ միշտ անհիթեթ են, լիովին արապարտ, խասօրէն անարամաբանական:

Մեծ մասը այն ամուսինների, որոնք սպանուած են իրենք կանանց:

ոչ աւելի, ոչ պակաս գիտակից են այն բանին որ անուժ են, և քան էին այն օրը երբ նրանց հետ ամուսնացան:

Անկապակցութիւնը իսկական շարժիչն է հոգեբանութեան¹⁾:

* * *

Մարդու Ողբերգական Ամենօրեան կամ Ողբերգական Ժամերը՝ կեանքի անկշռելի և անխորաչափելի ոյժերն են:

Դրանք Հին Աշխարհի Մարդու Աստուածներն են:

Աստուածները,—արգարացիօրէն յայտարարում է մեծ քերթող Եւրիպիդէսը²⁾.—իրենց կամքն արտայայտում են տարբեր ձևերի տակ, յաճախ նրանք շատ բան կատարում են հակառակ մեր սպասումի. այն, ինչ որ մենք սպասում ենք, չի լինում և մի Աստուած ճամբայ է հարթում չնախատեսւած դէպքերի:

* * *

Ժամանակակից Մարդը Ողբերգական Ժամերը կօչում է ճակատագրի: Ճակատագիրը, յայտարարում է Լուի Լավիլը, հաւաքականութիւնն է կեանքի դէպքերի, այնքան որ նրանք թւում են ինձ հարկադրիչ, առանց որ իմ կամքը որեէ գեր ունենայ³⁾:

Ողբերգական Ամենօրեան, գարեբի ընթացքով, փոխել է իր անուշը, ըսյց ոչ իր արժէքը, իր կարևորութիւնը, իր ազդեցութիւնն ու միջամտութիւնը Մարդու կեանքի մէջ: Նրա գէժքը միշտ մնում է գաժախ, սարսափելի և սոսկալի: Ողբերգական Ժամերը՝ գրանք հնագրեան մարդու վըհուկներն են: Եւ արդիական Մարդը նոյնպէս վախ ունի Ողբերգական Ամենօրեայից և նա գործում է նրա ազդեցութեան տակ որպէս մի խենթ, գուրկ գատողութիւնից ու արամաբանութիւնից:

* * *

Ողբերգական Ամենօրեան ապրում է Մահւան մէջ և իր գլխաւոր սնունդը դանում Սիրոյ և Կեանքի խորութիւնների մէջ:

Եթէ ամէն մի Մարդ, կեանքի ժամերի հոսանքի մէջ ունի իր Ողբերգական Ամենօրեան, ապա ինչպէս է նա տեսանելի դառնում Մարդուն, մեզից ամէն մէկին:

— Ես կարծում եմ որ կեանքը,—ասում էր Պիրանդելլօն.—մի տխուր խեղկատակութիւն է ինքնին, որ մեր մէջ ունենք, առանց կարենալ գիտնալու թէ ինչպէս, ինչո՞ւ և ո՞ւմ միջոցով անհրաժեշտութիւն ենք ըզ-

1) «Les Nouvelles Litteraires» № 798, 29 janvier 1938.

2) Euripide «Hélène», t. II, p. 300.

3) «Les Nouvelles Litteraires», 8 avril 1939, Paris.

գում շարունակաբար ինքներս մեզ խաբելու՝ մի իրականութեան ինքնաբեր ստեղծումով, մի իրականութիւն՝ մեզնից ամէն մէկի համար և երբեք միևնոյնը բոլորի համար, որը, ժամանակ առ ժամանակ, դառնում է զուր և պատրանքային:

Նա, որ ըմբռնել է խաղը, չի յաջողում այլևս իրեն խաբել, չի կարողանում այլևս կեանքից վերցնել ոչ համ, ոչ հաճոյք¹⁾:

* * *

Ողբերգական Ամենօրեայի ազդեցութիւնները, դարերի ընթացքում, կը նւագեն: Մարդը, շնորհիւ իր գիտութեան և յատկապէս շնորհիւ իր ենթագիտակցութեան յատկատեսութեան, ի վիճակի կը լինի կանխելու նրա ճակատագրական ազդեցութիւնները:

* * *

Մ. Մեթերլինկը, իօսելով մեղուների կեանքի մասին, գիտում է.— Երկար ժամանակ կարծում էր, որ թողնելով իրենց թագաւորութեան գանձերը, այսպիսով նետելու համար անորոշ կեանքի մէջ, խելօք մեղրաճանձերը, այնքան անտես, այնքան արտում սովորաբար այնքան նախատեսող՝ հնազանդում էին մի տեսակ ճակատագրական խենթութեան, մի մեքենական մղումի, տեսակի մի օրէնքի. բնութեան մի հրամանի, այն ոյժին, որ բոլոր էակների համար թագնւած է ժամանակի մէջ որ սահում է:

Մեղուներին է վերաբերում այս թէ մեզ՝ մենք ճակատագրական ենք կոչում այն բոլորը որ մենք դեռևս չենք հասկանում²⁾:

* * *

Գաղանախորհուրդ ոյժերը, որոնք ծնեցնում, մեծացնում և մեռցնում են էակներին,—յայտարարում է Գ. Լը Բոնը,—այնքան հեռու են մեր գիտակցութիւնից, որ այսօր գիտութիւնը հրաժարւում է նրանց բացատրել: Ամէն երևոյթ իր խորհուրդն ունի: Խորհուրդը անգիտացեալ հոգին է իրերի³⁾:

Նոյնպէս ամէն ժամ իր խորհուրդն ունի, որ անձանթ հոգին, անկղաւի ոյժն է մեր կեանքի:

1) Francesco Callari «Quadrivio», 29 Maggio, 1938, № 31.

2) «La vie des Abeilles» p. 47—48.

3) Dr. G. Le Bon «Aphorismes du Temps Présent» p. 14—21 Paris, 1927.

* * *

Կեանքը, Մահը և Սէրը ի յաւիտենից ապրում են միատեղ: Նը-
րանք անբաժանելի և անանջատելի են: Նրանք չեն սկսում և չեն վերջա-
նում ոչ մի տեղ, որովհետեւ ի յաւիտենից և միահագոյն նրանք շարունա-
կում են գոյութիւն ունենալ ժամանակի և Տարածութեան մէջ, որոնք նոյն-
պէս յաւիտենական են: Կեանքը՝ դա Մահն է և Մահը՝ դա Կեանքն է:

ԿԵԱՆՔԸ, ՍԷՐԸ ԵՒ ՄԱՀԸ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԼՈՒՌԻՍՄԱՆ ՄԵՋ



Ճիշտ է, որ Լուսթիւնը Մարդու համար իր շրջուցիչ գեղեցկու-
թիւնը և անձանօթ հրապոյրն ունի, բայց նա ունի նոյնպէս, երբեմն իրեն,
խոհական մարդու համար,—որ մտածում է իր ողբերգական մեծութեան վը-
րայ, իր ներքին էութեան և գիտական հեռաւոր հետեանքների մասին,—
ունի արտակարգ սարսափի պահեր, երբ նրա մէջ առաջացնում է իսկական
մահացու սարսուռներ, որոնք Մարդուն դողի են մատնում մինչև ուղն ու
ծուծը:

Այսպէս, երբ լրջօրէն և խորապէս խորհում ես Յաւիտենական Լը-
ուսթեան գաղափարի վրայ, քեզ կարծում ես խնթանոցում գտնուելու: Յա-
ւիտենական Լուսթեան գաղափարը անոնի է, վասն զի արդիական Մարդու
խորը իմաստութիւնը, իր գիտական փնտռութեան և փիլիսոփայական
խորհրդածութիւնների որպէս վերջին սահման գտնում է՝ պիւրօրէն իր վայ-
րուն փթթումը և յուսահատ հիասթափութիւնը՝ Լուսթեան յաւիտենական
ճշմարտութեան մէջ, որ վերջին ծաղիկն է, ամենագեղեցիկ, բայց և ամենա-
թունաւորւած ծաղիկը Մարդու մտածողութեան, որ մինչև մեր օրերը գտնւած
լինի Խորհուրդների պարտիզում: Որովհետեւ արդիական գիտութիւնը, յան-
ձինս Լապլասի, Կանտի և ուրիշների, Մարդուն բացատրում է թէ ինչպէս
Ֆիզիքական աշխարհը դուրս է եկել միգամածների ընդերքից, թէ ինչպէս
դարձ դար երկիրը, արևը և բոլոր աստղերը ձևաւորել են և հասել այն վի-
ճակին, որով այսօր մեզ երևում են:

* * *

Հարցի առաջին երեսն է սա, որի վրայ կանգ է առել արդիական
գիտութիւնը: Նա կապակցում է ծագմանը, ծնունդին մոլորակների կամ ա-
րեգակնային համակարգութեանց:

Բայց պէտք է որ Մաթըն ունենայ մտքի արիութիւն, խորհելու
յանդգնութիւն և պէտք է որ կ'անդ տոնի հարցի միւս երեսի՝ այդ միևնոյն
մոլորակների վախճանի, մահւան և վերայայայան վրայ: Ի՞նչպէս, տրամա-

բանօրէն, հետևութեան ճամբով, պիտի մեռնեն, անյայտանան. ի՞նչ ձևով:

Նրանք իրենց վախճանին են հասնում քայքայման ճամբով, Քայքայման օրէնքը անյիղի և բացարձակ մի օրէնք է, գիտութեան հիմնական օրէնքներից մէկը, յիշած կեանքի, էակների և իրերի փորձի վրայ: Նրանք յայտարարում են, որ «Բաղադրեալների անդադար քայքայումը միայն անհրաժեշտ պայմանն է նրանց արտադրութեան, այս տեսակէտով՝ ոչ մէկ տարբերութիւն օրգանական և անօրգանական երկու աշխարհների միջև»:

Արդ, մի անգամ որ արեգակնային համակարգութիւնները և կամ աստղերը քայքայեն լրիւ և ամբողջապէս, ի՞նչ վիճակի մէջ կը գտնւեն նրանք:

Միտած կը լինեն նրանք, թէ՛ անէացած: Ո՛չ, Որովհետև անէութիւնը, ամբողջական անէացումը Տիեզերքի մէջ գոյութիւն չունի:

Նրանք կը գտնւեն Յաւիտենական Քնի վիճակում, մտնելով Յաւիտենական Լուսթեան մէջ: Նրանք կը գտնւեն Կեանքի և Մահւան միջև:

Թողնենք Տիեզերքը մի կողմ, ի նկատի առնենք միայն Տիեզերքի մի մասը, որ միլիոնաւոր աստղեր է պարփակում, որոնք պիտի մտնեն Յաւիտենական Լուսթեան մէջ:

Կանգ առնենք միլիոնաւոր աստղերի այս մասի վրայ և կէրտենք քայքայման օրէնքը միայն այդ մասի վերաբերմամբ: Ի՞նչ կուռնենանք: Ի՞նչ կը դառնան նրանք: Նրանք ի՞նչպէս կը վերագառնան կեանքի:

Բայց եթէ Տիեզերքը, ճշտօրէն յայտարարում է Մ. Մեթերլինկը, անհրաժեշտաբար անշարժ է, անյիղի և չը կատարելագործւած, նոյնը չի վերաբերում նաև նրա մասերին: Մենք այն տեսնում ենք, և այն ինչ տեսնում ենք, ամէն օր աւելի լաւ ենք իմանում, միայն մի կէտ է, որը մենք երբեք չը պիտի տեսնենք, ուրեմն մենք այնտեղ տեսնում ենք միլիոնաւոր գնդեր պատելիս եթերի մէջ անհաշուելի արագութեամբ, իրենց և մէկը միւսի շուրջ պտտելիս, ձգւելիս, մղւելիս և բոլորը միասին ընկնելիս՝ միլիոնաւոր լոյս-դարեր տեսող, տարածութիւնների միջով, որոնք չեն կարող սահմաններ ունենալ, ծնւել, ապրել, մեռնել և վերածնւել, վառւել, հանգչել և վերառկայծել. մի անկշռելի գոյացութիւն, քան մեր ամենաթեթիւ գազերը, որ ձևացնում է սոսկավիթիւսար աստղեր, որոնք քայքայում են գազային վիճակին վերադառնալու համար, խելագար պտուտահողմերի միջև և որոնք սակայն անդրդեղի են, որոնք ամենուրեք պահում են իրենց անյիղի կարողութիւնը:

Ըստ աստղագէտ ժամսի՝ մի աստղի կեանքը 100,000,000,000,000 տարի է, որից յետոյ գալիս են խաւարները և կամ գուցէ շիջումը: Մեր արևն ունի շուրջ 7,000,000,000,000 տարեք, հետևաբար զեռևս միանգամայն երկսասարդական տարիքումն է ¹⁾:

¹⁾ M. Maeterlinck, «La grande Féerie», p. 95-97.

* * *

Արդ, եթէ մի աստղի կեանքի տևողութիւնը այդպիսի մի հսկայ թիւ է պարունակում, կասկածից դուրս է, որ Յաւիտենական Լուսթեան վիճակի տևողութիւնը կը պարունակի նրանից ոչ նւազ մեծ թիւ կամ գուցէ հաւասար այդ թւին: Ի՞նչ արդիւնքի կը հասնին:

Այսինքն բոլոր մեծ գիւտերը, մինչև այժմ և սրանից յետոյ միլիոնաւոր տարիներ ընթացքում յայտնաբերւած ճշմարտութիւնները, Մարդու կողմից որպէս անմահ և յաւիտենական դիտւած, նոյնպէս և բոլոր էակները և բոլոր իրերը, որոնք ապրում են կամ գոյութիւն ունեն և կամ պիտի գոյութիւն ունենան երկրի և աստղերի վրայ և նոյն իրենք, աստղերը, որոնց թիւը մի քանի միլիարդ է, բոլորը գուրս եկած լինելով Լուսթեան լուսութիւնից, վերջում, միլիարդաւոր դարեր սահելուց յետոյ վերջնականապէս պիտի մտնեն Յաւիտենական Լուսթեան մէջ, յաւիտենապէս մնան Լուսթեան անյատակ անդունդի մէջ, անցկացնեն դարերի յաւիտենական քնի մէջ՝ ի՞նչ դարհուրանք:

Ինչպէս արջը ձմեռնաքուն է մտնում՝ այնպէս էլ կեանքը, Մահը և Սէրը մտնում են Յաւիտենական Քնի մէջ, նրանք այնտեղ մնում են յուսաւոր հեղանիւթի վիճակում. նրանք այլ բան չեն լինի քան լոյսի մի զանգւած՝ ամպի նման ճապարգած ծփուն տարածութեամբ: Կեանքը և Մահը քնում են միմեանց մօտ՝ Սիրով պարուրւած: Բայց նրանք, ինչպէս արջը ձմեռն ամիսների քնից, բազմամիլիարդ դարերի Քնից յետոյ դանդաղօրէն արթնանում են և ապա աստիճանաբար միգամած զանգւածները անցկացնում քիզմաւորման կամ ծոցւորման, կանոնաւոր տեսողական վիճակին և կամ կենսական ձևաւորման ու մահացման՝ միգամածների խտացման միջոցով, աստղերի կոյտի թաւալումով ճգնում են հասնելու մոլորակների, արեային համակարգութիւնների կազմութեան:

ՎԵՐԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ



Այլապէս ասած՝ Սուերների և կամ Ամպերի երկնային Հովիտը, ուր թաքնւում էին ու քնի մէջ պարուրւում կեանքը, Սէրը և Մահը, յատկանում է մոզական ոյժերի շնորհիւ: Նա վերագտնում է ստեղծագործ և աւերիչ ոյժերը՝ Ինքն-իրենից քաղած խորհրդաւոր կենսականութեան ինչ որ աղբիւրից: Եւ Նա բարձրանում, յամբօրէն նորէն մտնում է շաքժումի իր լիակատար իշխանութեան մէջ. անբաժանելի երրորդութիւնը՝ Կեանքը-Սէրը-Մահը արտայայտւում են: Մի նոր ստեղծագործութիւն է կատարւում:

Նրանք «քնած» էին յաւիտենութեան մէջ և խորը քնից նրանք այժմ արթնացել են:

Մենք ահանատես ենք էակաների և իրերի՝ հանքային, բուսական և կենդանական ու մարդկային կեանքերին, որոնք խլրաման ու լիակատար շարժման մէջ են:

Եւ նրանք վերսկսում են իրենց վիթխարի շարժումը, իրենց հրաշագան յայտնութիւններն ու խորհրդաւոր ստեղծագործութիւնները դարերի և դարերի ընթացքում:

Կեանքը, Սէրը և Մահը նորէն տեսանելի են դառնում. և ապա բաղձամիլիարդ դարերի հրեոյթից յետոյ վերասուզել Յաւիտենական քնի և լուսթեան մէջ: Ի՞նչ զարհուրանք:

Սա, գուցէ, այս մտքով է որ մեծ պօէտ-փիլիսոփայ Նովալին ազդարարում է Մարգուն. «Աշխարհը դառնում է հրազ և հրազը դառնում է աշխարհ»:

ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԼՈՌԻԹԻՒՆ



Բնութիւնը, յայտարարում է Պասկալը¹⁾, վերսկսում է միշտ նոյն բանը՝ տարիները, օրերը և ժամերը. տարածութիւնները, նոյն ձևով, և թըւեիք ծայր ի ծայր մէկը միւսի յետեից. այսպէս է կատարւում մի տեսակ անվախճանօրէն և յաւիտենապէս:

Միևնոյն միտքը գտնում ենք Վէդայի մէջ:

Այս աշխարհը, ասում է Մանսուն²⁾, խորասուզած էր խաւարի մէջ. անզննելի, զուրկ որևէ տարրորոշիչ ստորոգելից, անկարող՝ դատողութեամբ յայտնագործելու, ոչ էլ երևան հանելու, նա թւում է ամբողջովին քնին յանձնւած:

Երբ քայքայման (պրալայա³⁾) տևողութիւնը իր վախճանին հասաւ, ապա մեծ կարողութիւնը՝ իրենով գոյութիւն ունեցող, ինքը բնաւ չը տեսած, որովհետև արտաքին զգայաբանների հաստողութիւնից վեր է, տիեզերքը դարձնելով տեսանելի, զննելի, նախնական տարբերի և այլ մեծ փայլուն սկզբունքներ չհատ մաքուր շուքով, երևաց և ցրեց խաւարը, այսինքն զարգացրեց բնութիւնը (Prakriti):

Նա, որ միայն ոգին կարող է ըմբռնել, որի էութիւնը խուսափում է զգայական օրգաններից, որը տեսանելի կողմ չունի, յաւիտենական է,

1) Bl. Pascal, «Pensée», p. 102, Paris.

2) Manava-Dharma-Sastra, «Lois de Manou».

3) Պրալայան աշխարհի քայքայումն է, որ տեղի ունեցաւ Բրահմայի օրերի վախճանին: Բրահմայի օրը հաւասար է մարդկային 4,320,000,000 տարիներին՝ 300 օրով. գիշերն էլ նոյն տևողութիւնն ունի:

բոլոր էակներն հոգին, որին ոչինչ կարող է հասկանալ, սիւսեց իր սեփական պայծառութիւնը:

Նա, Գերագոյն Ոգին, իր յաջողութեամբ որոշած լինելով իր գոյացութիւնից բխեցնել տալ զանազան արարածներ, ամենից առաջ արտագրեց ջրերը. և նա նրանց մէջ զբաւ մի արտադրող սերմ, մի հունտ:

Այս հունտը դարձաւ մի փայլուն ձու՝ ոսկու պէս, նոյն. ան պայծառափայլ որպէս աստղը հաղար ճառագայթներով, և որի մէջ Գերագոյն էակը ինքը վերածնւեց Բրանմայի ձեռն տակ, Բրանմային ստեղծող կոթովը, մեծ նախահայրը բոլոր էակների և բոլոր աշխարհների:

* * *

Նա, Յաւիտենական Լուսթեան այդ գաղափարը արդեօք հիւանդագին մի երևակայութեան արդիւնք չէ՞, հաշիշամբի և կամ մի խենթի երազ:

Ո՛չ, դա արդիւնքն է գիտական կամ մաթեմատիկ մասնագութեան, խստորէն տրամաբանական: Որովհետեւ, ինչպէս Լառուսն է յայտարարում, «Լապլասին ենք պարտական աշխարհների ձևաւորման գիտուն վարկածը, որ այսօր ընդհանրապէս որդեգրւած է»:

Եւ կամ ինչպէս Կ. Ֆրամարիօնն է ասում՝ «Պա գիտական միտքն է ամենախոր և թափանցող հանճարի, որով Ֆրանսան կարող է հպարտանալ»¹⁾:

Յաւիտենական քնի այս գաղափարին ընկերային կարգերում համապատասխանում է Ժ. Բ. վիլիօ²⁾ corso-ի և ricorso-ի գաղափարը:

Corso-ն մէկ հասարակութեան կամ ազգի համար հորովոյթն է, պարզացումը, աճումը, մեծութիւնը, դարերի կեանքում իր կենսական ոյժերի բարգաւաճումն է:

Եւ, ապա, նրա համար գալիս է նւազումը, անկումը, անկումը իր իսկ ոյժերի, դարերի տեղութեան մէջ իր կենսական ոյժերի քունը:

Ricorso - դա վերադարձն է կեանքին:

* * *

Իսկապէս, երբ լրջօրէն խորհում ես այդ մասին, այդ միտքը քեզ ստեղծում է սարսափից ու վախից: Մահւան մի սարսուռ է անցնում Մարդու մարմնով, ըստ որում նա զբանով պիտի եղբակացնի՝ մեղնից ամէն մէկի համար և բոլոր մտլորակների համար անդենականում անվերջ Լուսթիւն է, Լուսթիւն և Լուսթիւն:

Նա, այս միտքը, այնքան անհանգստացուցիչ է, այնքան խորը,

1) C. Flammarion, «La Mort et son mystère», p. 310.

2) «Scienza Nuova».

այնքան անոռի՛ որ Մարդուն սարսոցնում է: Ամէն ինչ ցնցուած է նրա մէջ: Կարելի՛ է, խկապէս, աւելի անձկալի և աւելի զարհուրելի միտք յղանալ քան այդ:

* * *

Բայց վստահ եղիր, ո՛վ վաղանցուկ էակ, որովհետև քո Յաւիտեանական Լոռութիւնը, ո՛վ մարդ, աւելի շուտ է հասնում քան Յաւիտեանական Լոռութիւնը իրերի, էակների և մտորակների: Նա շատ մօտ է քեզ: Նա, դուցէ և, այն պահի մէջն է, որ դու շնչում ես, այն ժամի մէջ, որ անցնում է և կամ այն օրւայ մէջ, որ գալիս է: Որովհետև Մահը, քո Մահը, քեզ շուտով կը նետի Յաւիտեանական Լոռութեան մէջ, քեզ պոկելով այն փոքր կըտոր մարմնից, որ քեզ պարուրում է ժամանակաւորապէս Լոյսի աշխարհում:

Եւ այնուհետև ամբողջ Յաւիտենութիւնը, ո՛վ Մարդ, քեզ համար ոչ այլ ինչ է եթէ ոչ մէկ հատիկ գիշեր: Նա քո Գիշերն է: Քո Յաւիտեանական Լոռութիւնը: Որովհետև Մարդը ներկայանում է ամենախոր մտածողը և նա, որ լաւ է ըմբռնել և զգացել իսկական ողբերգութիւնը մահականացունների ճակատագրի՝ երկրի վրայ, նա բնութեան ամենաթոյլ եղէգն է միայն... Պէտք չէ որ բովանդակ Տիեզերքը զինւի նրան Չախչախելու համար: Մի շոգի, մի կաթիլ ջուր բաւական է նրան սպանելու համար — ասում է Պասկալը*):

Իրապէս, բնութեան ամենաաննշան երևոյթները, ինչպէս՝ միջանցուկ քամին, կամ մի թիթե հողմ, ամենաանմնաս բանը, ինչպէս՝ մի փոքրիկ քարն է, ամենափոքր էակը, անսահմանօրէն փոքր և աննկատելի՛ ինչպէս օրինակ բացելն է, կարող է ամէն պահ Մարդուն սպանել:

* * *

Թող մարդը յաճախ մտածի Տիեզերքի Պարհուրդների, իր կեանքի փխրունութեան մասին, որպէս զի աւելի արժանաւորութեամբ և խորապէս կարողանայ վայելի իր կեանքը, միակ օժիտը, բնութեան ամենաթանկագին օժիտը Մարդուն արւած, նրան փոխ արւած մէկ պահի համար:

«Թող մարդը դիտողութեան առնի, թէ ինքն ինչից է ստեղծւած. —

Մի փոքր հեղւած ջրից, որ դուրս է եկել ողնաշարի և կրծքի ոսկրներից»**):

Հետևաբար, ո՛վ մարդ, ուրախ և զւարթ եղիր այս մի քանի ժամերի, մի քանի օրերի, ամիսների կամ տարիների ընթացքում, որ դեռես

*) Pascal, «Les Pensées», ch. XXIII, p. 195.

**) Դուբան, «Գիշերային աստղ», էջ 509.

պիտի ապրես, զգաս, խորհես ու դիտես Կեանքը, Մահը և Սէրը Լոյսի պայծառութեան մէջ: Սիրիւր, սլ մարդ, այդ անգոտանելի ժամերը, ներոյժօրէն զգացած և վնասուած Սորհուրդների պարտիզում:

Թող քո սիրտը, սլ մարդ, բացի Գեղեցկութեան, Սիրոյն և Շընորհին:

Թող քո Հոգին, սլ վաղանցուկ Լակ, իր շուրջը տարածի բոլոր ճշմարտութեան, Բարութեան և Արդարութեան որպէս ծաղիկը, որի վրայ մեղուններն են հանգչում:

Թող քո Հոգին երգի, սլ դու երգի սուեր, ամենագեղեցիկ, ամենալին, ամենագաղտնախորհուրդ երգերը՝ ինչպէս թռչունները և կամ սոխակները՝ շռուկներով, հնչիւններով, գոյներով, յստակութեամբ և անծանօթ հեշտանքներով լի անտառում:

Թող քո Հոգին տագրուի Տիեզերքի Սորհուրդների իմաստով և իր մէջ արտայայտի աստղերի լոյսը, ինչպէս ալիքը կամ ուռի ծառն է արտայայտում:

Սիրիւր նրանց քո հոգու բովանդակ ոյժով, քո սրտի և քո մտքերի, Սիրիւր նրանց իրենց բովանդակ գեղեցկութեան, մեծութեան և տարածութեան մէջ:

Բայց թող քո սէրը Կեանքի համար լինի ազնիւ, մաքուր, արդար և ազատ: Թող քո բոլոր մտադրութիւնների մէջ մաքրութիւն լինի, ազնուութիւն՝ զգացմունքներիդ, արդարութիւն՝ մտքերիդ և վեհանձնութիւն՝ գործերիդ մէջ:

Թող Սէրդ, մաքրամաքուր և ամենաչքնաղ ծաղիկը Կեանքի, երբեք չը սրբապղծւի որեւէ նիւթական շանով և երբեք չը վարակւի աղտով: Թող նա միշտ անաղարտ պահւի ինչպէս որ է իր էութեան մէջ, և իր տնչանքների, իր արտայայտութիւնների մէջ: Թող ճշմարտութիւնը, Գեղեցկութիւնը, Ազատութիւնը, Արդարութիւնը և Բարութիւնն ու Շնորհքը միշտ մշակուեն քո ներքին պարտիզում, որպէս ամենահազազիւս ծաղիկները, և թող նրանք միշտ ուղեկցւած լինեն քո վաղանցուկ Կեանքի բոլոր շարժումներին, որպէսզի Կեանքը պտղաւորեն և Կեանքից ժամերին բոլոր տան:

Պէտք է, սլ մարդ, որ այդ ժամերը միշտ լինեն սիրելի, շոյած և վնասուած քո կողմից, որպէս երգը սոխակների և ժրմունջը աղբիւրների՝ անտառների թռչունների կողմից, որովհետև նրանք ևս, այդ ժամերը, որ քո Կեանքի ժամերն են, քո սեփական ժամերը, նրանք ևս քեզ հետ պիտի մուտք գործեն Յաւիտենական Լոռութեան մէջ:

Այդ ժամերը, աւելի թեթև քան վարդերի թերթերը, ասուածաձին այդ ժամերը գեղեցկութեան, մաքրութեան և սիրոյ, թռչում են միշտ զեփուաների, շռուչների և աղբիւրների ու ալիքների ի հաճոյս դէպի Յաւիտենութեան ովկիանը:

* * *

Դու ևս, սիվ մարդ, ով դու խորհրդաւոր սուեըններէ կրադ, «եթէ դու ոչ ալ ինչ ես եթէ ոչ մի բոյր՝ դ՛ուրս կը քո տխուր ծաղկից»:

Յաւիտենականութիւնը, արդարօրէն դիտուած է Մ. Մեթերլինկը, դա անշարժ ժամանակն է տարածութեան մէջ, որ չի կարող շարժել, վասընդի անվախճան է և ուրեմն չի կարող տեղափոխուել, որովհետեւ վերը, վաւրը և իր շուրջը, ոչինչ կայ որ եղած չը լինի արդէն:

Մինչև մեր մահը մեր մէջ է միայն, որ գտնուում են բեկորները, ժամանակը և յաւիտենականութիւնը, տարածութիւնն ու անսահմանը¹⁾:

Եզրպտոսուած, հարուստների խնջոյքներում, երբ ճաշը վերջանում էր, յայտնում է Հերոդոտը, մի մարդ մի դագաղի մէջ բերում էր մտած մի դիակի վայտէ տիպարը, նկարչի և կամ քանդակագործի ձեռքով նմանակերտ. և մէկ կամ երկու կանգուն երկայնութեամբ այդ մարդուն ցուցնելով հիւրերից ամէն մէկին՝ ասում էր. «Տես այս, լսմի՛ր և ուրախ կեցի՛ր, այսպէս պիտի լինես մահիցդ յետոյ»²⁾:

Ահա թէ ինչ էին անում եզրպտացիք իրենց խնջոյքում:

Այս օրինակի մէջ կայ, իսկապէս, աւելի՛ փիլիսոփայութիւն լաւ ապրելու և կեանքն ու իր ժամերը վայելելու, քան փիլիսոփաների, գիտունների, բարոյագէտների և ոլօէտների լաւ ապրելու արւեստի օրինակների մէջ:

Թող նա քանդակի սրտի, մտքի, յիշողութեան և գործի վրայ ամէն մի անհատի և ամէն մի ազգի, բոլոր մահկանացուներին:

Յորհենք, յայտարարում է Մ. Մեթերլինկը, գործենք, շարունակենք ապրել խռովութիւնների, վերիվայրումների և վտանգների մէջ այնպէս, որ կարծես ոչինչ չը պիտի ընդհատուի, ոչինչ չը պիտի կորնչի, որ կարծես ամէն ինչ բնականօրէն յաւիտենական է:

Լը իւ կերպով գեղեցիկ և երջանիկ մի օր մեզ բաւական պիտի լինի: Նա կարող է գումարել բոլոր լաւ ժամերը և մնացորդը միայն վերակրկնութիւն և վերսկսում կը լինի:

Մենք նրան մեզ հետ կը տանենք Մահւան սուեընի և կամ յաւիտենական լոյսի մէջ³⁾:

1) Maurice Maeterlinck, «Le Sablier», p. 167.

2) Histoires d'Herodote, Livre deuxième, p' 110. Paris, 1882.

3) M. Maeterlinck, «L'ombre des Ailes», p. 160.

ՄԱՐԳՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԳԸ

Գ.

ՄԱՐԳ - ՄՐՋԻՒՆԸ

«Ժամանակը ամենաապահով
թոյնն է»:

Էմէրսոն.

* * *

Ի՞նչպէս Մարզը և Մարդու բոլոր որդիները մուտք պիտի գործեն
Յաւիտենական Կուօթեան մէջ:

Ի՞նչ ճամբով և ի՞նչ ձևով նրանք պիտի հասնեն Յաւիտենական
Քնին, որի մէջ պիտի մտնեն բոլոր էակները, իրերը և մտորակները:

* * *

Փորձել պատասխանելու այս ծանր հարցին, նշանակում է իջնել
Մտքի անդունդների զարհուրելի խորութիւնների մէջ, գերմարդկային զգայ-
նութիւններ կրել, յուսահատ և յուսախար Հոգու անձկութիւնների մէջ
մուտք գործել: Բայց Մարդու շակատագրի լուծման փնտռուքը հարկա-
զըրում է այնտեղ իջնել, Պէտք է որ Միտքը թռչի գալիք դարերի անաս-
մանութեան մէջ, Պէտք է որ նա ապրի իր իսկ անձկութեան մէջ, Պէտք է
որ նա մի անգամ ևս ապրի յաւիտենականութեան գաղափարի մէջ, որ Յա-
ւիտենականութիւնը լինի, մէկ պահով, իր մտածումների և մտորումների
առարկան:

Որովհետև «նոյն իսկ Աստուած, յայտարարում է Էկէզդիաստը, որ
սրտի մէջ է գրել, Մարդու որդու սրտի մէջ, յաւիտենականութեան միտքը,
Թէպէտև՝ մարդը չկարողանար ըմբռնել այն գործը, որ Աստուած անում է
սկզբելց մինչև վերջ ¹⁾»:

«Ես, ասում է Էկէզդիաստը, սիրտս գործադրեցի փնտռելու և ի-
մասսութեամբ խորաչափելու ամէն ինչ որ կատարւում է երկնքի տակ. դա
մի դժւարին զբաղմունք է, որին ենթարկում է Աստուած Մարդու որ-
դիներին ²⁾»:

1) «L'Ecclesiaste» 3-5 p. 656.

2) Ibid. p. 655, ch. I.

* * *

Սակայն, զրւած հարցին մի տրամաբանական և գիտական լուծում գտնելու համար, մի հարց՝ լի մահացու անձկութիւններով և սարսափելի յուսահատութեամբ, պէտք է որ վախճանական պատճառների առեղծւածը և յատկապէս այս աշխարհի մէջ Մարդու ճակատագրի առեղծւածը մտածելի մի այլ տեսակէտից, լիովին տարբեր նրանից, որ մտածել է մինչև այժմ փիլիսոփայութեան, ընկերաբանութեան և գիտութեան կողմից:

Պէտք է որ նա, առանց վախի և առանց տատանման, արիաբար, ուսումնասիրութեան և մտորումի ենթարկի Երկրի վրայ գոյութիւն ունեցող էակների և իրերի Յետադարձութեան (Regression) տեսակէտից՝ Բանի որ Մարդու ճակատագիրը Երկրի վրայ մինչև այժմ Իմաստութեան կողմից, — որ լինի փիլիսոփայութիւնը, գիտութիւնն ու աստածաբանութիւնը, — ուսումնասիրել է Յառաջադիմութեան (Progrès) տեսակէտով, մտածումովը զալիք կեանքի, որի բարձունքները են և մեռւմ են անհասանելի: Նա քննութեան է առնել Աստածաբանութեան կողմից բացառապէս կրօնական տեսակէտով, բայց երբեք կենսական ոյժերի յետադարձութեան, բնախօսական և կենսաբանական տեսակէտով:

Ուրեմն, Մարդու ճակատագրի առեղծւածի մասին երկու տեսակէտ կայ. 1) Յառաջադիմութեան (Progrès) տեսակէտ. և 2) Յետադարձութեան (Regression) տեսակէտ, որ մերն է և որը մտածելու նոր կերպ է, մինչև այժմ անձանսօթ:

* * *

Նախ քան մեր մտածելակերպի ցուցադրումը, պէտք է մենք կանգ առնենք Յառաջադիմութեան կողմնակիցների մտածելակերպի վրայ: Դա հետեւալն է. —

1) Նրանք, մտածողները, որոնց հայեացքը միշտ ուղղւած է դէպի Ապագան, դէպի Յառաջադիմութիւնը, էակների և իրերի անսահման Յառաջադիմութիւնը, պնդում են, որ արդի Մարդուց, հետագայ դարերի անսահման առողութեան մէջ, դուրս պիտի գայ մեր ժամանակուսի զոյւթիւն ունեցողից մի տարբեր էակ, և որ այդ մարդը կը լինի մի բարձր էակ, աւելի կատարելագործւած և աւելի կատարեալ, և որը չը պիտի ունենայ որևէ նմանութիւն, որևէ կապ արդի մարդու հետ:

Այս է կարծիքը անցած դարու բազմաթիւ մտածողների, յատկապէս Ժուֆրոյի, Նիցշէի և ուրիշների: Նա նորոգւած է այժմ դոքտ. Ես-վորսկու, Մ. Մետերլինկի և ուրիշների կողմից:

* * *

Մի պահ կանգ առնենք նրանց մտքերի վրայ, մէկը միւսի յետեւից յաջորդաբար ուսումնասիրելով:

1) Ժուճրոյ յայտարարում է. --

Համոզում կայ, որ մի ժամանակ է եղել, երբ բնութիւնը իր մակերեսին կարողացել է միայն բոյսեր արտադրել վիթխարի բոյսեր, որոնց մօտ մերինները միայն գաճաճներ են. այդ բոյսերը իրենց հովանու տակ ոչ մի կենդանի էակ չէին ծածկում: Գիտենք, որ հաստատել են թէ մի մեծ յեղափոխութիւն եկել է աւերելու այդ ստեղծագործութիւնը, որ կարծես արժանի չէր այն ձեռքին, որ իրեն ստեղծել էր: Յայտնի է, որ երկրորդ ստեղծագործութեանը այդ մեծ բոյսերի և վիթխարի անտառների հովանու տակ լայրտալիս տեսան այլանդակ սոցուճներ, կենդանական կազմակերպութեան առաջին փորձերը, առաջին սեփականատէրերը այս երկրի, որի միակ բնակիչներն էին: Բնութիւնը փշրեց այդ ստեղծագործութիւնը և յաջորդիւ նա երկրի վրայ նետեց չորքոտանիներին, որոնց տեսակներն այլևս գոյութիւն չունեն. անձև կենդանիներ, կոպտօրէն կազմակերպւած, որոնք զըժւարութեամբ էին կարողանում ապրել և վերարտադրել, ու թւում էին նախափորձը խակ գործաւորի: Բնութիւնը նորէն փշրեց այդ ստեղծագործութիւնը, ինչպէս որ արել էր միւսներին, և, փորձէ-փորձ, աւելի անկատարից դէպի կատարեալը գնալով, նա հասաւ այս վերջին ստեղծագործութեան, որ առաջին անգամը լինելով՝ մարդուն զրեց այս երկրի վրայ...

Ինչո՞ւ համար չը պիտի գայ նոյնպէս մի օր, երբ մեր ցեղը կը ջընջւի և մեր պիղւած-հանւած ոսկորաթիքը ապրող տեսակներին կը թւան կողմիտ նախափորձերը մի բնութեան, որ ջնջւում է: Եւ եթէ մենք այսպիսով միայն մի օգակն ենք փոքր առ փոքր անկատար ստեղծագործութեան այդ շղթայի, մի չար փորձը մէկ անձանօթ տրոյլի, իր հերթին նետւած՝ յօշոտւելու համար իր հերթին, ապա ուրեմն ի՞նչ ենք մենք և ո՞ր է մեր խորագիրը՝ մեզ յանձնելու համար ակնկալիչին և հպարտութեան:

Այսպէս է մտածում Ժուճրոյը՝

2) Մարդը, հարցնում է իւրովի Մ. Մետերլինկը, Երկրագնդի գերագոյն նպատանկն է արդեօք:

Գալիք դարերում Մարդը կը դառնայ մի հսկայ թէ՛ մի գաճաճ երկրագունդը մի նպատակ ունի՝

Ո՞րն է իր գոյութեան իրաւունքը: Մարդկութեան փթթումը: Գա հնարաւոր է, ատում է նա, և մենք ժամանակաւորապէս որոշ իրաւունք ունենք դրան հաւատալու: Մինչ այժմ մենք լաւագոյն պտուղն ենք իր ամե-

համեմ ճիշդի, իր ամենագեղեցիկ յաջողութեան: Ժամանակ կունենամյ նա լաւագոյնն անկու: Սա համարեա ստոյգ է:

Գիտենալ՝ թէ մեր և կամ իր աշխատանքները, մեր նիւթական և ոգեկան ձեռքբերումները վերջնականորէն պիտի կորչեն մոլորակի անէացման և կամ անխուսափելի մահւան մէջ, և կամ թէ նրանք պիտի փոխանցւեն այլ աշխարհի կամ ձևաւորման, եթէ մենք կարողանանք պատասխանել այս հարցերին, ապա մենք այլևս մարդիկ չենք լինի, այլ՝ աստուածներ՝ Այն, ինչ որ մեծ է մարդու մէջ, ասել է անգլիացի մի փիլիսոփայ, այն է, որ նա մի նպատակ չէ, այլ՝ մի կամուրջ: 1)

Մարդը, ըստ Մ. Մետերլինկի, մի յաջորդ պիտի ունենայ:

Մարդը, շարունակուած է նա, որ երևակայուած է թէ երկրագունդը հպարտ է իրեն ծնունդ աւած լինելով, մարդը, որ ինքն իր աէրն ու դատաւորն է կարծուած՝ նախավերջինն է, և, ուղեղը մի կողմ դրած, նւազ երջանիկը և նւազ յաջողածը ստեղծագործութիւններից:

Իր հոգեվարքից առաջ, յերջանկութիւն իր. երկրին է մնում աւելի լաւ անկու:

Ռոտեղից դուրս պիտի գայ այդ յաջորդը՝ Ռ°վ գիտէ, և նոյն ինքը՝ Երկիրը՝ գիտէ՝ այդ:

Ժուրաշիան (Jurastique) դարաշրջանում, երբ իշխում էին միայն մեծ մողէսակերպերը (sauriens), որոնք փորձուած էին, մարդու պէս, շտկել իրենց ողնաշարը և ապրել կանգնած, և աւելի ուշ, երկրորդ դարաշրջանի վերջին փուլում, վերին կաւիճայինում, երբ յայտնւեցին ահագնատեսիլ հոյամողէսները (dinosauriens), որոնք ունէին քսան մետր երկայնութիւն, և հսկայական թռչուններ սողունակերպ՝ այնպէս սարսափելիորէն սպառազէն և տէր երեք տարրերի. երբ ընկերային միջատները, յատկապէս նրանց ժամանակակից տերմիտները (termites), արդէն կազմակերպել էին իրենց զարմանահրաշ քաղաքները, որոնք շփոթի են մատնուած մեր զարմանքը, հանդիպելով մեր առաջին կաթնասուններին՝ ծանր, դանդաղ, թանձր, բութ, վատ տաշած, ձր դիտողը, հարեան մի աստղից ընկած, կարող էր նախատեսել, որ մահւան դատապարտուած այդ ապաշնորհ նախափորձերից հազարաւոր տարիներ յետոյ պիտի ծնէր նա, որը, ոչ առանց պատճառի, պիտի կարողանար իրեն կոչել մեր մոլորակի արքան: Եւ, ենկելով աւելի բարձր, պիտի համարձակւէր կանխագուշակելու մարդուն եռարլթակները կամ խեցապատեանները մէջ պալէօզոյիկ հողերում:

Գուցէ այդ միևնոյն տարածութիւնն է եռարլթակներից (trilobe) մինչև մեզ և մեզնից մինչև մեր յաջորդը: Ժամանակը հաշուել չգիտէ և ժամանակը ամենամեծ և ամենագործօնն է տիեզերական կտրուիկ 2):

1) M. Maeterlinck «La grande Féerie» p. 103-104.

2) M. Maeterlinck. «La grande Féerie» p. 112-114.

* * *

Նախ քան որ մեր երկրագունդը բնակելի դառնար, նախ քան որ մարդը յայտնէր այս երկրի վրայ, պէտք էր որ նրա վրան, շուրջը կամ ներսը մի իմացականութիւն լինէր հաւասար իր մշակելիք իմացականութեան:

Ո՞վ մեզ կասի, թէ այդ իմացականութեան դազաթնակէտը կը հասնի մարդու մէջ:

Երբ կարողացել են մարդը կերտել թւում է, որ հնարաւոր կը լինի աւելի լաւը անելու 1):

* * *

Հարց է առաջանում, թէ ինչո՞ւ մեր երկրագնդի ոգին յանկարծակի երկճղեց՝ մարդակերպից սկսած և փոխանակ շարունակելու փնտռել աւելի լաւ՝ նիւթը ձուլելով աւելի ու աւելի վիթխարի ձևերով կաղապարներ ձեռք բերելու մէջ. նա անմիջապէս խմորը հուսցեց՝ նրա մէջ խառնելով չը գիտեմ ի՞նչ հոգեղէն մի նիւթ, որ նա մինչև այժմ վերապահել էր ընկերային միջատներին:

... Ի՞նչ էլ որ լինի պատճառը, այն՝ ինչ որ տեղի է ունեցել մի քանի հազար կամ միլիոն տարիների ընթացքում՝ կարող է կատարելապէս վերարտադրել մի քանի հազար կամ միլիոն տարիների ընթացքում: Առաջին, սառցային շրջանի հետևանքով է, որ մարդը գահընկեց է արել գահերէցին: Ի՞նչ պիտի տեղի ունենայ երկրորդ շրջանում, որ անխուսափելի է և մտանում է: Եթէ մարդը չգիտէ պաշտպանել չարիքների դէմ, որոնց մասին մենք շատ շփոթ գաղափար միայն ունենք, նա, բնականաբար, մտրակի վախճանից առաջ, կը փոխարինուի մի նոր էակով, որը անհրաժեշտաբար գերազանց կը լինի, քանի որ նա յաղթանարած՝ կը լինի արատներին, որոնց տակ մենք կքել ենք, միայն թէ Երկիրը չմտահոգուի իր տեղի մասին:

Հիմակ ու հիմա հետաքրքրական է գիտել, որ մարդու յայտնելուց ի վեր բնութիւնն այլևս նոր ձևեր չի հետեղծել:

Մեծ թւով կենդանիներ և բոյսեր անյայտանում են վերջնականաբար և չեն փոխարինուում: Կարծես հրաշագործ և գերագոյն ճիգը, որ մասկարարում էր, սպառել է իր հրայրքը և երևակայութիւնը:

Այսուամենայնիւ, աչքից չը փախցնենք որ մարդու յայտնելը համեմատաբար նոր է:

1) M. Maeterlinck. «L'ombre des Ailes» p. 61.

Պէտք է հաշւի առնել կենսաբանական էակները անհաշիւ տևողութիւնը. չորրորդակ դարաշրջանը, մերը, հեռու է վերջացած լինելուց և մեզ համար կարող է վերապահւած լինել աննախատեսելին:

* * *

Ուրեմն, համարեա որոշ է, որ նորէն շատ տարօրինակ փոխանցումներ տեղի կունենան¹⁾:

Այսպէս է մտածում Մ. Մետերլինկը:

* * *

3) Միևնոյն մտածողութիւնը գտնում ենք Նիցշէի մօտ Բայց նա այս մտածող-քերթողի մօտ արտայայտուած է բանաստեղծական ձևերի մէջ: Նա երբեմն քողարկւած է, երբեմն՝ հաննուկային և անորոշ: Որովհետև երբեմն նա մեզ կարծել է տալիս, թէ ներկայ մարդն է որ գերմարդ պիտի դառնայ, երբեմն՝ նրանից յետոյ է որ երկրի վրայ պիտի գայ գերմարդը: Բայց այս միտքը միշտ զատուած է պատմութեան իր փիլիսոփայութիւնից:

Այսպէս՝ նա մեզ յայտարարում է.—

Այն, ինչ որ մեծ է մարդու մէջ, այն է, որ նա մի անցորդ է և անկում:

Մարդը մի ձգւած պարան է անասունի և գերմարդու միջև, մի պարան՝ անգունդի վրայ:

Վտանգաւոր է անցնել միւս կողմը, վտանգաւոր՝ ճամբին մնալ, վտանգաւոր է յետ նայել, սարսուլի և վտանգաւոր կանգաւ:

Գերմարդն իմաստն է երկրի: Թող մեր կամքն ասի՝ Գերմարդը թող լինի իմաստը երկրի... Հաւատարիմ մնացէք երկրին:

Իսկապէս, մարդը մի անմաքուր գետ է. պէտք է սվկէան դարձած լինել՝ առանց կեղտոտուելու կարողանալ իր մէջ ընդունել մի անմաքուր գետ:

Չարագուստրան սիրում է նրանց, որոնք չեն փնտռում, ատուղբի յետև, մի պատճառ ոչնչանալու համար կամ զոհաբերութեամբ նախընտրու. այլ նրանց, որոնք իրենց զոհում են երկրին, որպէսզի մի օր երկիրը պատկանի գերմարդուն:

Նա սիրում է նրան, որ ապրում է ճանաչելու համար և որը ուղղում է ճանաչել, որպէսզի մի օր ապրի գերմարդը:

¹⁾ M. Maeterlinck. «La Grande Féerie» p. 115-117

Նա սիրում է նրան, որ աշխատում և հնարում է մի բնականաբար կառուցելու գերմարդուն, երկրի վրայ իր գալստեան համար պատրաստելու անասուններին և բոյսերին:

Նա սիրում է բոլոր նրանց, որոնք ծանր կաթիլներ լինելու պէս մէկ առ մէկ ընկնում են մարդկանց գլխին կախուած մռայլ ամպերից. նրանք ազգարարում են վաղակը, որ գալիս է, և անյայտանում են երազատեսութեամբ:

Զարագուստան մի երազատես է կայծակի, մի ծանր կաթիլ՝ որ ընկնում է ամպից. բայց այդ կայծակը կոչուած է Գերմարդ:

* * *

Գերմարդը սրտիս է փակչում, նա է որ ինձ համար միակ բանն է — և ոչ բնաւ մարդը:

Օ՛, եղբայրներս, այն ինչ որ ես կարող եմ սիրել մարդու մէջ՝ այն է, որ նա անցորդ է և անկում:

Այսպէս է ասում Նիցչէն Զարագուստայի բերանով¹⁾:

ՄԱՐԴՈՒ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ՅԵՏԱՎԱՐՁՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿԷՏԻՑ

Ահա երեք գլխաւոր մտածողների խորհրդածութիւնները Մարդու ապագայ ճակատագրի մասին:

Այս խնդրի վերաբերմամբ այլ մտածողների խոհերը նման են միւսներին:

Հետաքրքրական կը լինէր ցուցադրել Կոնդորսէի և Հ. Սպէնսէրի, Վիկօի և Ռոնանի մտքերը իրերի և էակների անվախճան յառաջադիմութեան մասին, բայց, մեզ համար, վերոյիշեալ մտածողների գաղափարների բացատրութիւնը բաւական է:

* * *

Այսպէս, տեսնում ենք, որ փիլիսոփայութիւնը տեսչում է գիտնալ կամ ենթադրել վերջնական պատճառները և ապագայ ճակատագիրը

¹⁾ Fr. Nietzsche. «Ainsi parlait Zarathoustra» trad. par H. Albert.

Մարդու, ինչպէս կը լինի նա, ինչպէս կապրի նա, ինչ յաջորդ կունենայ նա՝
Եւ գիտութիւնն էլ իր կողմից է տենչում գիտնալ ծագումը Մար-
դու։ Նա իրեն հարց է տալիս թէ արդեօք նա ծագում է առել որևէ կապից՝
Օրբանգուտանից, Շիմպանզէից կամ թէ Գորիլլայից։

Օրգանիզմների ծագման մասին կառուցում են հաւանական և ան-
հաւանական վարկածներ. ձևափոխական, բարեշրջական, ինքնաբեր սերման
և այլն, և այլն։

Բայց Մարդը երբեք իրեն չի հարցնում՝ ինչի կը վերածւի ինքը,
մարդը, այդ անձանօթը, և ինչ վիճակ կունենայ դարերի ընթացքում։

«Մարդիկ, իրաւացիօրէն նկատում է մի գրող, պատճառները
ճաշակն ունեն՝ առանց շատ զբաղւելու արդիւնքներով»¹⁾։

* * *

Արդ, Մարդու ճակատագրի վերաբերմամբ վերոյիշեալ մտածող-
ների բացայայտած մտքերը հնարաւճիր են, հաւանական և տրամաբանական։

Հնարաւճիր է որ մարդկային ցեղը փոխարինւի մի այլ ցեղով, Հը-
նարաւճիր է որ Մարդու որդիները իբր յաջորդ ունենան աստուծային էակ-
ներ։ Ոչ, Մեզ թւում է, որ այդ վարկածը հաւանական և տրամաբանական
չէ։ Եւ իր ենթադրութիւնները զուրկ են գիտական, պատմական և փիլի-
սոփայական հիմքից։

Մարդը, ընդհակառակը, ըստ իս, դարերի ընթացքում տակաւ առ
տակաւ, աստիճանաբար, կը մտենայ մի էակի՝ մըջիւնների նմանուով։ Մար-
դու բոլոր որդիները, իրենց համար անզգալիօրէն, բնականօրէն կը դառ-
նան փոքրիկ էակներ, շատ փոքր, ինչպէս մըջիւնները։

Պէտք է, առաջին հերթին, որ Մարդը նախ քան կարողանայ լու-
ծել իր ճակատագրի հարցը, իրեն համեմատի Երկրագնդի այլ բնակիչները
հետ, այլ էակների և իրբի հետ այս Մօր, որ Երկիրն է։ Պէտք է որ նա
մտածի բոյսերի և կենդանի էակների ճակատագրի մասին, կենդանիների
կամ թռչունների, որոնք ապրում էին այս Երկրի վրայ, բայց որոնք այլևս
գոյութիւն չունին։ Որովհետև Մարդու ճակատագրերը անջատւած չէ այդ է-
ակների և բոյսերի ճակատագրից։

Պէտք է, երկրորդ հերթին, որ նա մտածի նոյնպէս Մարդու մար-
դակազմական, կենսաբանական և բնախօսական անցեալի մասին։

1) Pierre Mar Orlan. «Les Nouvelles Litteraire» 5 février, 1938.

II

ՄԱՐԳ - ՀՍԿԱՆ ԵՒ ԻՐ ՈՐԳԻՆ՝ ՄԱՐԳ - ՄՐՋԻՆՆԸ

Ապացուցելու համար մեր գազավարը, որ ժամանակակից Մարզը պիտի վերածւի Մարդ-Մըջիւնի, առաջին հարցը որ՝ յետադարձութեան տեսակէտից վերաբերում է արդիական Մարդու ապագայ ճակատագրին և Երկրի վրայ ապրող կենդանի էակներին՝ դրւում է, հետեւեալն է.—

1. Նախնական Մարդը, ժամանակակից Մարդու նախահայրը, մի հսկան էր.

2. Ժամանակակից Մարդու հասակը, այդ հսկայից սերած, հասնին է նախնական Մարդու: Մարդու Ֆիզիքական ծաւալը, իր անատոմիական կառուցւածքը դարերի ընթացքում՝ Երկրի վրայ իր յայտնւելուց ըսկըսած մինչև մեր օրերը՝ նւազել է իր բարձրութեամբ, մեծութեամբ կամ զանգւածով:

Մարդը, մի խօսքով, դարերի ընթացքում պահպանել է իր ֆիզիքական կառոյցը, թէ՛ ընդհակառակը, այդ նախնական կառուցւածքը նւազել է աստիճանաբար, անզգալիօրէն, ամէն մի դարում պակասել է իր բարձրութեամբ, ծաւալով և զանգւածով:

Ժամանակակից մարդու մարմինը իր ծաւալով, բարձրութեամբ և մեծութեամբ միևնոյնն է ինչ որ նախնական մարդունն էր:

Այսպիսով՝ Մարդ-Մըջիւնի հարցի լուծումը կախած է լուծումից այն հարցի թէ՛ նախնական Մարդը հսկան էր արդեօք և թէ՛ հսկաներն ու Մարդ-Հսկան գոյութիւն ունեցել են պատմութեան մէջ:

* * *

Բայց, նախ քան առաջ դնալը, մի հարց է առաջանում. ինչչձեմն է կայանում յետադարձութիւնը: Յետադարձութիւնը, ըստ կենսաբա-

նութեան՝ (biologie) կեանքի զխութեան, դա դարձն է մի հիւսւածքի և կամ անհատի՝ դէպի առաջնական նւազ կատարելագործւած մի վիճակ:

Օրգանական ասէն ձևափոխութիւն և, հետեւաբար, ամէն հոլովոյթ, յայտարարուած են կենսաբանները¹, ուղեկցւած է յետադարձութեամբ, այսինքն նւազ օգտակար կամ անօգտակար օրգանների նւազուով: Այսպէս է որ endoparasit-ները (ներքնամակարոյծ) և յատկապէս tenia solium-ը ապրելով մի շատ հարուստ և պատրաստ սննդական միջավայրում՝ կորցրել են իրենց մարտողական գործարանները: Այս յետադարձութիւնը պահպանուած է նոյնպէս ըոյսերի մէջ՝ որոշ pélargonimus-ների մօտ այնպայտացուած բեղմնաւորման փոշիպարկերի (anthères), գործարաններ նւազած ptéridophyte-ների և այլն:

Յետադարձութեան էական պատճառներն են՝ յարմարուածը և ընտրողականութիւնը. երկրորդական պատճառներն են՝ պաշտօնի անօգուտ լինելը և տեղի պակասը, սննդական միջոցների անբաւարարութիւնը²:

* * *

Ինչո՞ւն է կայանում յետադարձութիւնը մարդու համար:

Յաւերժական Աստուածը մարդուն կերտեց Երկրի փոշուց, նա կեանքի շունչ փչեց մարդու ռնգներին և մարդը դարձաւ կենդանի էակ:

Յաւերժական Աստուածը հողից կերտեց դաշտերի բոլոր կենդանիներին և երկնքի բոլոր թռչուններին:

Յաւերժական Աստուածը մարդուն ասաց.—

«Քո երեսի քրտինքով պիտի ուտես քո հացը, մինչև որ յետ դառնաս հողը, որից դու կերուել ես, որովհետև դու փոշի ես և փոշի էլ պիտի դառնաս³:»

Արդ, մարդու համար յետադարձութիւնն այն է, որ Մարդ-Մրջիւնի աստիճանին իջնելուց յետոյ՝ դառնայ փոշի, դառնայ հողին, որը նոյնպէս, իբ հերթին, փոշի պիտի դառնայ հսկայածաւալ Տիեզերքի մէջ:

* * *

Մարդ - Հսկայի մասին:

Նախնական մարդը հսկայ էր:

1. Որ երբեմնի Երկրագունդը նախնական և մինչև իսկնախապատմական ժամանակներում ընալւած էր միայն հսկաների մի ցեղով՝ այս մասին մենք որիէ կասկած չունինք:

2. Որ Մարդը, բացի այդ, դարերի ընթացքում, պիտի դառնայ

¹ «Encyclopédie et le Nouveau Larousse Illustré» t. 7. p. 222.
² Ibidium. ³ Աստուածաշունչ. 1, 2, 3 գլ. 10, 41. 5.

ժամանակակից մըջիւնների նման մի տեսակ էակ՝ այս մասին նոյնպէս որևէ կասկած չը կայ, որովհետև օրգանական կեանքի պատմութիւնը հաստատուած է, որ Հսկաների և ժամանակակից Մարդու կեանքի մէջ գոյութիւն ունի օրգանական կեանքի մի յարաբերութիւն, և բնախօսական, կենսաբանական ու կազմախօսական համեմատութիւն՝ երկրի կեանքի հոլովոյթի մէջ:

* * *

Որո՞նք են ապացոյցները այն բանի, որ ժամանակակից Մարդը պիտի լիջնի Մարդ-Մըջիւնի, Ո՞րտեղ են գտնուած դրանք:

Նրանք գտնուած են պատմութեան, կենսաբանութեան, կենդանաբանութեան, բուսաբանութեան և հնէաբանութեան մէջ: Նրանք, այդ ապացոյցները, գտնուած են Մարդու իսկ գիտութեան մէջ:

1. ՊՍՏՄԱԿԱՆ ԵՒ ՀՆԷԱԲԱՆԱԿԱՆ ԱՊՍՅՈՅՑՆԵՐ

Այսպէս, ամենահաստատ, ամենավստահելի և անհերքելի ապացոյցը Մարդ-Հսկայի գոյութեան՝ պատմական ապացոյցն է: Նա արտայայտուած է երեք շարք գաղափարներով. 1) Մարդ-Հսկայի գաղափարը գտնուած է դիցարանութեան մէջ. 2) բոլոր մեծ քերթողների երկերի մէջ. 3) նա գտնուած է Աստուածաշնչի մէջ. 4) և հնէաբանական գիւտերը հաստատուած են այդ գաղափարի ճշմարտութիւնը:

* * *

1. Հսկաների գաղափարը, իսկապէս, գտնուած է բոլոր հնադրեան ժողովուրդների դիցարանութեան մէջ: Նա լիքն է այդ սարսափելի և արտակարգ պատկերներով:

2. Բացի այդ՝ նա գտնուած է ժողովուրդների նախնական կրօնի մէջ. նա պահպանուած է հնադարի բոլոր մեծ քերթողների երկերի մէջ: Այդ արտակարգ էակների կեանքի արկածները, Հսկաները պատմած են այդ զբարտակարգ էակների կեանքի արկածները, Հսկաները պատմած են այդ զբարտակարգ էակների կոզմից, Անօգուտ է կանգ առնել քերթողների պատմութիւնների վրայ, որովհետև դրանք ծանօթ են բոլորին:

Այսուամենայնիւ պէտք է լսել առնուազն Հոմերոսին:

Հոմերոսը յայտարարուած է, որ Կիկլոպների երկրի հսկան «մի մարդ էր զարմանալի հասակով... դա մի ապշեցուցիչ հրէշ էր. նա բնաւ նրման չէր մարդու, այլ մի բարձր սարի, որի գագաթը բարձր է հարեան բոլոր լեռներից՝, և որը իր անձաւի մուտքը փակուած էր մի ժայռով, որը ջրէր լեռներից՝, և որը իր անձաւի մուտքը փակուած էր մի ժայռով, որը ջրէր սան քառանիւ սալեր չէին կարող տանել, այնքան զանգածը հսկայական էր և որ Ուլիսն ու իր ընկերները սարսափով բռնուած էին՝ լսելով իր սոս-

¹ Homère «Odyssee» Livre IX. p. 134

կալի ձայնը և տեսնելով այդ վիթխարի կազմածքը՝»:

Այս կիկլոպների հոգը չէին ոչ Իւպիտէրը և ոչ էլ ֆնացած բոլոր աստուածները, «որովհետև մենք, ասում էին նրանք, աւելի ուժեղ և աւելի կարող ենք նրանցից»:

Նրանք ուտում էին ոչ միայն կենդանիների միսը, այլ և ոսկրների և իրենց անձաւի մուտքը այդ ծանր ժայռով փակուած էին նոյնքան հեշտութեամբ, ինչպէս որ կապարճն են փակում: Գրանք արդի հնէաբանութեան նկարագրած՝ Նէանդերտալի, Ռոզեդիլայի և Պիլտզոունի մարդիկն են:

Գոռոզ բռնութիւնը, յայտարարում է Պինդարը արդարութեան մասին խօսելով, վերջանում է պարտութեամբ... և հսկաների արքաները չխուսափեցին այդ օրէնքից: Հսկաների արքան Տիտան Պորփիրիոնն էր:

* * *

Բայց, հակառակ հսկաների գոյութեան վերաբերող քերթողների յիշատակութեան, խնդրոյ առարկայ հարցի լուծման համար մի շատ կարեւոր հարց է ծագում. — իսկապէս որ այդ հսկաները գոյութիւն ունէին մարդու և երկրագնդի պատմութեան մէջ: Գուցէ՞, գրանք անիրական ստեղծագործութիւններ են, երևակայող էակների մտացածին բաներ, բանաստեղծական յօրինածոյ, ստեղծւած ժողովրդական երևակայութեամբ՝ ապա վերցրած և ներկայացրած քերթողների կողմից:

Նախնական Մարդը, մէկ խօսքով՝ մեր նախահայրը, իրապէս մի հսկայ էր:

Բայց եթէ այս միտքը միայն ըսնաստեղծական մի դադափար էր և կամ մի առասպել, այդուհանդերձ զա ճշմարտութիւն պիտի լինի, վասն զի առասպելը, յայտարարում է մեծ լեղւաբան Մաքս Միւլլէրը, իր մէջ միշտ պարունակում է մի ճշմարտութիւն: Նա, ուրեմն, համապատասխանում է պատմական մի իրականութեան:

2. ԱՍՏԻԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԱՊԱՅՈՅՅՆԵՐ

Ամենամուտեղ և ամենավստահելի ապացոյցը մեր Հսկայ նախահայրերի գոյութեան՝ գտնուում է Աստուածաշնչի մէջ:

Այնտեղ իսկապէս կարգում ենք. —

Երբ մարդիկ, — զրւած է Աստուածաշնչի «Գիրք Ծննդոց»-ում, — սկսեցին բազմանալ Երկրի կրեսին, և նրանց աղջիկները ծնւեցին, Աստուծոյ սրգիները տեսան, որ մարդկանց աղջիկները գեղեցիկ էին. և նրանց մէջ ընտրութիւն կատարելով իրենց կին վերցրին: Ապա Յաւիտենականն ասաց:

¹ Homère «Odyssee» Livre IX. p. 136, 137

² Pindare «Œuvres complètes» p 117

«Իմ ողին ընդմիշտ չի մնայ մարդու մէջ, վասն զի մարդը միայն մարմին է, և իր օրերը կը լինեն հարիւր քսան տարի»:

«Այդ ժամանակներում հսկաները երկրի վրայ էին, յետոյ որ Աստուծոյ որդիները ամուսնացան մարդկանց աղջիկներէ վրայ, և սրանք նըրանց տւեցին երեխաներ. նրանցից հռչակաւոր և կարող գաւազները դուրս եկան հնադարում»:

Արդ, յայտարարում է Աստուծաշունչը, երկրի վրայ հսկաներ կային:

* * *

Բայց, իսկապէս, կարելի՞ է խօսել մի ճշմարտութեան մասին, որ դուրս է բերւած Աստուծաշնչից և պատմութեան ճշմարտութեան մասին: Անշնչո: Այդ ճշմարտութիւնները նոյնպէս ճիշտ են որքան բնական գիտութիւններէ ճշմարտութիւնները:

Բայց ճիշտ է ընդունել, արդարացիօրէն դիտում է Մ. Մեթերլինկը, որ մեր պատմական գիտութիւնը շատ կարճ է և չի անցնում եօթ կամ ութ հազար տարին, այն, ինչ որ երկրագնդի կիսանքում միայն առաւօկում ութ հազար տարին, այն, ինչ որ երկրագնդի կիսանքում միայն առաւօկում ութ հազար տարին: Ուրեմն մենք ոչինչ գիտենք մեր յիշողութեան ծնունդից տին է հաւասար: Ուրեմն մենք ոչինչ գիտենք մեր յիշողութեան ծնունդից առաջ կատարւածի մասին և բնաւ անհաւանական չէ, որ առաջին կրօններէ հոյակապ հաստատումները,— հաստատումներ՝ որոնց մենք դեռևս չենք սահմանանցել,— մի յայտնութեան կամ աստեղային հաղորդակցութեան հետքեր լինեն, որ այլևս չեն վերարտադրել: Հնարաւոր է որ այն ամէնը, ինչ որ մենք գիտենք, ամէնը ինչ որ մեզ այնպէս որոշակի բաժանում է բոյսերէց, մենք գիտենք, ամէնը ինչ որ մեզ այնպէս որոշակի բաժանում է միջամբնոյնայէս և կենդանիներից՝ մենք պարտական ենք այդ նախկին միջամբնութեան և որ մեր կեանքի լաւագոյնը դուրս է բերւած այդ բեկորներից: Շատ հին առասպելներ, թւում է, նրան են ակնարկել, և մեծ ճշմարտութիւնները յաճախ թագնւած են նման առասպելների մէջ²:

* * *

Պէտք է այլևս նկատել որ, ըստ լեզւաբանութեան, գոյութիւն ունեն՝ աստուծաների դարաշրջան, հերոսների և մարդկանց: Հերոսների դարաշրջանը համապատասխանում է հսկաների դարաշրջանին:

ՀՆԷԱՐԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՐԴ - ՀՍԿԱՆ

Վերոյիշեալ ճշմարտութիւնները, Մարդ-Հսկային վերաբերող կըօ-

¹ Bible, Génèse, VI, V—4

² M. Maeterlinck «La Grande Féerie» p. 157-158

նական և պատմական ճշմարտութիւնները հաստատուել են Հնէաբանութեան գիտական յայտնութիւններով: Գտել են նախնական հսկայ մարդու մի կըմախք:

1856 թւին, Դիւսսելդորֆի մօտ՝ Նէանդերթալում, յայտարարուած է բնագէտ R. Broom ը, յայտնաբերել են կմախքների ամենամեծ մասը, որ նախնական մարդ-էակի նշանակալից մէկ տիպարն է: Առանձին որիէ յատկորոշ բան չէ նշւած յետ-գանգի ոսկրների վերաբերմամբ, սակայն զարմանք է պատճառել այն իրողութիւնը, որ գանգի կտարը շատ տարբեր էր ասորոյ բոլոր ցեղերի գանգի կտարից: Գանգի խոռոչը երկայն և ձւաձև էր և աչքերի վերև կար ակնբախ մկ ոսկրուտ երկար շուրթ, որ մի ուժեղ ցըցւածք էր կաղմում դէպի առաջ՝ համեմատաբար ցածր ճակատով:

Երբ այդ գանգը առաջին անգամ ցուցադրուեց գերմանական մարգաբանական մի ժողովի առաջ, Բոննում, բացայայտ կասկածներ յայտնեցին իր մարդկային բնոյթի մասին: Այնուհետև գանգը քննուեց հոշակաւոր Վերշովի կողմից, որ յայտարարեց թէ դա մարդկային գանգ է, բայց իր եզակի բնոյթը արդիւնք է ենթակայի ունեցած մի հիւանդութեան: Անգլիացում բնագէտ Huxley-ն ևս ընդունեց, որ գանգը մարդկային հին տիպի է, որ տարբեր կէտերով մօտենում է բարձր տեսակի կապիկներին: Քսանհինգ տարի շարունակ մէճ կղա թէ ի՞նչ տեղ պիտի տալ այդ գանգին. բայց այդ ժամանակ նրանից ուրիշներն էլ գտնուեցին, և այսօր նրանից մեծ թւով կան, նոյնպէս և կմախքի գրեթէ բոլոր մանրամասնութիւնները:

Նէանդերտալի կատարեալ տիպի կմախքը դարձաւ յայտնի և ծանօթ՝ «սրբոց խորան» կամ «correze» անունով:

2. «Սրբոց խորան» կմախքը նկարագրուել է 1913 թւին բնագէտ Մարտէլէն Բուլի կողմից: Գանգը մեծ կարևորութիւն ունի, որովհետև դէմքը և ներքեի ծնօտը պահպանուել են գրեթէ կատարելութեամբ և ներկայացնում են որոշ հետաքրքրական բնոյթ: Այստեղ էլ գտնուած են նոյն մեծ զարգացումը յօնքոսկրների կամարակապների Նէանդերտալի այլ գանգերի, կամ, երբօրդ՝

3. Ռոդեզիայի գանգը. 1921 թւին Ռոդեզիայում յայտնաբերուեց մի նշանակալից գանգ՝ հին մարդու տիպով: Որոշ տեսակէտից՝ դա մարդկային ծանօթ գանգերից ամենակարևորն է: Այս գանգը «պատկանում է շատ հին ժամանակների մարդկային մի հին տիպի»: Սա մէկն է «մարդկային առաջին տիպերի, որոնք ունեն շուրջ 1280 խորանարդ սանտիմետր գանգային կարողութիւն»:

1848 թւին Ջիրբալթարում յայտնաբերուեց մարդկային մի շատ հին գանգ և իր գանգային կարողութիւնը գնահատուեց 1300 խոր. սանտ.: Այլ տիպի էլ գոյութիւն ունի, ինչպէս «Javanthropus»-ը, Պիտ-

դառնի գանգը, Հայդերբերգինը՝

* * *

Սրունքոսկրների և ծոճրակի ողնայարի քննութիւնից բնազէտ Բուլը հզորակացնում է, որ Նէանդերտալի մարդը քայլում էր մի քիչ թեք քայլածքով, որը հաստատում է գլխի ձևը՝

Հստ Բուլի, Օսորոնը հետեւալ ձևով է նկարագրում Նէանդերտալի մարդու երևոյթը. «Մի հսկայ գլուխ, տեղաւորւած մի կարճ և թիկնեղ բունի վրայ, լայն և կոր ուսերով, գլուխն ու վիզը սովորաբար առաջ կախած, ըստ միևնոյն հակման որ մէջքը, թեկը համեմատաբար կարճ են սրունքների առնչութեամբ. սրունքը, զիստի հետ համեմատած, աւելի կարճ քան գոյութիւն ունեցող որևէ մարդկային ցեղի, ծունկը սովորաբար թեքւած գէպի առաջ՝ առանց ոսկրագօզը ուղղելու գիւրութեան, այսինքն լրիւ կերպով ուղիղ կանգնելու. ձեռները շատ գէր ու առանց բլթամատի և միւս մասների կանոնաւոր շարժման, որ ժամանակակից մարդուն է բնորոշում. դիմելը կծկւած դիրքի, խիճերը յարդարելու և կամ այլ զբաղմունքների անձնատուր լինելու Այսպէս, ուրեմն, «Hom» neandertalensis»-ի բնորոշ ստորական կեցածքները ամբողջովին տարբեր են մերինից և մեզ թւում են շատ անշոթհփ: Մանր գլուխը, գէմքի հսկայ զարգացումը, ենթագանգեան խոռոչի դիրքը գէպի յետ, որի միջոցով ողնածուծը միանում է ուղեղին, այս բոլորը միտում էր մարմնի վերի մասը առաջ նետելու և այս միտումը՝ միաբոլոր միտում էր մարմնի վերի մասը առաջ նետելու և այս միտումը՝ միացած վզի թոյլ թեքւածքին, ուսերի ծանրութեան և գլխի տափակ ձևին՝ մարմնի այդ բաժնին տալիս էր աւելի կամ նւազ մարդաբանական բնոյթ¹: Նէանդերտալի մարդու գանգը երկայն է և համեմատաբար նեղ ու տափակ, և սրանով նա նախնական տիպի է, ասում է Բրուսը:

Նէանդերտալի մարդու մի շատ հետաքրքրական կէտն էլ այն է, որ իր ուղեղը ընգհանրապէս մեծ չափի է: «Սրբոց խորան»-ի մարդը ունի 1620 խորանարդ սանտիմետր ուղեղ:

Spy-ի գանգը գրեթէ նոյնքան մեծ է: Նէանդերտալի գանգի կաբողութիւնը գնահատում են նոյն իսկ շուրջ 1400 խոր. սանտիմետր:

ԿԵՆԴԱՆԱՔԱՆՈՒԹԻՒՆԸ, ԿԵՆՍՍԱՐԱՆՈՒԹԻՒՆԸ, ԲՈՒՍԱՔԱՆՈՒ-
ԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՐԴ - ՄՐՁԻՒՆԸ

Բնութեան արտադրողական և քանդողական ոյժերի խաղը, կամ Ստեղծագործող Ոյժը, սքանչելի է, հրաշագան, բայց խորհրդաւոր: Մարդու պարագային՝ Հսկայից նա կիջնի մի թզուկի կամ մըջիւնի, մինչդեռ հակառակ գէպըում, մենք ներկայ ենք հակառակին. փոքրից դուրս է գալիս հըսուական և պրոպ ու մէջ ապրող կենդանի տեսակների գաղտնիքները կան: Այսպէս, բնութեան մէջ ապրող կենդանի տեսակների գաղտնիքները

անհասկանալի են: Այսպէս, Գալապագոս կղզիները, ասում է յայտնի բնագէտ Ռ. Բրուսը, մեզ ընձեռում են որոշ այլ հետաքրքրական տեսութիւններ հոլովոյթի վրայ:

Ամբողջ անւանացանկը (faune) սերում է առանց որևէ կասկածի Հարաւային Ամերիկայից եկած նախահայրերից և կրիաները ներկայացնում են գուցէ ամենանշանակալից դէպքերը: Այս բոլոր կղզիներում զարգացել են հսկայ կրիաներ եւ ընդորը սերում են ըստ երեւոյթին մի՛ համեմատաբար ՓՈՒՐՐ կրիայից, որ գոյութիւն ունի ցամաքամասի վրայ: Ամենամեծ կղզու վրայ գտնւում են առնւազն երեք տարբեր տեսակներ և միւսներից ամէն մէկը ունի իր յատուկ տեսակը...

Այսպիսով մենք ունենք մի երկոտասնեակ տարբեր տեսակներ և հետաքրքրական կէտը հասեալն է. երեք կամ չորս հսկայ տեսակներ անկախօրէն ստացել են պատեանի մի շատ նեղցած տիպ, որ կոչւում է «սպանական թոււք», որից որևէ հետք գոյութիւն չունի նոյն նախապապերի կազմախօսութեան մէջ:

* * *

Սմբակաւորների նախնական տիպերը արդիւնք են մեծ ալլակերպութիւններով ձևերի, որոշները մեծ կազմով և մի քիչ զարմանահրաշ, բայց միանգամայն ուղղակիօրէն նախնական տիպերից սերոզ:

* * *

Ահաւասիկ նորէն մի այլ անթափանցելի գաղտնիք, մարդը ամենուրեք շրջապատւած է խորհուրդներով և հրաշքներով:

Բատտըսոնը (Batteson), բնագէտ և հիմնադիրը ճիւղագրական դպրոցի, իրաւունք ունի, որ յայտարարում է թէ մենք անզիտանում ենք միաժամանակ պատճառը և ձևը տեսակների ծագման: Նա խորտակում է այն յոյսերը, որ արտայայտում է Բրուսը, որ փայփայում էին փոփոխականները նոյնքան, որքան և ճիւղագրականները, փորձելով նպաստաւոր պատասխան տալ այս, աշխարհի չափ հին, խնդրին:

«Մենք աւելի դժուարութեան մէջ ենք քան երբեք,— յայտարարում է հռչակաւոր կենսաբան Օսթրոնը,— հասկանալու համար հոլովոյթի պատճառները. մէկը միւսի յետեից Բիւֆոնի, Լամարկի, Գարվինի, Վայսմանի, Վրիի (Vries) պատճառականութեան տեսութիւնները փրկելին... Այն ամէնը, ինչ որ մենք կարող ենք ասել ներկայումս, 1931 թւին, այդ այն է, որ բնութիւնը չի կորցնում ո՛չ ժամանակ, ո՛չ ճիւղ փորձարկութիւններ կատարելու և կամ դիմելու դիպեալծին և պատահականութեան, այլ նա ձեռնամուռ է լինում ուղղակի և ստիզմագործութեան ճամբով իր նպատակներին՝ հրաշալիօրէն համընթաց կենսաբանութեան»:

II

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ, ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ, ԲՈՒՍԱԲԱՆՈՒ-
ԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՐԴ-ՄՐՋԻՒՆԸ

Պէտք է կանգ առնել նաև բոյսերի խորհրդի վրայ, Կենսաբան Մենդէլը (Mendel) անսպասելի յայտնութիւններ է արել: Տասնիններորդ դարում Մենդէլը ցոյց աւելցրեց, որ երբ սերտորէն ազդակցութիւն ունեցող երկու բոյսերի փոփոխակները ցեղախառնում (croisement) ենք կատարում, մէկի և միւսի բնոյթը կենցաղուած է, իբր արդիւնք, մի բոլորովին անսպասելի ձևով:

Նա նկատել է, որ երբ ցեղախառնում ենք վառք և մեծ սիսեռնելը, նրանց խառնածինը միջին կազմութեամբ չի լինում, ինչպէս որ պէտք էր սպասել, այլ բոլորովին մեծ կազմով:

Եթէ այնուհետև այդ հսկայ խառնածինները միմեանց հետ էին ցեղախառնուած, մի նշանակալից արդիւնք էին ձեռք բերում, մի քառորդը թղուկ սիսեռ էր և երեք քառորդը՝ հսկայ սիսեռ: Հետևեալ աստիճանին նըկատելի էր, որ թղուկ սիսեռները վերարտադրուած էին նոյնորինակ, ինչպէս որ մէկ հրբորդը հսկայ սիսեռները, մինչդեռ այս վերջինները միւս երկու հրբորդը արտադրում էր մի քառորդ թղուկներ¹⁾:

* * *

Արդիական մարդիկ այլևս նման չեն կախարդական հսկաներին՝ բնութեան դադանիքները պահող: Եւ նախնական կիները, Հէնց կիւն-հսկաների մասին է, որ խօսում է քերթով Բողլէրը, որ, միլիոնաւոր տարիներից յետոյ, ափսոսում է, որ չի ապրում նէրա հետ և չի սիրում նրան...

1) R. Broom. «Les Origines de l'Homme» p. 17-18.

Երկրագնդի ընակիչները, նախնական ժամանակներէ մարդիկ, ուրեմն, հսկանք էին: Երանց գոյութիւնը նաև մեզ թւում է տրամաբանական, մինչև իսկ կարևոր, բացարձակապէս անհրաժեշտ՝ էականքի հորվոյթի, երկրի վրայի կեանքի մէջ:

Երանք եղել են, և մենք նրանց ուղղակի շառաւիղներն ենք: Եւ որ հսկանքը իրապէս գոյութիւն ունէին՝ այս հարցում այժմ որեէ կասկած չի կարող գոյութիւն ունենալ:

Երանց գոյութիւնը և կամ նրանց անցքը երկրի վրայով այլևս երբեք չի կարող զիտել որպէս մի մտացածին, քանաստեղծական, անիրական կամ երևակայական բան:

Այդ արարածները, մարդ թէ կին, բացի այն որ ունէին հսկայ մի մարմին, կազմածքի վեհութիւն, գծերի ներդաշնակութիւն, նրանք ունէին նաև, անշուշտ, հսկայ մի հողի:

Նրանք, այդ հսկանքի հողիները, խտացնում էին սառզիւ այն բոլոր աւետանքները, որոնք մեզ ներկայացնում են առաստիւղական մեծ հողին.— հնչելունի լիութիւն և զեղեկութիւն, մեծ կրքերի ոյժ և սաստկութիւն, շարժումների զբոսաւորի կերբ...
* * *

Ամենամեծ ապացոյցը, ամենափայլուն, հոյակապ, ամենափորձառական, ամենատրամաբանական ու համոզկերը՝ որ ժամանակակից Մարդը աստիճանաբար, անզգալիօրէն պիտի հասնի այնպիսի արարածներէ վիճակին, ինչպիսին Մըջիւնն է՝ դա նախնական ժամանակներում Մարդ-Հսկայի գոյութիւնն է, որի շառաւիղներն ենք մենք՝ զաճաճներս...
* * *

Ձը պիտի փնտռել ուրիշ ապացոյցներ և փաստեր, այլ դաստիարակութիւնները, ինքնին բաւական է:

* * *

Որոշելու համար, թէ ինչպէս նախնական Մարդ-Հսկայի մարմինը, ամէն մի դարում, Երկրագնդի վրայ իր յայտնելուց ի վեր փոքրացել է բարձրութեամբ և լայնութեամբ, պէտք է ճշտիւ իմանալ թէ՛ քանի՞ դարուց ի վեր Մարդը գոյութիւն ունի և երբ, մը ժամանակաշրջանում է յայտնել երկրի վրայ:

Այդ «ժամանակաշրջանի» որոշումից կախում կունենայ նաև ճշտումը այն ժամանակի և դարերի, որոնք անհրաժեշտ են նւազիցնելու համար կազմածքը ժամանակակից մարդու, որպէս զի նա իջնի Մարդ-Մըջիւնի հասակին: Մարդու Երկրի վրայ յայտնելու մասին դժբախտաբար զիտնա-

կանները կարծիքները միաստեակ չեն: Այսպէս՝ հռչակաւոր մարդաբան R. Broom-ը յայտարարում է, որ կարծիքները մեծ տարբերութիւն է նկատուած նոյնպէս, մինչև իսկ ձեռնհաս մարդկանց մէջ, այն ժամանակաշրջանի մասին, երբ մարդկային սերունդն է ծնունդ առել:

Osborn-ը կարծում է, որ մարդու նախածոր սերունդը երկճեղի է ճօճնե-ից, այսինքն երեսունհինգ կամ քառասուն միլիոն տարի է դուրսէ. Keith-ը սկիզբը համարում է oligocène-ից, Elliot Smith-ը և Gregory-ն՝ miocène-ից, այսինքն շուրջ ասուք միլիոն տարի է: Գալով իրեն, Broom-ին, նա հակառակ է կարծելու, որ մարդկային սերունդը չէ անջատուած anthropide-ները ճիւղից՝ ստորին pliocène-ից առաջ, ուրիշն հաւանաբար հինգ միլիոն տարի է և դուրսէ մինչև իսկ ոչ առելի քան երկու միլիոն տարի:)

* * *

Մի հարց անհրաժեշտ է իրրև եզրափակուած: Եթէ մարդը «երկրի վրայի բոլոր հովիտայինները հիմնական առարկան է եղել դուրսէ հարիւր յիսուն միլիոն տարուց ի վեր», և եթէ այդ արարածի հասակը, որ հսկայ էր, և իր այժմի ներկայացուցիչներէից մէկը դանդի խոտոչի չափը 1430 խորանարդ սանտիմետր է, և այդ արարածը հասել է այն ֆիզիքական վիճակին որ ներկայուած ունի՝ զրեթէ մի թզուկ, հարց է առաջանում թէ՛ լինչ կը դառնայ իր հասակը 100,000,000,000,000,000 տարիներ հասելուց յետոյ, նա չի՞ դառնայ մի մրջիւն: Այս կէտի շուրջ, արամարանօրէն, չը սլիտի գոյու-թիւն ունենայ ոչ մի կասկած:

* * *

Եթէ իւրաքանչիւր հարիւր հազար տարիները ընթացքում Մարդու ֆիզիքական կառոյցը և կամ իր մարմնի ծաւալը, իր 175 սանտիմետր հասակը, աստիճանաբար և անզգալիօրէն կը նւազի միայն մէկ սանտիմետր, ասպա քանի՞ սանտիմետր կը նւազի 100,000,000,000,000 տարիները ընթացքում, որ, ըստ Jonns ի, տեղուութիւնն է մի մոլորակի կհանքի, նոյնպէս և մեր Երկրի:

Մարդու 175 սանտիմետր հասակի նւազումը Մարդ-Մըջիւնի և իր անյայտացումը երկրի երեսից կը լինի, արամարանօրէն, շատ առելի առաջ քան անյայտացումը կամ լուծումը նոյն ինքն Երկրադնդի:

1) R. Broom. «Les Origines de l'Homme» p. 9-10. trad. française. Paris, 1934.

* * *

Ո՞րն է մարդու հասակի նւազման պատճառը: Եւ թո՞ւն է նոյնպէ՞ս Մարդու փոքրանալու պատճառը մինչև Մարդ-Մըջիւնի սատիճան:

Իսկական պատճառները, ինչպէս վերն ասացինք, լիովին անյայտ են Մարդու զիտութեանը: Այս սովոր միայն վարկածներ (hypothèse) գոյութիւն ունեն, ենթադրութիւններ և կամ կարծիքներ. այս կարծիքները կարելի է կոչել 1) ընկերաբանական և 2) կենսաբանական:

1) ԸՆԿԵՐԱԲԱՆԱԿԱՆ. — Հասակի վրայ ազդող և նրան նւազեցնող շատ պատճառների մէջ մտնում է նաև ոգիկից ըմպելին (alcool),

Ոգիկից ըմպելին, ասում է մեծ քրէաբան Լոմբրոզոն, ազդում է հասակի վրայ: Մեծ հարեցողները, օլու չարաչար գործածութիւնից յետոյ, պիտի նւազեն իրենց հասակով մինչև միջակից ցած հասնելը: Եւ մենք ակա-նատես ենք եղել ինչպէս Գինու հովտի կանայք կորցրել են իրենց զեղեց-կութիւնն ու հասակը, երբ անձնատուր են եղել օլու: Ուրմն այս բոլորից յետոյ չը պիտի զարմանալ, որ նա ազդում է միջին տարիքը նւազեցնելու և, ինչպէս Քրանսացիք են նրան կոչում՝ կենսաջուր (eau de vie) լինելու փոխարէն նա դառնում մահաջուր՝ (eau de mort):

2) ԿԵՆՍՍՈՒՄԱՆԱԿԱՆ ՊՍԾՃԱՌՆԵՐ. — Յայտնի չէ, իսկապէս, թէ ի՞նչ կայ հոլովոյթի յետևում: Չեն կարողանում յայտ բերել իր ընթացքը: Գրեթէ ոչինչ զիտեն կենդանի էակների ձևերի յաջորդականութեան, կենդանաբանական շերտերում եղող բրածոյ տիպերի մասին: Գիտութիւնը ենթադրութիւններ է անում և զիտում իրօգութիւնների փաստերը:

Կենսաբանական ժամանակաշրջանից ի վեր, յայտարարում է Gobineau-ն, ծայրայեղ հակադրութիւնները նւազել են, փոքրերը աճել են:

Վիթխարի կաթնասունները, մեծամեծ օձերը, հսկայական խոյե-մորթիները՝ այս բոլորն անյայտացել են իրենց համապատասխանող բուսա-կանութեան հետ²⁾:

Կեանքի յառաջադիմութիւնը հակառակ իմաստով է ընթանում: Նա կազմում է մի յարատև ընտրութիւն, որի հետևանքով տեղի ունի ընդհանուր նկարագիրների յաջորդական մեկուսացում. նրանք, որ աւելի այգպիսին են, անյայտանում են առաջինը, մինչ այն, որ էակը հասնում է մեկուսացման և յատկորոշման ամենաբարձր կէտին: Դրանից յետոյ է միայն, որ բաղիւնք է

1) C. Lombroso. «Le Crime, Causes et Remèdes». ch. VII, p. 105. Paris, 1907.

2) C-té de Gobineau. «Mémoire sur diverse manifestation de la vie individuelle», p. 230. Paris, 1935.

ստացւում: Չարդացումը կանգ է առնում, որովհետև նա լրիւ է, այն պարագաների վերաբերմամբ, որոնց մէջ նա առաջանում է և լուծման նշաններն սկսում են երևալ¹⁾:

* * *

Բնութեան ձևերի և էակաների ստեղծագործութիւնը անսահման շարունակութիւնն է. Սահմաններ ունի նա՝ Պիտի կարծել, որ նա սահմաններ ունի:

... Հետաքրքրական է դիտել, յայտարարում է Մ. Մեթերլինկը, որ մարդու յայտնելուց ի վեր բնութիւնը չի ստեղծել նոր ձևեր: Մեծ թւով կենդանիներ և բոյսեր անյայտանում են վերջնականօրէն և չեն փոխարինուում, կարծես այն փառահեղ ու գերազանց ճիշդը, որ մասակարարում է, սպասուել է իր ետանդն ու երևակայութիւնը²⁾:

Նշանակալից է, որ մեր երկրի վրայ մարդու յայտնելուց ի վեր, — շարունակում է Մ. Մեթերլինկը, — բնութիւնը այլևս ոչինչ չէ հնարել, որովհետև յաւիտենութիւնից ի վեր ամէն ինչ հնարւած է³⁾:

* * *

Բնութեան խորհուրդներն անհասկանալի են: Այն չնչին ծանօթութիւնը, որ մենք ունենք դեռևս, օրէնքները, որ կառավարում են տեսակների հոլովոյթը, — ճշտօրէն դիտում է դոքտ. Maxwell-ը, — մեղ դնում են դժւար հաշտեցնելի մի քանի ընդհանուր իրողութիւնների առաջ: Բնութեան թագաւորութիւնները անբացատրելի են:

Ինչ՞ե՞ս համար է կեանքը երկճեկել բուսական և կենդանական ձևերի մէջ, Ինչ՞ե՞ս համար մենք գտնում ենք դեռևս իրար կոզքի գոյութիւն ունեցող՝ որդատեսակ, ճառագայթաձև և խեցեղատան կենդանիներ և այլն...

Ինչ՞ե՞ս համար միջատների աշխարհը միացնում է այնքան կատարելութեանը այնքան սահմանափակում: Հասել են ընկերային հետաքրքրական ձևերի, ուր կարգն իշխում է ինքնօրէն, բայց ուր անհատի նախաձեռնութիւնը անյայտացել է՝ յափշտակելով յառաջադիմութեան ամէն յոյս: Ինչ՞ե՞ս համար միենոյն ընդլրին բնութիւնը այս տարրեր լուծուեցներն է տեսլ⁴⁾:

1) C-té de Gobineau. «De la vie individuelle», p. 221, Paris.

2) M. Maeterlinck. «La Grande Féerie», X, p. 116.

3) M. Maeterlinck. «Devant Dieu», p. 155-156.

4) Dr. J. Maxwell. «La Divination», p. 273-274.

ՄԱՐԴ-ՄՐՋԻՆՆԸ ԵՒ ՄԵՏԱՖԻՋԻԿ ԿՄՐՑԵՐԸ

Ասացինք, որ ոչինչ յայտնի չէ սպրողների ձեռքի յաջորդականութեան մասին: Այդ յետադարձութիւնը կամ հասակի նւագումը չի կատարել մեծ դարձածքներով. գործնականում՝ միայն թեթեւ ձեւափոխութիւններ կը կատարեն, ամէն մի դարի համար անդադրիօրէն, այն աստիճանի, որ յաճախ անհնարին կը լինի ասել թէ ո՞ր է վերջանում բնականոն մարդը կամ տեսակը և ո՞ր է սկսում յաջորդը (անբնականոն մարդը կամ մրջինը):

Պիզմէները, թզուկ ժողովուրդը, — որ հնում սպրում էին դանազան երկրներում, յատկապէս Նեղոս գետի ափերին մօտ, — բոլորն էլ մարդկանց զաւակներ էին: Նրանց անունն անցել է լեզուի մէջ և պիզմէ են ասում փոքր հասակ ունեցող մարդկանց. բայց բոլոր մարդիկ պիտի փոքրանան, շատ փոքր հասակ պիտի ունենան... Ինչպէս մրջինները:

* * *

Եւ ահա, միլիոնաւոր տարիներ անցնելուց յետոյ, մարդը գտնում է չորքստանի... Նա քայլում է չորս ստքով, նա ալիս թեք չունի, նա միայն չորս ստներ ունի: Մարդն արդէն դարձել է անասուն, բայց իսկական ատուժով:

Այս իրողութիւնը կը լինի ամենամեծ զէպքը Մարդու և երկրագնդի պատմութեան մէջ: Սա կը լինի մարդու անկումը և Մարդ-Մրջինի յայտնուելը:

* * *

Բայց մի կարևոր հարց է գրւում թէ՛ չորքու անմահութիւնը, Աստուծոյ գոյութիւնը, լրտի և վատի խնդիրը և վախճանական պատճառների բոլոր հարցերը և այլն, յետադարձութեան կամ Մարդ-Մրջինի այս քրքրանքով մէջ, ի՞նչ կը լինեն:

Մարդ-Մրջինի հողին անմահ կը լինի, Ամէն մի Մարդ-Մրջինի մօտից յետոյ ո՞ր կը գնայ հողին, կը ջանայ Մարդ-Մրջինը սրեկ բան սովորել գոյութեան աստիճանի և վերջին ճշմարտութիւնների մասին. այսինքն կեանքի ծագման և վախճանի, Տիեզերքի մտադրութիւնների և նպատակների, այս խորհուրդների մէջ մարդ-մրջինական դերը մասին:

Այս հարցերն այնքան խորն են՝ թինչև՝ հարցեր՝ որ վախենում են նրանց շօշափել և պատասխանել:

Այլ սակայն կասկածից դուրս է, որ Մարդ-Մրջինը կը լինի նոյնպէս Մարդ-մետաֆիզիկ. իր միտքը նոյնպէս կը շարձարի վախճանական հարցերով, ճակատագրի «անիծեալ հարցեր»ով:

Այս առթիւ պէտք է գիտնել Մ. Մեթերլինկին, որ ճանաչում է ծաղիկների, մրջինների և տերմիտների հողին:

Եթէ կարողանային գտնել տիեզերքի թինչու... ն, յայտարարում է նա, — այս թինչու... ն է որ նրան պիտի փոխարինէր:

* * *

Ոչկլը, լուռն, մըջլունը իրաւունք չը պիտի՞ ունենան միևնոյն հար-
ցիքը դնելու: Ո՞վ յողնութիւն յանձն կանսի դրան պատասխանելու¹⁾:

Կարծում էք որ ժայռը, ծառը, անասունը դանդաղուում են տիե-
զիբքից, ընտթիւնից, Ասածուց և կեանքից ոչինչ չը հասկանալու համար:
Ի՞նչ իրաւունքով ենք մենք պահանջում մենակ լինել գաղտնիքի մէջ և ին-
չնէ ենք կարծում թէ մենք յուսավորելի ենք, որովհետև մեր գոյութեան
ընթացքում, և հաւանաբար նրանից յետոյ, մենք չենք հասկանում և չենք
հասկանայ ոչինչ:

Այսպէս է խորհում Մ. Մեթերլինկը²⁾:

Ո՞ր արարածը,—յայտարարում է A. France-ը,—իրեն չի կարծում
Տիեզիբքի վերջը և չի վարում որպէս այդպիսին՝ Դասինչև իսկ կեանքի
պայծառն է: Մեզնից ամէն մէկը մտածում է, որ աշխարհը իրենով է վեր-
ջանում, Անասունները նոյնպէս: Չը կայ մի կենդանի, որ չը զգայ իր մէջ
գերագոյն վախճանը, որին ձգտում է ընտթիւնը³⁾:

ՄԱՐԳ. ՄՐՁԻԻՆԻ ՎԵՐՁԸ

Մենք մարդու ապագայ ճակատագրի մասին արտայայտեցինք մի
կարծիք՝ դիտակտն և վերլիտսոփայական մի վարկած (hypothèse) անելով, որ
Մարդը մի օր պիտի իջնի մի էակի՝ ինչպիսին ժամանակակից մըջլունն է՝
Մարդ-Մըջլունի, Բայց եթէ բերւած ապացոյցները բաւարար չեն՝ մեզքը մերը
չէ, վասն զի գիտութիւնն ինքնին այս հարցի վերաբերմամբ հաստատուն չէ,
որովհետև նրա ամենակարկառուն շերկայացուցչները յայտարարում են, որ
մարդկային առաջին տիպարների մնացորդների ուսումնասիրութիւնը,—ան-
կեղծօրէն յայտարարում են ընտզէտները,—բախուում է որոշ թւով դժա-
բութիւնների:

Ամենից առաջ՝ այդ մնացորդները մեծ մասը շատ թիրի է, շատ
քիչ կան ձեռքի տակ և բոլորն էլ տարբեր տիպարներ են, «շատ դժւար է
համապատասխան բրածոները վերականգնել մի որոշ օտարճանի ճշտութեամբ:
Մի այլ դժւարութիւնն էլ որոշելն է թէ միևնոյն վայրում գտնւած մնա-
ցորդները միևնոյն անհատին և կամ միևնոյն տեսակի՞ն են պատկանում:
Վերջապէս մարդբարանները հազարկուտ կերպով ընդունակ են որոշելու տա-
րիքը, որին պատկանում են քարանձաւներում գտնւած մարդկային բրածո-
ները: Գալով ջրոզող հողերում գտնւած մարդկային բրածոներին՝ հազիւ կա-
րողանում են որոշել մտաւոր ժամանակաշրջանը: Շատ տիպարներ ճանաչ-
ւում են միայն մէկ աստիճով, ոմանք ծնօտի բիկորով, շատերը՝ գանգից ան-

1) M. Maeterlinck. «Devant Dieu». p. 44.

2) M. Maeterlinck. «Devant Dieu». p. 49.

3) A. France. «Le Jardin d'Épicure». p. 80.

շատուած սակրով¹⁾);

* * *

Գուցէ շատ հետուն ենք դնացած լինում վարկածները մարդու, բայց մենք խորհում ենք, որ մենք կարող ենք առնւաղն ստուգիւ մականբերել, որ մարդը չորքոտանի պիտի դառնայ. ինչպիսին իր նախնիքներն էին: Եւ նա նոյնպէս, ինչպէս որ Ռոզեպիայի ժամանակներում, երբ, ըստ Pycrat-ի, մարդը քայլում էր կէս-կքած, կը քայլէ ինչպէս ժամանակակից կենդանին²⁾);

* * *

Պիտի դիտել, նախնական Մարդ-Հսկայի վերաբերմամբ, որ գործընթացի ուղեղի առաւելագոյն չափն է 450-ից 550 կամ 600 խորանարդ սանտիմետր:

Ժամանակակից մարդու ուղեղը 1000-ից 1500 խոր. սանտիմետր է, սովորաբար՝ 1400 խ. ս.³⁾; Մինչդեռ Նէանդերթալի մարդու գանգային կարողութիւնը 1600 խ. ս. է: Ժամանակակից մարդը գուցէ շատուիլը չէ Նէանդերթալի, Ռոզի վիայի մարդու: Broom-ը միևնոյն միտքն է արտայայտում:

ՄԱՐԳ-ՄՐՋԻՆԸ, ԵՒ ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Վերոյիշեալ բոլոր վատտերից եզրակացում է, որ Մարդը պիտի յանդի Մարդ-Մրջիւնի, և այլևս չը պիտի կարողանայ կանգուն մնալ և քայլել իր սրունքները վրայ յեցած:

Բայց ի՞նչու առէք հարցնելու. այդ վիճակում նա երջանիկ կը լինի: Նա գոհ կը լինի ինքն իրենից և իր վիճակից:

Նա կը լինի,—ըստ Մ. Մեթելինկի,—գոհ և երջանիկ:

Բայց եթէ յառաջիկայ դարերի գիւտերն ու յայտնութիւնները եղակիօրէն չը բարելաւեն և չը ձեւափոխեն մեր հոգիներն ու մարմինները,—ասում է Մեթելինկը,—և առանց հաշի առնելու մի վերջամտացութեան աւելի ու աւելի անորոշ և անդենական խոստումներ, որոնք հաղարաւոր տարիներից ի վեր չեն պահած, իսկարծում եմ, որ մրջիւնը շատ աւելի նւազ դժբախտ է, քան ամենաերջանիկը մեր մէջ¹⁾);

* * *

Արդ, եթէ ժամանակակից մրջիւնը երկրպագի էակները մէջ ամենաերջանիկն է, ինչպէս ուրիշն Մարդը, հասնելով մրջիւնի վիճակին՝ Մարդ-Մրջիւնի՝ երջանիկ չը պիտի լինի:

1) Broom. «Les Origines humaines», d. 147.
2) Նոյն տեղը. էջ 164.
3) Նոյն տեղը. էջ 150.
4) M. Maeterlinck. «La vie des Fourmis». p. 234.

ՄԱՐԴ-ՄՐՋԻՆ

ԺԱՄԱՆ ԱԿՒԿԻՑ ՄԱՐԴ - ՀՍԿԱՆ

Մեր զաղափարի ամենահիմնական ապացոյցը. որ նախնական մարդը մի հսկայ էր, գտնուում է հետեւեալ նորագոյն գիւտերի մէջ:

1) Նախ «Իմաժ» հանդէսում կարգուում ենք.—

«Հսկաներ, Հնդկաստանում, Ժուրալպորի մօտերը, հնագէտները պիղուսների ժամանակ գտել են մի մարդու կմախք՝ աւելի քան տասը մեթր բարձրութեամբ, Այս հսկայ կմախքի շուրջ գտնուում էին այլ կմախքներ, որոնք պատկանում էին մէկ մեթր 50 սանթիմեթրից մինչև երեք մեթր հասակ ունեցող մարդկանց»:

Գիտունները դիտել են տալիս, որ այս ոսկերտտիքը պատկանում են Միոսէն գարաշըջանին, որը մօտաւորապէս տասը հազար տարւայ հնութիւն ունի. Նրանք, հաւանաբար, գլադիատորներ են եղել, որոնք կուէ ժամանակ մեռնելով՝ թաղել են միևնոյն տեղում:

Անցեալ և արդի պատմութիւնը յիշատակում է մի որոշ թւով հոչակաւոր հսկաների, բայց նրանցից ոչ մէկը չի հասել տասը մեթրի:

Իո.էի հսկան՝ Գոյանը, ձեռքը մեկնելով կարողացել էր հասցնել գետնից վեց մեթրի վրայ գտնուող մի գերանի. ուրեմն նա մօտաւորապէս հինգ մեթր հասակ ունէր:

Լոնդոնի Գիլգհալում գտնուում են հոչակաւոր Գոգ և Մագոզի պատկերները, որոնք, ասում են, ունէին չորս մեթր քսան սանթիմեթր բարձրութիւն:

Արդիական ժամանակներին գալով՝ յիշենք «Գարգիֆի հսկայ»ին, որին վերագրում են երեք մեթր քսանհինգ սանթիմեթր հասակ. նա ապրել է նախորդ դարու սկզբին, իսկ այս օրերս ապրողներից՝ Մոթթանան, Հանկէ Սմիթը և Ելիֆթորը Տոմսոնը, երկու ամերիկացիները, որոնք երկու մեթր 35 սանթիմեթր են և երկու մեթր 60 սանթիմեթր¹⁾:

Սրանք թզուկներ են Ժուրալպորի կմախքների կողքին¹⁾:
2) Մեր ժամանակների մարդ-հսկան, ըստ ուսսական «Ռուբէժ» հանդէսի, Ռոբերտ Ուալուան է, ճարտարագետ Հարոլդի տղան, որ ապրում է Ալթոն քաղաքում (Իլլինուէի նահանգ, Ամերիկա):

¹⁾ «Images» № 683, 1 e Gaire (Egypte), 12 octobre, 1942.

Ռոբերտը, յայտարարում է Գ. Օլբը, իր քսանմէկ տարիքում ունի 8 ֆուտ և 8¹/₂ դիւիմ հասակ, ծանրութիւնը՝ 491 փունսը՝

1839 թիւն նա համարուում էր աշխարհի ամենաբարձրահասակ մարդը՝

Նրանից առաջ՝ իրլանդացի Շարլ Բայրոնն էր, որի հասակը 8 ֆուտ և չորս դիւիմ էր. նա մեռաւ 1783 թիւն, 23 տարիքում. Տգէտ բժիշկները հասակի այս հսկայ զարգացումը վերագրում են մաղասագեղձերին՝ (pituitary gland):

Սակայն, իսկական պատճառը գտնուում է Հսկայ Նախապագերի այն հազարաւոր սերմերի սերմի մէջ, որը թագնւած է մինչև այժմ մարդկային որևէ օրգանիզմում:

ՄԱՐԻ - ՄՐՁԻԻՆԻ ՀՈԳԵԿՈՆ ՅԵՏԱԿՈՐՁԸ

Մարմնի ֆիզիքական յետադարձը կը հասնի նաև հոգուն. հոգունը նգունակութիւնները կը թուլնան. մարդու միտքը, յիշողութիւնը, ուշադրութիւնն ու զգայնութիւնը, դարերի ընթացքում, կը թուլնան:

Այս թուլացումը տակաւ առ տակաւ, յետադարձօրէն կը հաստատուի անհատի մէջ այն չափով, որ նա կը մօտենայ Մարդ - Մրջիւնի վիճակին, այս հոգեկան թուլացումը կը սկսի, առաջին հերթին, կամքի անյայտացումով:

Քայքայումը նոյնպէս յառաջատուական է. ըստ Թ. Ռիբօի, հոգեբանութեան մէջ քայքայման օրէնքը հետևում է բարդից պարզի ընթացքին, կամայինից մեղեմականին, որ հոլովոյթի վերջին եզրը—քայքայման առաջինն է:

Այս օրէնքը կիրառուում է նաև մկանների շարժման կազմալուծման մէջ ²⁾:

Նւ ինչպէս որ հոլովոյթը, կամ հոլովոյթի օրէնքը, ըստ Հ. Սպինսերի և Կոնտի, անցնում է պարզ վիճակից բարդ վիճակը, այլատարրից դէպի միատարրը, այդպէս էլ յետադարձութիւնը, մի հակառակ երթով, բարդ վիճակից անցնում է դէպի պարզը, բարդից տարրականը:

Հոգեբանական կեանքում՝ պարզ ոէֆլէքսից հասնում են կամքին և հակառակը, կամքի անյայտացումից աստիճանաբար կը հասնեն պարզ ոէֆլէքսին:

¹⁾ «Roubeje», 30 sépt. 1939, Kharbine, № 40 (609):

²⁾ «Les Maladies de la volonté» p. 161.

* * *

Բայց ինչո՞ւ համար հոգեկան յետադարձը մարդկային օրգանիզմի մէջ կը սկսուի կամքի անյայտացումով:

Վասն զի քայքայման օրէնքը, որ կենսաբանական մի մեծ օրէնք է, ցուցնում է, որ օրգանիզմի մէջ ծնւած վերջին գործառնութիւններն են որ առաջին հերթին այլասեւում են:

Արդ, մարդու մէջ ծնունդ առած վերջին գործառնութիւնը կամքն է. հոգու վերջին յատկութիւնը:

Անհատի մէջ,—յայտարարում է յայտնի հոգեբան Թ. Ռիբօն,— մեքենական շարակարգումը նախորդում է այն շարակարգութեան, որ ծընուել է ցանկութիւններից և կրքերից, որ ինքնին նախորդում է կամային շարակարգութեան, որի ամենապարզ ձևերը նախորդում են ամենաբարդներին: Տեսականների գարգացման մէջ (թէ ընդունում ենք հոլովոյթի տեսութիւնը), դարերի ընթացքում, գործունէութեան միայն նսեմ ձևեր գոյութիւն ունէին. յետոյ միայն, շարակարգութիւնների բարդութեան աճումով մի ժամանակ եկաւ, երբ կամքը եղաւ¹⁾:

Այսպիսով, քայքայման այս օրէնքը կիրառւում է նաև մարդու հոգեկան կեանքում: Կամքի անյայտացումից յետոյ մարդու մէջ կը սկսի մղունների իշխանութիւնը: Մղունների իշխանութեան վերադարձը, հոգու մի քանի փայլուն յատկութիւններով ուղեկցւած,—ասում է նա,—ինքնին ուրեմն մի յետադարձ է¹⁾:

* * *

Յետադարձութիւնը, ինչպէս տեսնում ենք, լատիներէն նշանակում է regressus. այսինքն շուտ եկած իր քայլի վրայ որը ինքն իր վրայ է դառնում: Սա մի հիւսւածքի, մի անհատի վերադարձն է դէպի նախնական, նւազ կատարեալ վիճակը: «Ամէն ինչ որ կատարելագործւում է պրոգրէսով,—արդէն ասում էր մեծ Պասկալը,—ոչնչանում է նոյնպէս պրոգրէսով»²⁾:

Նա կը սկզբնաւորուի կամքի մէջ՝ մի տեսական կամքի անհնարինութեամբ: Մի տեսական ուղադրութեան անհնարինութիւնը, յայտարարում է նոյն Ռիբօն, մէկն է հոգու թուլացման առաջին ախտանիշներից, լինի

1) Th. Ribot,—«Les Maladies de la volonté» p. 165 Paris, 1931.

2) Pascal «Pensées», p. 93.

ժամանակաւոր՝ ինչպէս տենդի մէջ, լինի յարատե՛ ինչպէս խնթութեան մէջ¹⁾։

* * *

Պէտք է, սակայն, դիտել որ ապագայ-մարդը, առաջին հերթին, նախ քան որ իր կամքը կանայտանայ իր օրգանիզմից, հասած կը լինի իր քանական լեզւին. բարբառին, և ապա իր զգացական լեզւին. արտայայտելու ընդունակութիւն, բառ արտասանել, նա, մէկ խօսքով, զրկւած կը լինի խօսքից։

Մարդ-մըջիւնը, հետևաբար, լեզւից զրկւած, անկարող վիճակի մէջ դրւած կը լինի հազորդելու իր մտածումներն ու ցանկութիւնները, նա հաւանօրէն պիտի վարւի շարժումներով, եւ, բազմավիւրին դարերի ընթացքում, նա կապրի կենդանիների պէս, կամ մըջիւնների՝ իր ստորին հղջայրաների պէս։ Ի՛նչ սարսափելի վիճակ ապագայ-մարդու համար։ Ի՛նչ խորհրդաւոր ողբերգութիւն իր հոգու համար։ Ի՛նչ երջանիկ է ժամանակակից մարդը, որ հեռու է այդ ապագայ-ժամանակներից։

* * *

Բայց ամենախորը և միաժամանակ ամենագեղեցիկ մտքերը մարդու որդիների ճակատագրի և ողբերգական վախճանի մասին արտայայտւած են իմաստունների իմաստունի՝ Էկլէզիաստի (ժողովող-Սողոմոնի) կողմից, որը մինչև իսկ կասկածի է հիթարկում մարդու հոգու անմահութիւնը, որը նրա կողմից դիտւած է որպէս համարժէք անասունների հոգուն։ Մեղանքողիայի մի խօրը գիւթանք, սթափումի մի նրբին բոյր և յուսահատութեան մի իմաստութիւն է բուբում իր իմաստասիրութիւնից՝ Մարդու կեանքի մասին։

Նա խորապէս յայտարարում է մարդու որդիներին.

«Են ասացի ի սրտէ՛ մարդու որդիների մասին, որ Աստուած նըրանց կը փորձի, և նրանք կը տեսնեն, որ իրենք ոչ այլ ինչ են եթէ ոչ անասուններ։ Քանզի մարդու որդիների ճակատագիրը նոյնն է ինչոր անասունինը և նրանք միևնոյն ճակատագիրն ունեն — ինչպէս որ մեռնում է մէկը, նոյնպէս և մեռնում է միւսը, բոլորը նոյն շունչն ունեն և մարդու գերազանցութիւնը անասունի վրայ՝ ոչինչ է. վասն զի ամէն ինչ ունայ նութիւն է։

Ամէն ինչ գնում է միևնոյն վայրը. ամէն ինչ փոշուց է կերտ-

¹⁾ Pascal «Pensées», p. 93.

ւած և ամէն ինչ փոշուն է վերադառնում:

Ո՛վ գիտէ թէ Մարդու որդիների շունչը վեր է ամբառնում և թէ անասուններին իջնում է վար՝ հողի մէջ..

«Ահա այն ինչ որ գտել եմ ես,—ասում է Էկէզիասաւը,—իրերը մէկ առ մէկ քննելով՝ իմաստը գտնելու համար. անա ինչ որ իմ հողին փնտռում է դեռևս»¹⁾:

ՄԱՐԳ-ՄՐՋԻՆ

ՄԱՐԿՈՒ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՆՅԱՅՏԱՑՈՒՄԸ ԵՐԿՐԻ ԵՐԵՍԻՑ

Մի շատ կարևոր և ծանր հարց է դրւում: Մարգ. մրջիւնը յաւիտենապէս կը մնայ երկրի երեսին: Նա չի՞ անյայտանայ երկրի երեսից: Երկրի վրայ ոչինչ չէ և չի լինի յաւիտենական:

Կակաները, բոյսերը և հանքերը, բոլորը պիտի անյայտանան երկրի երեսից: Բայց երկրագունդն էլ վիթխարի Տիեզերքի մէջ յաւիտենական չէ. նա նոյնպէս, իր հերթին, վերջնականօրէն պիտի չքանայ:

Տեսակը,—յայտարարում է J. Maxwell գիտունը,—անասման տեսողութիւն չունի. նա անյայտանում է, պահպանւում կամ ձեռփոխւում ²⁾:

Բոյսերը, կենդանիները և կամ թռչունները որ ապրել են երկրի երեսին, դարերի ընթացքում՝ էականի կհանքի հոլովոյթում՝ վերջնականօրէն անյայտացել են երկրի երեսից:

Մարգկային տեսակի ծագումը,—յայտարարում է նոյն դոքտ. J. Maxwell գիտունը,—այսօր մեզ թւում է հոլովոյթի գործ: Տեսակները ձեռւորում, ձեռփոխւում են, յարմարելու համար: Այս յարմարացումը միայն չի ձգտում տեսակի պահպանման. նա ձգտում է իրականացնելու իր կատարելագործումը. նա չի առջանում այլևս ֆիզիքական ոյթի դարգացման միջոցով:

Իրկրորդական շրջանի հսկայ կենդանիներն անյայտացան, միջին հասակով տեսակներն սպրեցին:

Կենդանին, որի գերակայութիւնն հաստատւած է, ֆիզիքապէս զինւած չէ, ինչպէս որոշ այլ ողնաշարաւորներ, նա հոլովոյթի է ենթարկուել

1) Ecelesiaste, 3—5, p. 657, 659.

2) J. Maxwell. «La Divination», p. 278 Paris.

բանականութեան իմաստով¹⁾։

* * *

Որմնք են ախ կենդանիները և բոյսերը, որ երկրագնդի պատմութեան մէջ գոյութիւն ունէին, և ներկայումս, այլևս գոյութիւն չունեն։

Այնքան շատ են նրանք, որ պէտք է ընտրութիւն կատարել։ Օրբինակի համար՝ անհետացած կենդանիների մէջ՝ մեծ սագը, որ Cnemidornis է կոչոււմ, նոյնպէս անհետացել է, և ուրիշ շատերը։

* * *

Մի կարեոր հարց է դրոււմ, էակների հոլովոյթի մէջ Մարդը, ինչեղով վերջինը, անհնակատարելագործւած և կատարեակ էակը, երկրագնդի վրայ էակներ յետաջրջման իբր հետևանք, պէտք է որ նոյնպէս անհրաժեշտաբար լինի վերջինը սերման աստիճանի մէջ, կամ անհետացման, կամ կլանման իր մօր՝ երկրագնդի միջոցով։ Այսինքն այդ աստիճանի մէջ բոլոր կենդանի էակները, բոլոր ստորին էակները պէտք է որ նրանից առաջ աստիճանաբար անհետանան երկրի մակերեսից։

Ճիշտ է որ մարդը վերջինը պիտի լինի իբրև հոգ մտնող, Որեւէ պատճառ չը կայ կարծելու, որ էակների յետաջրջութեան մէջ՝ դէպի իրենց ժազուժը և կամ նախնական վախճանը՝ նա վերջին անհետացողը կը լինի, որովհետև բնութիւնը բնաւ չի յարգոււմ երկրի երեսից էակներ և բոյսերի անհետացման հոլովութեան կարգը, Ինչպէս Որովհետև բոյսերի և կենդանիների շատ տեսակներ, որոնք երկրի վրայ յայտնուել են Մարդուց առաջ, վերջնականապէս անհետացել են՝ առանց որ սոլովութեան անխաղաղութեամբ կարգը պահպանուէր։

Անասուլ Պրանսը խորհոււմ է, որ նա, Մարդը, վերջին անհետացողը չը պիտի լինի։

Մարդկային տեսակը, յայտարարոււմ է նա, ընդունակ չէ անասման յառաջադիմութեան։ Իր զարգացման համար պէտք է կաշի, որ երկրի վրայ շրջապահան և քիմիական որոշ պայմաններու լինէր, որոնք բնաւ կայուն չեն։ Ժամանակ կաշի, եթէ մեր մոլորակը յարմար չէր մարդուն, նա շատ տաք և գաղջ էր։ Մի ժամանակ կը գայ, երբ-նա մարդուն չի յարմարի, նա կը լինի շատ սառը և շատ չոր։ Արևը կը հանգչի, անխուսափելիօրէն, մարդիկ կանհասանան ի վերջոյ, վերջինները կը լինեն նոյնքան

¹⁾ J. Maxwell նոյն տեղը, էջ 273.

զուրկ և թանձրամիտ՝ որքան առաջիններն էին: Նրանք մոռացած կը լինեն բոլոր արեւատներն ու գիտութիւնները: Նրանք թշուառէն կը տարածւեն անձաւներում, սառցարանների ափերին, որոնք իրենց թափանցիկ զանգւածները կը սահեցնեն ջնջւած քաղաքների աւերակների վրայ, ուր այժմ մտածոււմ են, սիրում, ստապուում, յուսում: Բոլոր կնձնիները, թմբիները կը մեռնեն ցրտից, և սառած երկրի վրայ միայն եղևնիները կ'իշխեն: Այս վերջին մարդիկ յուսահատ, առանց նոյնիակ այդ գիտնալու, մեզնից ոչինչ չեն իմանայ, ոչինչ մեր հանճարից, մեր սիրուց, և սահայն նրանք կը լինեն մեր նորածին մանուկները, արևնը մեր արևնից: Արքայաշուք բանակահանութեան մի թոյլ ֆաղցր, նրանց թանձրացած պանդերի մէջ տատանելով, դեռ որոշ ժամանակ նրանց համար կը պահի իշխանութիւնը արջերի վրայ, որոնք բազմացած կը լինեն նրանց անձաւների շուրջ: Ժողովուրդներն ու ցեղերը անհետացած կը լինեն ձիւնի և սառոյցների տակ՝ հին աշխարհի քաղաքների, ճամբաների, այգիների հետ...

Մի օր, մարդկանց վերջինն իր հուսկ շունչը կաւանգի՝ առանց ասելութեան ու սիրոյ՝ դէպի թշնամի երկինքը:

Այսպէս է խորհում մեծ քերթող-իմաստասէր, մեծ հեզնոզ Անատոլ Ֆրանսը:

ՄԱՐԴ. ՄՐՋԻԻՆԻ ՎԱԽՃԱՆԸ

Մարդը, ուրեքն, դարերի վախճանում, կը մեռնի ցրտից՝ սառած երկնքի տակ: Ո՛չ, երբեք, Նա, ընդհակառակը, դարերի ընթացքում կը փոքրանայ իր հասակով: Սև նա, դարերի վախճանին, կը դառնայ փոքր, շատ փոքր, աւելի փոքր քան այժմի մրջիւնները: Նա, գուցէ, նոյնիակ աննկատելի կը դառնայ:

Բայց Մարդ-մրջիւնը յաւիտենապէս կը ֆանջ երկրի վրայ: Ո՛չ, նա նոյնպէս վերջնականօրէն և անապառ լպիտի անյայտանայ երկրի երեսից: Նա կը մտնի երկրի մէջ, ուր և կանհետանայ վերջնականապէս:

* * *

Մենք այնպիսի մի ժամանակաշրջանում ենք, որ այլևս որևէ պատնէշ գոյութիւն չունի օրգանական և ոչ-օրգանական կեանքի մէջ, զգայականի և ոչ զգայականի նիւթի և ոգու միջև: Այլևս տարբերութիւն չը կայ հանքային և բուսական, կենդանական և մարդկային կեանքի մէջ: Նրանք խառնուած են, միացած. Գոյութիւն ունի միայն կեանք...

Մարդը Տիեզերքում, յայտարարում է աստածային Պատկալը, ոչ այլ ինչ է, եթէ ոչ ամէն ինչ և ոչինչ: Ո՛չ, նա դեռևս ամէն ինչ է, Մարդ է. բայց բազում միլիարդ դարերից յետոյ նա միայն Մարդ Մըջիւն է. սրբ: Բայց նա կը մնայ Տիեզերքում որդի վիճակում: Նա աստիճանաբար և իրեն համար անզգալիօրէն կը հասնի կենդանի նիւթի վիճակին, Ոչնչի վիճակին. նա կը միանայ Կեանքի հետ. նա կը լինի հող ու ցիւր, Մէկ խօսքով՝ նա կը խառնուի իր Մայր Հողի հետ: Որովհետև նա անհրաժեշտաբար, ճակատաւրբօրէն և արամաբանօրէն պիտի մուտք գործի Տիեզերքի Յատկանական Լոռութեան մէջ: Որովհետև գրեած է՝

Ամէն ինչ որ կայ երկրի վրայ, պիտի անցնի.

Միայն Աստուծոյ դէմքը պիտի մնայ մշտապէս:
Նա մարդուն հողից ձեւաւորեց՝ բրուտի նման ¹⁾:

Ահա Մարդու Խորհուրդը:

Սա է երկրի վրայ Մարդու «Խորհուրդներն» ամենամեծը, ամենախորը և ամենաողբերգականը:

«Հող է իր և հող դարձիւր»:

* * *

Որովհետև նախնական կամ առաջին վիճակը էակներն, օրգանիզմներն, իրերն և նոյնպէս Մարդուն՝ տարբարուածելն է, կազմալուծելը և փոշու վերածելը: Ուրեմն Մարդու համար՝ դարձ դէպի յետ:

Պէտք է արեւաբար խորհել Մարդու այս Խորհուրդի խորութեան վրայ:

Իեղճ Մարդ, Որքան խորհրդաւոր ես դու: Որքան մեծ ես դու Տիեզերքում: Ոչինչ ես դու: Դու հող ես, որդ... և յետոյ Ոչինչ, Ոչինչ և Ոչինչ...

ԵՐԳՐԱՎՈՒՆԴԻԸ ԱՌՈՒՅՑ ՄԱՐԿ - ՄՐՋԻՒՆԻ

Արդ, մի ծանր հարց է դրւում. երկրի երեսից Մարդ-Մըջիւնի վերջնական անյայտացումից յետոյ ի՞նչ կը մնայ երկրի վրայ: Եւ ի՞նչ ճակատագիր կունենայ նոյն ինքը երկիրը:

Երկիրը. հաւանաբար, կը լուծուի, կը կազմալուծուի, կը տարբար-

¹⁾ Ch. L. V. «Les Misericordieux», p. 454.

բազադրւի. վերածւելով իր նախնական տարրերին, վերածւելով փոշու՝ Տի-
եզերքի անասմանութեան մէջ, մասը կը կազմի այն մոլորակների, որոնք
արդէն իսկ գտնուում են Յաւիտենական Լուսթեան վիճակում:

Բոլոր Մարդու-որդիներն էլ այսպէս մուտք կը գործեն Յաւիտե-
նական Լուսթեան մէջ:

Ի՞նչ խորհուրդ. ի՞նչ սոսկում:

* * *

Սակայն Մարդ-Մըջիւնի երկրի երեսից լիովին անյայտանալուց
յետոյ, կեանքը կը շարունակւի՝ երկրի վրայ: Անշուշտ:

Մի օր, երկրի վրայի վերջին մարդը, — յայտարարում է Ա. Յրան-
սը, — առանց ատիլութեան ու սիրոյ, իր վերջին շունչը կը փչի դէպք դժբախտ
երկինք, վերջին շունչը մարդկային: Եւ երկրագունդը կը շարունակի պար-
տել, լուռ տարածութիւնների մէջ տանելով մարդկութեան անխնայները, Լո-
մերոսի վիպերգներն ու յունական մարմարների օգոստափառ բեկարները՝
փակցրած իր սառցէ կողերին: Եւ ո՛չ մի միտք այլևս չի նետւի դէպի ան-
հունը այս երկրագնդի կրճէից, ուր հողին այնքան յանգուզն է եղել, կամ
սո՛ւնւազն ձրկէ մատծում մարդկային: Քանի որ, ճի՛կ կարող է ստել թէ այ-
նուհետև մի այլ միտք գիտակցութիւն չի առնի ինքն իրմից, և թէ այս
գերեզմանը, ուր մենք բոլորս կը քնենք՝ չի՞ դառնայ օրբանը մի նոր հո-
գու: Ո՞ր հոգու՞ չգիտեմ: Գոցէ և միջատի հոգու: Մարդու կողքին հակա-
ռակ մարդուն, միջատները, օրինակ մեղունները և մըջիւնները արդէն հը-
րաշքներ են գործել: Ստոյգ է, որ մըջիւններն ու մեղունները մեղ պէս կա-
մենում են լոյս և ջերմութիւն: Բայց կան անողնայարներ նուազ պաղ. ճի՛կ
գիտէ թէ ինչ ապագայ է պահւած նրանց աշխատանքին ու համբերութեան:
Ո՞վ գիտէ թէ աշխարհը լաւ չի դառնայ նրանց համար, երբ նա կը դադարի
մեղ համար լինելուց: Ո՞վ գիտէ թէ մի օր նրանք գիտակցութեան չեն դայ
իրենց և աշխարհի համար: Ո՞վ գիտէ թէ նրանք իրենց հերթին չեն գովա-
բանի Ասածուն¹⁾:

III

ՖԵՂՆԵՅԿՈՒԹԻՒՆԸ ԵՈՐՀՈՒՐԵՆԵՐԻ ՊԵՐՏԻՋՈՒՄ ԵՒ ՄԱՐԴ-ՄՐՋԻՒՆԸ

Մարդ-միջատ: Մարդը որպէս Մըջիւն: Ի՞նչ հակասութիւն: Մար-

¹⁾ A. France, — «Le jardin d'Épicure», p. 21—22.

գու տրամաբանութեան ինչ արտաոց եզրակացութիւն: Ինչ տարօրինակութիւն մեր մտածողութեան: Բայց ինչ ճշմարտութիւն, ինչ խորհուրդ, ինչ սարափ:

Շտապինք տեսնու, որ մարդը մի ծառ է շուռ տւած՝ «իր արմատը վեր է, ճիւղերը՝ ներքեւ», ասու՛մ է Պլատոնը:

* * *

Բայց ինչու համար, ո՞վ Մարգու որդի, մարդու ապագայ ճակատագրի վրայ այս խնդուճներից յետոյ՝ տխրութեան մի սոււր պարուրեց քո միտքն ու հոգին: Ինչու համար այդ սև թախիծը: Բայց այդ մտայլ մտքերը թող մեծաւոր նորնողին: Այդքան մի խորհիր քո նմանի ճակատագրի վրայ:

Ներկան երբք անտեսելի չէ, որովհետև կեանքի արժէքը ներկայի մէջ է, այն ժամու մէջ որ անցնում է: Եւ ինչու համար ուրեմն դու փչացնում ես նեկայ պահը այն պահի պատճառով որ գալու է և որը բնաւ քո կամքից չէ կախւած:

* * *

Քո միտքը, իսկապէս, ո՞վ երագի էակ, լոյսի պէս թռչում է դէպի գալիք դարերի անկունը. նա ճամբորդում է անասնման տարածութեան և յաւերժական ժամանակի մէջ, բայց քո մարմնական ծրարդ՝ մարմինդ անկարող է աղբիլ քան ներկայի տնողութեան մէջ. մի ակնթարթ ապրել Թախտիսութեան մէջ, Խորհուրդների Թախտիսութեան: Եւ կեանքի այս կարճ պահը, որ քեզ տնում է զգալու համար խորհուրդները և տեսնելու կեանքի հրաշագան գեղեցկութիւնները՝ թող որ անցնի ուրախութեամբ:

Թող Մարդը չտխրի որ մի օր, շատ դարեր, միլիոնաւոր ու միլիարդաւոր տարիներ յետոյ իր գալոց-որդիները կը ձեւափոխւեն և կը վերածւեն շատ փոքր, անասնմանօրէն փոքր էակների:

Թող նա, ընդհակառակը, ուրախ լինի լոյսի աշխարհում, քանի դեռ նա Մարգ է և ոչ Մարգ-Մրջիւն և իր տրամադրութեան տակ ունի շատ ժամանակ՝ ապրելու, սիրելու, խորհելու կեանքի գեղեցիկ և գաղտնախորհուրդ բաները:

Թող քո սիրտը, ո՞վ թառամելիք ծաղիկ, բնդգրկի ներկայի բոլոր մարդկային էակների ամբողջականութիւնը, քո մահւան եղբայրների, և թող նա ապրի եղբայրօրէն նրանց հետ՝ առանց մտածելու ապագայ էակների ողբերգականօրէն ծիծաղելի ճակատագրի մասին:

Թող նա նայի բնութեան և տիեզերքի գեղեցկութիւններին Մար-

դու աչքերով:

Թող նա քնքշորէն ժպտայ այն կնոջը, որը գեռու ոչ կին-Հսկայ է, ոչ կին-Մըջիւն:

* * *

Բողւէրը, այս մեծ քերթող փիլիսոփան հաստատօրէն հաւատում էր Մարդ-Հսկաների և կին-Հսկաների իրական դոյութեան, մեր նախնիքներին:

Այս հաւատքը նրա մէջ այնքան խորն է, որ նա նոյն իսկ կը ցանկար ապրել կին-Հսկայի հետ:

Եւ այսպէս, նա մեզ յայտարարում է օփստսանքով.—

«Այն ժամ երբ բնութիւնն իր կարող աւելնով
Յղանում էր ամէն օր դաւակներ վիթխարի,
Կը սիրէի ապրել մօտը կին-Հսկայի,
Ոտքերին թազուհու՝ որպէս երգ հեշտալի:

Դիտէի իր մօրմինն հոգու հետ ծաղկելիս,
Եւ ազատ մեծնալիս իր սոսկախողերում,
Գուշակել թէ իր սիրտը մութ բոց է նիւթում
Այն գաղջ մշուշներին որ լողում են աչքերում.
Վարզել հանգստեամբ մեծաշուք իր ձեւերն,
Սողալ իր հսկայ ծնկների դառիվերն,
Եւ երբեմն ամռանը, երբ արեն հիւանդոտ
Յոգնատանջ մեկնում է նրան դաշտի տարածքում,
Քնանալ մեղկօրէն իր կրծքի սաւերում՝
Զերթ խաղաղ մի հիւզակ լեռներ լանջերում¹⁾;

Տրւած լինելով որ մենք, դժբախտաբար, զրկւած ենք ապրելու այդ կին-Հսկայի հետ, մեր նախնիքի, բաւականանանք ապրելու ժամանակակից կնոջ հետ, որը միակ աղբիւրն է մեր երջանկութեան և մեր դժբախտութեան: Որովհետեւ՝ «նա, որ մի կին է գտնում,—յայտարարում է իմաստունների իմաստունն, յափրացեալների յափրացեալը՝ Սողոմոն,—գտնում է երջանկութիւնը. դա մի շնորհ է, որ նա ձեռք է բերում Յաւիտենականից»²⁾;

1) Baudelaire, «La Géante» (Fleurs du Mal).

2) Ancien Testament «Proverbes» 18, 19, 21, 22 (p. 639I).

A * *

Մարդ Մըջիւնը պիտի կարողանայ իր սիրած կնոջն ասել այն, ինչ որ ասում էր Սողոմոնը իր սիրուհուն.—

«Քո այտերը գեղեցիկ են մանեակի մէջ, քո պարանոցը սիրուն է մարգարիտների շարքի մէջ:

«Պարանոցդ փղոսկրէ աշտարակի է նման, աչքերդ՝ Հեսրոնի լըճակներին. քիթդ Լիբանանի աշտարակին է նման, գլուխդ բարձր է որպէս Կարմէլ և գլխիդ մագերը՝ ծիրանին ¹⁾»:

Ապագայ մարդը երբեք չի կարող իր սիրուհուն խօսել ինչպէս հեշտալի Սողոմոնը, որովհետև կինը նոյնպէս պէտք է վերածւի կին-մըջիւնի, մանրադիր էակին. նա այլևս չի ունենայ գեղեցիկ պարանոց, սիրուն այտեր, գեղեցիկ կուրծք՝ զիտելու, սիրելու...

Այս երգումները, այս բոյրերը, այս համբոյրները, — հարցնում է քերթողը, — կը վերածնեն մի արգիլեալ վիճ մեր քննութիւններին, ինչպէս որ երկինք են բարձրանում վերաբերիտասարգացած արևները՝ խոր ծովերում լողանք առնելուց յետոյ.

— Օ՛ հրդում, օ՛ բոյրեր, համբոյրներ անվախճան.

Ո՛չ, նրանք երբեք չեն վերածնուի:

Փնտոթր նրանց, ի՞նչ Մարդ, գալիք դարերի մէջ մինչև այն օրը երբ դու գեռես մնում ես իբրև Մարդ:

Թող ժամանակակից մարդը գոհ լինի, որ ինքը գեռես Մարդ է և ոչ թէ Մարդ-մըջիւն. որ նա սիրում է Մարդու այս կեանքը:

* * *

Գիտցիր ուրեմն, ի՞նչ Մարդ, որ բնութիւնն այլևս քեզ չի տալիս այս կինը, որի աչքը կարող է իր սիրոյ անկեղծութեամբ քեզ զարմացնել:

Դու այլևս չես կարող, ի՞նչ Մարդու որդի, աշխնայիս տաք երեկոյին, շնչել բոյրը ջերմ կուրծքերի, երբ կարմիր, ճերմակ և դեղին վարդերի բոյրը, որ շրջում է օդում, ունեւնիք է ունեցնում:

Թող ժամանակակից կինն ասի, ինչպէս որ ասում էր Սողոմոնին իր սիրուհին.—

«Թող նա համբուրի ինձ իր բերնէ համբոյրներով,

«Զի քո սէրը աւելի գին ունի՝ քան գինին,

¹⁾ Cantique des Cantiques, p. 663, 667.

«Քո բոյրերը մի ծարաւի հաս ունեն,
«Քո անուռէ ունի մի բոյր տարածուն:

Քոյ ժամանակակից Մարգը ասի իր սիրունուն.—

«Որքան գեղեցիկ են ոտներդ կօշիկներդ մէջ,
«Զխտերիդ շրջագծերը մանեակների են նման՝
«Արեեստագէտի ձեռների կերտւածք:
«Քո կուրծքը մի բաժակ է բոլորակ,
«Ուր բուրակէտ ըմպելին չի պակտում:
«Քո մարմինդ ցորենի մի շեղջ է՝
«Շուշաններով բոլորած:
«Իրանդ նման է արմաւենու
«Եւ ստինքներդ՝ սղկոյզների.
«Ատում եմ. արմաւենիի վրայ կ'ընեմ
«Եւ ճիւղերը բռնեմ:
«Քոյ ստինքներդ լինեն խաղողի սղկոյզների պէս,
«Եւ շունչիդ բոյրը՝ հոտակէտ խնձորի.
«Ինքանք՝ գերազանց ըմպելի,
«Որ գիրաւ հոտում է սիրականիս համար
«Եւ սահում ննջողների շուրթերին¹⁾»

* * *

Յոյսերի և հոգսերի, երկիւզի և զայրոյթի միջև՝ համոզիր քեզ,
որ ամէն օրը որ ծագում է՝ քեզ համար վերջինն է. ապա քեզ քաղցր կը գտնի
բոլոր ժամերը, որոնց հաշի չէիր առել,—գրում էր, արդարացիօրէն, էպի-
կուրեան Հորացիոսը քնքոյշ քերթոյ թ'իբուլին:

Գալով ինձ,—աւելացնում է նա,—ինձ կը գտնես լեցուն, մորթս
խնամւած ու պայծառ, և դու կարող ես ծաղրել էպիկուրեան հօտի հեշտա-
մուլ մէկին²⁾:

Այս էպիկուրեանը լիովին իրաւունք ունի, որովհետեւ կեանքի
մէջ ամէն ինչ անցողիկ է...

1) Cantique des Cantiques, p. 667.

2) Horace,— Œuvres complètes «Épîtres» IV, 169, t. II, Paris

Թող Մարգը երգի Մարգու երգը, և հնչի մարգու երաժշտութիւնը, վասն զի Մարգ-Մըջիւն գառնալով՝ նա չի կարող երգել ու նւագել: Թող նա երգի երգերի գեղեցիկը, որ յօրինել է իր սիրտը: Քանզի դու, սվ Մարգ, չես գտնի այլևս, օ խորհրդաւոր էակ, քո երգի թո՛խչքի հետքը դաւերի անվաթճան ակողութեան մէջ: Եւ նախ քան երգելը «Մարգ-Մըջիւններ լո՛ին երգը», երգիր Մարգու ասուածային երգը՝ վասն զի՝ «երգել, սիրել՝ անուշ բան է, սվ գիտէ թէ կապրենք վաղը»¹⁾:

Թող Մարգն աշխատի՝ բացատրելու համար Կեանքի Մահւան և նոյն ինքն Տիեզերքի Խորհուրդները: Թող իր հոգին փնտորի Գեղեցիկը կեանքում, Ճշմարիտը աիեղբրքում, Գեղեցկութիւն՝ ընկերութեան մէջ և Արքարութիւն՝ պետութեան մէջ:

Թող Մարգը աշխատի՝ ստեղծելու համար մի լաւագոյն Ոստան, հիմնւած իմաստութեան վրայ՝ երկրագնդի բոլոր մարդկային էակներ իր ջանկութեան համար:

Թող ամէն մէկը մեզնից ասի իր սիրեկանին, ինչպէս որ ասում է քերթող Եւրիպիդէսի հերոսը իր ջերմօրէն սիրած կնոջը.

«Ազամեմնոնի գուսար՝ էլէքար, ես եկել եմ քեզ գտնելու քո գիւղական բնակավայրում»²⁾:

Թող ամէն մէկը Մահկանացուներից, ամենախոնարհն ու ամենամեծը երկրագնդի, եթէ ուզում է երջանիկ լինել այս լոյսի աշխարհի անցողիկ երթում՝ միշտ փնտորի իր «Ազամեմնոնի գուսարը... և իր գիւղական բնակավայրը»...

1) Manon I escout.

2) Euripide «Electre» t. II, p. 424, Paris.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԱՅԻՆ ԿՈՆԿՐԵՏԻ ԿՈՆԿՐԵՏԻ

ԱՇՆԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԱՅԻՆ ԿՈՆԿՐԵՏԻ ԿՈՆԿՐԵՏԻ
ԿՈՆԿՐԵՏԻ ԿՈՆԿՐԵՏԻ ԿՈՆԿՐԵՏԻ ԿՈՆԿՐԵՏԻ
ԿՈՆԿՐԵՏԻ ԿՈՆԿՐԵՏԻ ԿՈՆԿՐԵՏԻ ԿՈՆԿՐԵՏԻ
ԿՈՆԿՐԵՏԻ ԿՈՆԿՐԵՏԻ ԿՈՆԿՐԵՏԻ ԿՈՆԿՐԵՏԻ

Das Buch hat einen Inhalt, der sich auf die Geschichte der Stadt bezieht. Es enthält eine Beschreibung der Stadt und ihrer Umgebungen, sowie eine Geschichte der Stadt von ihrer Gründung bis zur Gegenwart. Die Geschichte ist in Kapitel unterteilt, die jeweils einen bestimmten Aspekt der Stadtgeschichte behandeln. Die Sprache ist einfach und verständlich, so dass auch Laien die Geschichte der Stadt verstehen können.

Das Buch ist ein wertvolles Dokument, das die Geschichte der Stadt für die Zukunft bewahrt. Es ist ein Muss für jeden, der sich für die Geschichte der Stadt interessiert. Das Buch ist in deutscher Sprache verfasst und ist in der Bibliothek der Stadt zu finden. Es ist ein wertvolles Dokument, das die Geschichte der Stadt für die Zukunft bewahrt.

Das Buch ist ein wertvolles Dokument, das die Geschichte der Stadt für die Zukunft bewahrt. Es ist ein Muss für jeden, der sich für die Geschichte der Stadt interessiert.

STADTGESCHICHTE

Das Buch ist ein wertvolles Dokument, das die Geschichte der Stadt für die Zukunft bewahrt. Es ist ein Muss für jeden, der sich für die Geschichte der Stadt interessiert. Das Buch ist in deutscher Sprache verfasst und ist in der Bibliothek der Stadt zu finden.

Das Buch ist ein wertvolles Dokument, das die Geschichte der Stadt für die Zukunft bewahrt. Es ist ein Muss für jeden, der sich für die Geschichte der Stadt interessiert. Das Buch ist in deutscher Sprache verfasst und ist in der Bibliothek der Stadt zu finden.

Das Buch ist ein wertvolles Dokument, das die Geschichte der Stadt für die Zukunft bewahrt. Es ist ein Muss für jeden, der sich für die Geschichte der Stadt interessiert.

Das Buch ist ein wertvolles Dokument, das die Geschichte der Stadt für die Zukunft bewahrt. Es ist ein Muss für jeden, der sich für die Geschichte der Stadt interessiert.

Das Buch ist ein wertvolles Dokument, das die Geschichte der Stadt für die Zukunft bewahrt. Es ist ein Muss für jeden, der sich für die Geschichte der Stadt interessiert.

Das Buch ist ein wertvolles Dokument, das die Geschichte der Stadt für die Zukunft bewahrt. Es ist ein Muss für jeden, der sich für die Geschichte der Stadt interessiert.

Das Buch ist ein wertvolles Dokument, das die Geschichte der Stadt für die Zukunft bewahrt. Es ist ein Muss für jeden, der sich für die Geschichte der Stadt interessiert.

Das Buch ist ein wertvolles Dokument, das die Geschichte der Stadt für die Zukunft bewahrt. Es ist ein Muss für jeden, der sich für die Geschichte der Stadt interessiert.

Das Buch ist ein wertvolles Dokument, das die Geschichte der Stadt für die Zukunft bewahrt. Es ist ein Muss für jeden, der sich für die Geschichte der Stadt interessiert.

Das Buch ist ein wertvolles Dokument, das die Geschichte der Stadt für die Zukunft bewahrt. Es ist ein Muss für jeden, der sich für die Geschichte der Stadt interessiert.

Das Buch ist ein wertvolles Dokument, das die Geschichte der Stadt für die Zukunft bewahrt. Es ist ein Muss für jeden, der sich für die Geschichte der Stadt interessiert.

Das Buch ist ein wertvolles Dokument, das die Geschichte der Stadt für die Zukunft bewahrt. Es ist ein Muss für jeden, der sich für die Geschichte der Stadt interessiert.

Das Buch ist ein wertvolles Dokument, das die Geschichte der Stadt für die Zukunft bewahrt. Es ist ein Muss für jeden, der sich für die Geschichte der Stadt interessiert.

Das Buch ist ein wertvolles Dokument, das die Geschichte der Stadt für die Zukunft bewahrt. Es ist ein Muss für jeden, der sich für die Geschichte der Stadt interessiert.

Das Buch ist ein wertvolles Dokument, das die Geschichte der Stadt für die Zukunft bewahrt. Es ist ein Muss für jeden, der sich für die Geschichte der Stadt interessiert.

APPENDIX B. P. 187-188

THESE DOCUMENTS CONTAIN INFORMATION OF A CONFIDENTIAL NATURE AND ARE NOT TO BE DISCLOSED TO THE PUBLIC OR TO ANY OTHER PERSON WITHOUT THE EXPRESS WRITTEN PERMISSION OF THE OFFICE OF THE DIRECTOR OF NATIONAL SECURITY.

ԱՇՆԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԿԵԱՆՔԻ ՈՂԲԵՐԿԱԿԱՆ ԱՄԵՆՕՐԵԱՆ.

Միայն Մարդը չէ որ ունի իր Ողբերգական Ամենօրեան: Կեանքը ևս ունի իր Ողբերգական Ամենօրեան: Նրա Ողբերգական Ամենօրեան Աշունն է. Կեանքի ողբերգութիւնը արտայայտուում է Աշնան մէջ: Աշնան կեանքը, մինչև Զմեռ, խորապէս անցնում է Ողբերգական ժամերի մէջ:

Աշունն արդեօք Մահւան պատկերն է:

— Այո՛, պատասխանում է քերթողը և տխմար գիտունը: Բայց նրա համար, որ խորապէս խորհում է Կեանքի և Մահւան մեծ խորհուրդների վրայ՝ Աշունը որևէ վշտաօրիթ, յուսահատ, ունայն, ձանձրալի և այսպէս ասած մահաօրիթ բան չէ:

Իր ոգիով, ընդհակառակը, նա ընձեռում է մի մշտական հրապուրանք: Նա, Աշունը, ճառագայթում է հաւատք, սէր, երիտասարդութիւն, թարմութիւն, բանաստեղծութիւն, հրապուրանք ու երազ: Նա չափն է ծանր ու խոր բաների:

Աշունը, մէկ խօսքով, մեզ շրջապատող Խորհուրդների իմաստն ունի:

Նա անգնահատելի գին է տալիս Կեանքին, Մահւան և Սիրոյն: Նա նոյնպէս գին է տալիս Մարդու կեանքին, նաև բոլոր էակներին և իրերին: Նա արծարծում է նաև իրերի գեղեցկութիւնը:

Աշունը մի հրաշագան այգի է խորը իմաստութեան, գերագոյն երազի և խորհրդաւոր խոկումների:

Աշնան տերևների անկման և հողմերի ջրունջների մէջ, իսկական խորհողի համար, աւելի փիլիսոփայութիւն կայ և խորհելու աւելի նիւթ՝ քան փիլիսոփաների բոլոր սխտեմների մէջ:

* * *

Իսկապէս ճիշտ չէ, որ Աշունը պատկերն է Մահւան, Նա, ընդհակառակը, Կեանքի կատարեալ պատկերն է, որովհետեւ Կեանքը, դարնանը, հլնում է Մահւանից—Աշնան կեանքից:

Բոլոր հրաշագան ծագկումները կանաչների, երիտասարդութեան, ծաղիկների, Գարնան գոյնն ու բոյրը ծնւում են Մահւանից. ծնւում են Աշնան խորհրդաւոր պատկերի բեկորներից, թաղւած, որոշ պահ, իրերի քնարբուքի մէջ՝ Ջմրան մէջ:

* * *

Տիեզերքի հրաշագան Կեանքը իր արշալոյսն ու հեշտանքն ունի այն մարդու համար, որն իր Հոգու մէջ կրում է խորութիւններն ու ծանրութիւնները Կեանքի բոլոր սարսափելի խորհուրդների, վասն զի Հոգին սիրում է սուզել ու հաւել այդ խորհուրդների խորքերը, որտեղից էլ է Հոգին, և որտեղից նրա համար էլնում են նաև արշալոյսն ու հեշտանքը Կեանքի ամէն մի Խորհուրդի:

* * *

Բնութիւնը, մեզ համար, չի լալիս կամ ծիծաղում, իրեն ցուցնում քնքրոյշ կամ զայրացկոտ, ուրախ կամ մեղամաղձոտ՝ եթէ ոչ ըստ մեր հոգեվիճակի, ճարակ՝ մի վշտառիթ այցելութեան կամ օրօրւած լիացած սիրոյ մեզմ միօրինակութեամբ:

Ամէն վայր կամ ամէն իր, որի հետ կապւած է մեր սիրտը որեէ մի յոյզով՝ ամենից գեղեցիկ և ամենից հետաքրքրականն է, ամենագեղեցիկն ու ամենահրապուրիչն է աշխարհի:

Արտաքին իրերի մէջ չէ՞ք տեսնում այն՝ ինչ սիրտն է միայն ուզում տեսնել: Ինչ՞նչ համար է այսպէս:

Որովհետեւ մենք ամէն մի բանի մէջ նկատում ենք ինքներս մեզ, մեր զգացումները, մեր սիրտը: Մնացածը միայն խաբկատիր պատրաստ է, կրակարանի մարտդ հուր անցողիկ, որ քամին ցրում է և զարնում առանց չնչին հետք անգամ թողնելու:

* * *

Աշունը յատկապէս շատ տպաւորիչ է լիալուսին գիշերի ընթաց

քուս, գիշերուայ ժամի մէկին: Այն ատեն մարդը իր «Բուրաւէտ Դրախտի» կորստեան զգացումն է ունենում:

Այդ ժամին անհնար է պաշտպանել այդ լուսաւոր ու փխրուն գանձերը, որպէս դեղնած տերևները, կատարեալ երջանկութեան երազը, և իր սրտի մէջ Մեռեալների յայտնելը և այլն:

Նա որ գիտէ ըմբռնել մի փայլակի տեղութիւնը, նա կրճանայ ըմբռնել նոյնպէս Աշնան Խորհուրդը և երեկոյեան աստղի գեղեցկութիւնը՝ Հոգով զգացւած:

Աշունը Կեանքի իսկապէս ամենախորհրդաւոր պահն է, որը մեզ տալիս է «Բուրաւէտ Դրախտի» գոյութեան խորը տպաւորութիւնը, որի մասին խօսում է քերթող Աննէտ Դոլբը, հետեւեալ սողերում.—

«Որքան զուք հեռու էք, Բուրաւէտ Դրախտներ,
«Ուր պայծառ լազուրում ողջ սէր է, ցնծութիւն,
«Ուր ինչ որ սիրւում է՝ արժան է սիրւելու,
«Ուր անբիժ հեշտանքում սիրտն է թաթախւում.
«Որքան զուք հեռու էք, Բուրաւէտ Դրախտներ:»¹⁾

* * *

Աշունը, իսկապէս, նոյնպէս և Սիրոյ պատկերն է. գոհաբերութիւն ամենի համար որ տառապում, ապրում է, որ գործում, դողում է և որը շնչում է Կեանքի և Մահւան մէջ: Եւ ամէն մի Մահկանացու, խորը մաածոց լինի նա թէ համեստ խորհող խորհուրդների, միշտ զգում է նրա խորը գեղեցկութիւնը, գերազոյն գեղեցկութիւնը: Որովհետև մեզնից ամէն մէկի հոգին մի կաթիլ ջուր է Խորհուրդաւոր վիթխարի Ովկիանում, մի հրաշագան ծաղիկ՝ Խորհուրդների պարտիզում, մի անսահմանօրէն փոքր մասնիկ՝ բացարձակ Լոյսի:

* * *

Սէրը մի վսեմ խաղ է յոյգերի, Կեանքը՝ մի գեղեցիկ երազ, Մահը՝ մի անթափանցիկ հագուստ, որը իր ծաղքերով ծածկում է երկուսին:

¹⁾ Annette Kolb.— «Nouvelles Littéraires» 19—2—1938 № 801, Paris.

ՄԱՀՂ ԿԵԱՆՔԻ ԵՒ ՍԻՐՈՑ ՄԻՋԵՒ. ՓԹՈՒՄԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշնանը տերևների մէջ արտայայտուող մահւան նախանշանը դի-
զին գոյնն է, մինչդեռ Մարդու մօտ, ընդհակառակը, ճերմակ գոյնն է որ կե-
րևան է գալիս մեր մազերի մէջ:

Ի՞նչ խորհրդաւոր հակասութիւն. ինչո՞ւ համար այսպէս:

Արդեօք այս ճերմակ գոյնը Մարդու մօտ մի նշան է իր մարմնի
հետագայ փթումի:

* * *

Աշունը փթումի աշխատանոցն է, ուր պատրաստոււմ են կեանքի
և Մահւան նշանն սարբերը:

* * *

Տերևները, գուցէ, երազն են կեանքի և դարնան զեփիւսը ան-
տառում սիմֆոնիան է իրերի և բոյսերի կեանքի, բայց ծաղիկների կամ
ծառերի խորհուրդը թաքնւած է նրանց բոյրի մէջ, որի իսկութիւնը մը-
նում է Մարդու հասկացողութիւնից քուրս. մի խորը խորհուրդ, ինչից է
բաղկացած նա:

Խորհուրդների Խորհուրդ:

* * *

Այն, ինչ որ է բոյրը ծաղիկների կամ կեանքի համար, նոյնն է
փթութիւնը Մահւան համար. մի Խորհուրդ:

* * *

Կեանքը, Սէրը և Մահը անհասանելի են, որովհետև նրանք ան-
նրկապիտան են:

Մահը անձնական կազմ չունի, նա ողի է, նրան տեսնում ենք
միայն հողով, և նրան ղրպչում ենք միայն մտքով:

* * *

Կեանքի ու նաև Մահւան խորհուրդը թաքնւած է փթումի խոր-

հուրդի մէջ, որը մեզ սարսափ է ազդում: Բայց փթումը մի օրէնք է՝ միաժամանակ Մահւան ու Կեանքի՝ որովհետեւ Մարդը զիտոււմ է հրկրազնդի կեանքում միայն փթութիւնն և միևնոյն ժամանակ արդիւնքն ու պատճառը իմորի, որը, իր հերթին, օգնում ու պտղաւորում է բուսական կեանքը և այսպիսով նպաստում Կեանքի յաւիտենական շրջանառութեան:

* * *

Փթութիւնը պատկերը չէ Մահւան, նա իսկական պատկերն է Կեանքի, իր խորհրդանիշը ծաղկումի և պտղաբերութեան: Նա Մարդուն տալիս է Աշխարհի իրերի և էակների ողբերգական իմաստը:

* * *

Կեանքն ու Մահը միշտ տնցնում են փթութեամբ: Դա նրանց գոյութեան գլխաւոր դուռն է, առանց նրան չկայ ոչ կեանք և ոչ Մահ:

Նիւթի տարբազարութիւնը, որ հիմքն է կազմում ամեն էակի, — իբրևաւոր յայտարարում է Մարկոս Աւրելիոսը — ասյլ ու է ջուր, սօսիւր, ոսկըրնիւր, մի գարշահոտութիւն: Մարմարները նոյնպէս հողի կոշտութիւնն են: ոսկին, արծաթը, մրուրները, հագուստները, բուրդը, արեան ծիրանին, նոյնպէս և ամբողջ ֆնացորդը: Շունչը նոյնպէս միևնոյն տեսակի է. նա անցնում է մէկից միւսին¹⁾:

* * *

Բայց ինչի՞ պիտի յանգի մեզնից ամէն մէկի մարմինը Հողի մէջ, ի՞նչ ձև պիտի ստանայ այդ ընկած տերեւ այնքան ընկած տերեւների մէջ: Կունենայ նա մի անուն:

Նա չի ունենայ, — ըստ Բոսիւէի, — ոչ մի ձև և ոչ մի անուն:

Մարմինը, — հիանալիօրէն ասում է Բոսիւէն, — իջնում է այս մը-տայլ վայրերը, այս ստորերկրեայ բնակավայրերը՝ այնտեղ փոշիների մէջ ընկու համար...

Բայց այստեղ մեր երեւակայութիւնը մեզ խաբում է նորէն: Մահը մեզ չի թողնում այնքան մարմին, որ որեւէ տեղ գրաւենք, և միայն գե-

1) Pensées. Livre IX, p. 163.

ընդմաններ ենք տեսնում, որոնք որևէ ձև են կազմել: Մեր մարմինը շուտով բնույթը փոխում է. մեր մարմինը մի ուրիշ անուն է ստանում. մինչև իսկ դիակը,—ասում է Տերտուլիանոսը,—որովհետև նա մեզ ցուցնում է դեռևս որևէ մարդկային ձև, երկար չի ֆեռում այդպէս. նա դառնում է մի չզգիտեմ ինչ, որը այլևս անուն չունի որեւէ լեզուի մէջ. նոյնքան ճիշտ է որ ամէն ինչ մեռնում է նրանով մինչև այն դամբանական նշանակէտը, որոնցով արտայայտում էին իր դժբախտ նշխարները¹⁾:

Մեր մարմինը, իսկապէս, շարունակում է մի չզգիտեմ ինչ... Նա մուտք է գործում ֆիթուսեան կայսրութիւնը:

* * *

Բայց այնքան մտածողների մէջ ոչ ոք այնպէս լաւ չէ ըմբռնել և նկատել սարսափելի պատկերը Մահւան, իր ֆիթուսի Խորհրդանիշը, նրա ապրող պատկերը և ոչ թէ տարբազարութեան,—ինչպէս որ մտածող Յենգ—Յէօն:

Փիլիսոփայ Յենգ—Յէօն ծանրապէս հիւանդ լինելով՝ իր մօտ կանչեց իր աշակերտներին և ասաց.

«Բաց արէք իմ ոտներս, բաց արէք իմ ձեռներս:

Քերթուածների Գիրքն ասում է.

«Ունեցէք նոյն վախը և նոյն շրջահայեցութիւնը,

«Եթէ որ դուք գիտէք ձեր աչքերի առջ մի խորը անդունդ,

«Եթէ որ դուք քայլէք մի փխրուն սառոյցի վրայով.

«Այժմ կամ յետոյ, ես գիտեմ, որ ձեզ պիտի թողնեմ»:»²⁾

* * *

Յաւիտենական կեանքը, իր իսկ մէջ կրում է Մահը ինչպէս մայրը իր գւտակին: Այդպիսին նաև Մարդու կեանքը, որ մի խառնուրդ է Կեանքի ու Մահւան, ցրած Տիեզերքի անսահմանութեան մէջ:

* * *

Կեանքը Տիեզերքի մէջ և երկրի վրայ՝ դա մի կախարդ է, վասն

¹⁾ Bossuet «Oraisons Furébrés (Henriette d'Angleterre) p. 106 Paris, E. Ducrocq. Edit.

²⁾ Confucius «Les Quatre Livres» p. 116 Trad. Fr. Paris, Lebr. Garnier.

զի ամէն ինչ նրա մէջ կախարդանք է: հրաշք և խորհուրդ: Եւ ամէն մի բնական հրեոյթ մի կախարդական արեւտտ է:

Եւ սակայն դարձեալ նա, Կեանքը, որ մեզ առաջնորդում է Խորհուրդներ Մեծ Դռանը, Խորհրդաւոր Երազների Դուռը, ուր տեսանելի և անտեսանելի ալքիմիկոսների և կախարդների փոշիները մեզ պատրանք են հեղուկ գտնելու իրենց խորհուրդների և հրաշքների բանալին, երջանիկ լինելու պատրանքը. պատրանքը գեղեցկութեան, սիրոյ և յաւիտենապէս ապրելու: Իր յաւիտենական Դիւթախաղի հազար հմայքները մեզ առաջնորդում են այլուր:

Իր մեծ խորհուրդը՝ դա պատրանքային դիմակն է, այս թեթև քոյրը և այս տեսանելի և ներկայ ձևը, բայց մի անտեսանելի իսկութիւն իրերի և էակաների, Երկրի և բոյսերի, թագնւած ներկային, բաց՝ ապագային:

* * *

Գարունը, առերևոյթ, ստեղծիչ է և Աշունը՝ աւերիչ: Մինչդեռ Կեանքի ու Մահւան Խորհուրդների խորքերում այդ այդպէս չէ: Նրանք թշնամիներ չեն. նրանք բարեկամներ են և գործակիցներ՝ աշխատելով միևնոյն խորհրդաւոր նպատակի համար՝ պահպանում երկրի վրայ իրական և արական սարքերի. պահպանում հանքերի, բոյսերի և կենդանի էակների սեռի:

Նրանք, Կեանքը և Մահը, մի խօսքով աշխատում են միասին՝ Սիրոյ պահպանութեան համար:

Միշտ մի համարժէքութիւն ու հաւասարակշռութիւն կայ Կեանքի և Տիեզերքի ու Երկրի վրայի կեանքի մէջ, տարրերի յարատև ստեղծման ու աւերման մէջ:

* * *

Կեանքի համարժէքութիւնը հաւասար է Մահւան համարժէքութեան: Ոյժերի ձևափոխութիւնը այնտեղ տեղի է ունենում միշտ համարժէքութեան և հաւասարութեան մէջ:

Բնութիւնը, — իրաւացիօրէն նկատում է Ա. Տուրյէն, — միշտ իր հաշուկշիռը պահում է հաւասարակշռութեան մէջ. նա նոյնպէս, ինչպէս որ արգարագատութիւնը, իր կշիռն ունի, որի թաթերը ճօճուում են միայն հաւասարութեան գալու համար: Մինչև իսկ բացառութիւնը կանոնի մէջ է մտնում, արտակարգը՝ կարգի մէջ. գերազանցութիւնները, որ նախապէս թւում էին մի հրաշք բնութեան մէջ, ջնջուում են միջակների հաւասարութեան մէջ: Իրողութիւնները վերցրէք մեծ թւերով և էակաները՝ զանգւածօ-

րէն, և դուք կը տեսնէք ամէն ինչ ձուլելիս և հաւասարակշռելիս. ստոյգը բարեխառնութիւնն է ամէն օրւայ, տարիների համազգեստը. եղանակները փոխուած են, բայց եղանակները վերադառնում են. այն ինչ որ հեանքը առել է, Մահը նրանից կորզում է և հեանքը վերստին վերցնում է այն Մահւանից ¹):

Բայց ինչպէս է պահպանուում այս հաւասարակշռութիւնն ու համարժէքութիւնը ոյժերի, ձեւերի ու էակների և իրերի: Ի՞նչպէս է, հեանքի ու Մահւան միջև, պահպանուում գրեթէ հաւասար քանակութեամբ էզն ու արուն:

Սա մի գաղտնիք է, ամենամեծ Խորհուրդը հեանքի ու Մահւան:

* * *

Աշխարհում գոյութիւն ունի մի քաղաք, ուր բոլոր բնակիչները էգ ծնւած լինեն և կամ հակառակը: Ո՛չ, ԻնչՏԷ:

Սա մի Խորհուրդ է:

* * *

Փրիմ Եղբայրները պատմում են,—

«Մի մարդ, որ պիտի մեռնէր, մի անձաւում տեսաւ բազմաթիւ կերոններ վառելիս—մեծեր, միջակներ և բոլորովին փոքրիկներ. սրանք ամէն պահ հանդչում էին, մինչդեռ ուրիշները վառուում էին, այնպէս, որ հուրը թւում էր հրահրելիս մի յարատե շարժումով հրթ ու դարձի:

«Ահաւասիկ,—ասաց Մահը,—լոյսեր որոնցից ամէն մէկը ներկայացնում է մի մարդու կեանք: Մեծերը ներկայացնում են երեխաներին, միջակները՝ ամուսիններին՝ իրենց տարիքի ծագիւած վիճակում, փոքրները ներկայացնում են ծերերին:

«Յոյց առւր ինձ իմ կրակը,—ասաց մարդը, մտածելով որ իրենը դեռևս մեծ պիտի լինի:

«Մահը նրան ցոյց աւեց մի շատ փոքրը, որի հուրը գողգոջում էր, պատրաստ հանգչելու:

«Ո՛հ,—ասաց մարդը սահմոկած,—վստի՛ր ինձ համար մէկ ուրիշը, ժ պթն, որպէս զի կարողանամ պահպանել կեանքս:

«Ես այդ չեմ կարող,—ասաց Մահը,—պէտք է մի լոյս հանգչի՝ նախ քան որ մէկ ուրիշը վառուի»²)...

1) Alf. Fouillée «L'Idée Moderne du Droit» p. 380, Paris 1909.

2) Frères Grimm «Contes choisis (La Mort Morraine) Traduction, Paris.

ՄԱՐԳՈՒ-ՈՐԴԻՆՆԵՐԻ ՏԵՐԵՒՆՆԵՐԻ ԱՆԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Մտաւոր տերէններն ընկնում են գետին... Եւ Մարգու-որդինները, այս տերէնները, նոյնպէս ընկնում են գետին:

Մտաւորից ընկած տերէնները, միլիոններով ու միլիարդներով, քաժուց զրոււմ են անտառի մէջ, ուր, միտոժամանակ յետոյ, չի գտնուում այլևս նրանց հետքը: Նրանք մուտք են գործում իրերի սաւերներէ մէջ—Նրազնե-րի սաւերի նրանք այնտեղ այլափոխուում են ոսկէ հրազի, ինչպէս որ հը-րեք գոյութիւն ունեցած չլինէին:

Նոյնը նաև մարգ-տերէնները, անհատներն ու ազգերը...

* * *

Մեզնից ամէն մէկը նոյնը չէ՞ արդեօք, որ ապրում է իր կեանքը, ինչպէս տերէն իր պատուութիւնը, քամու մէջ, անձրևի ու արևի:

* * *

Բոլորին, որ շարժոււմ են հրկրի վրայ, իրենց մէջ կեանքի հեք ունենալով, կեանքը տալիս է ամէն կանաչ բոյս՝ սնելու համար:

* * *

Մարդը գարնուում է իր ճակատագիրը իրերի և էակներէ մութ Խորհուրդի մէջ՝ ինչպէս որ ծագիկը պատրաստուում է իր պտուղը Երկրի խաւարի մէջ, հողի տակ:

* * *

Ինչպէս ատուր կեանքի անվախճանութեան մէջ տարւած արևի շողերով, դ՛ու, ո՛վ Մարդ, կորած ես իրերի Խորհուրդի անհունութեան ու յաւ-ւիտեանութեան մէջ:

* * *

Աշուն է... Եւ տերէններն ընկնում են ամբողջ Երկրի մակերեսի վրայ... Ամենուրեք նոյն պատկերն է. Մարդու շուրջը, որտեղ էլ որ նա գտնւի, տարածուում են հանդարտ գաշտեր կամ անտառներ խորհրդաւոր, ծանրանիստ ծառերի կատարներ՝ որոնք աշնանային գոյներով ծածանուում են ու ծփում. Եւ Մահկանացուները, կենդանի էակներն ու իրերը լողում

են գորշ լոյսի մէջ... Մտերը սարսուռն են և տերևները թօթափուով, ծիրանի ու սուէ գոյներով:

Ապրողները նոյնպէս, տիրուր Աշնան պէս, քայլ առ քայլ առաջանում են Անէռթեան ճամբին՝ ինչպէս ընկնող սաղարթը, որ ցրուով է հողմերից:

Նրանք քայլում են, թաքթաքուն, լռին, ինչպէս Մանկանացուները, որոնք արդէն անցել են նոյն վշտոտ ճամբան...

Գրեթէ լուսթեամբ՝ մենք յառաջանում ենք մի ճամբով, որը մեզ տանում է Մեռելների Երկիրը, ուր արդէն ընկած են տերևները և մարդատերևները:

* * *

Ինչո՞ւ համար,— հարցնում է Հոմերոսը Գլուսկոսի բերնով,— պահանջել ծնունդը մի մանկանացուի կամ Մանկանացունների, որոնք ուտում են Երկրի պտուղները: Մանկանացուի ծննդը:

— Նա,— սուտ է,— նման է տերևների ծնունդին. ինչպէս տերևների ծնունդը, այնպէս էլ մարդկանցը: Տերևներ կան, որոնց քամին ցըրում է երկրի երեսին, բայց կարող անառը նրանցից արտադրում է նորերին, գարունը վերազառնում է: Այդպէս էլ մարդիկ. մի սերունդ ծնւում է, մէկ ուրիշը վերջանում ¹⁾:

Մեծ բերթողի այս գեղեցիկ միտքը կրկնել է ազնիւ փիլիսոփայ—կայսրը:

Տերևները,— սուտ է տիրորէն ասուածային Մարկոս Աւրելիոսը,— ըստ սեփական գաւազներն են: Տերևներ են նաև մարդիկ, որոնք քեզ ողջունում և օրհնում են, կամ որոնք, հակառակը, քեզ նզովում, զաղտնօրէն քեզ անւանարկում են և ծաղրում: Տերևներ, նրանց նման որ կը ժառանգեն քո յետ մահու հուշակը: Այս բոլոր տերևները՝ «ծնւում են գարնան եղանակին»: Յետոյ քամին նրանց զգեանում է, և անտառը նոր տերևներ է ծլում նրանց տեղ: Սա ընդհանուր է բոլոր իրերի համար՝ երկար չտեսել Բայց դու, դու վազում ու փնտտում ես ամէն ինչ, իբր թէ դու յաւիտենական լինես: Մի քիչ էլ՝ և դու կը փակես աչքերդ. և նա, որ քեզ կը տանի, մէկ ուրիշը արդէն նրան կը ողբայ ²⁾:

* * *

Այս բոլոր տերևներն ընկնում են Մեռելների քաղաքը, որ Եր-

1) Homère «L'Illiade» chant VI, p. 103, trad. Paris.

2) Marc—Aurel, Pensées.

կիրն է:

Մեռելիների Քաղաքում կարգում ենք միայն մէկ գիրք, որ սկսում ու վերջանում է՝

«Աստ հանգչի երեխան, աստ հանգչի հայրը, աստ հանգչի մայրը, աստ հանգչի եղբայրը. աստ հանգչին կիրն ու՝ ամուսինը... աստ հանգչի մարմինը այսինչի»...

Սրանք երկու մարմիններ են, մարմիններ և միշտ մարմիններ:

Ամբողջ Երկիրը մի յաւիտենական գերեզմաննոց չէ՞ բոլոր մարդկանց, բոլոր կենդանի էակների և բոլոր իրերի համար:

Եւ Երկրի ամէն մի անկիւնում չէ՞նք կարգում աստ հանգչի մարդը, աստ հանգչի կենդանին, աստ հանգչի... Այո՛:

Խաղաղութիւն նրանց ամիւններին, խաղաղութիւն նրանց ըստուերին...

* * *

Աշնան և Մարդու անհասկանալի ու զարմանահրաշ կեանքի միջև գոյութիւն չունի որևէ տարբերութիւն:

Մէկը նոյնքան, որքան և միւսը ապրում է խորհուրդներէ մէջ և անցնում հրաշալիքների միջով:

Եւ Մեռաւոր Մարդը, որ Աշնանը անտուռում ապրել է կարծում ներքին կեանքի ստեղծում, իրականում նա ապրում է միայն ստեղծում էակների և իրերի, որոնք ոչ մի տեղ գոյութիւն չունին—ազազէն: Նրանք գոյութիւն ունին միայն Մեծ Երազի մէջ, հրաշազան Կեանքում, շքեզօրէն զարդարած մեռելներով, ապրողներով և չծնւածներով: Այստեղ, իրական և հրաշազան կեանքի միջև գոյութիւն չունի որևէ տարբերութիւն. մէկը նմանում է միւսին:

* * *

Մարդկային տերեւներն ընկնում են:

Կեանքի ու Մահուան միջև, երազի և իրականութեան միջև, ներկայի և ապագայի, Ապրողի և Մեռելի միջև, զարբերի յաւիտենութեան մէջ, գոյութիւն չունի որևէ տարբերութիւն: Այնտեղ մէկն անցնում է միւսի համար. Երազը, Փամանակի կեանքում, դա իրականութիւնն է և իրականութիւնը՝ դա երազն է:

Այսպէս միլիոնաւոր և միլիարդաւոր մարդիկ ու կենդանի էակներ, Երկրագնդի ծաղուսից, նոյնպէս և մարդու, ծնւել են ու մեռել, թօ-

Թափուկ որպէս տերևները ծառերի:

Մտունդ, մահ էակաների և բոյսերի՝ դա պատմութիւնն է Երկրագնդի:

Նորէն միլիոնաւոր և միլիարդաւոր ապրող էակներ ու բոյսեր կը ծնուին և ապա կը մեռնեն. նրանք կանցնեն Կեանքի միջով՝ հասնելու համար Մահուան և սրանից՝ Սիրոյն:

Նրանք, որոնք գոյութիւն են ունեցել և նրանք որ պիտի յայտարնեն՝ միլիարդաւոր տարիներէ միջով՝ Տւր են նրանք, Նրանք գտնուած են Փամանակի երազի մէջ: Ո՞րտեղից են դուրս եկել նրանք. նրանք դուրս են եկել Լոտոթիւնից և վերստին մտել Յաւել, ժական Լոտոթեան մէջ—Երկրի երազի մէջ: Իրականութիւնն այստեղ՝ Նրազն է և Լոտոթիւնը, երազն է միակ իրականը:

*
* * *

Ամէն անհատ, ամէն մարդկային դէմք ու ամէն կեանք,— տրդարացիօրէն յայտարարում է Ա. Շոպենհաուէրը,— ոչ այլ ինչ է եթէ ոչ մի երազ աւելի. բնութեան անվախճան հոգու վաղանցուկ մի երազ, յամառ ու մնայուն ապրելու կամքով. դա միայն թոռացիկ մի աւելորդ պատկեր է, որ նկարում է խաղաղով տարածութեան ու ժամանակի անվախճան իր էջում, որ թողնում է ապրելու մի քանի պահ՝ մի զխապառփառ կարծութեամբ և որը իւրոյն նա ջնջում է՝ տեղ տալու համար ուրիշներին: Այլ սակայն հէնց կեանքի այդ կողմն է որ մտածել ու խորհել է տալիս. պէտք է որ ապրելու կամքը, ուժգին ու թափով, վճարի ամէն մէկը այս թոռացիկ պատկերներին, ամէն մէկը այս իրզուր երևակայութիւններին՝ խորը և անթիւ վշտերի գնով և մի դառը մահով՝ վաղուց ահազգու և որը զալիս է վերջապէս:

Ահա թէ ինչն է մի զիական տեսքը մեզ յանկարծակի լրջացնում է ¹⁾:

Այս մտածումների խորութիւնը միայն Աշխարհ է զգացուած, այն ժամին, երբ տերևները թօթափում են ծառերից:

* * *

Բայց Մարգու մոլորակը, Երկրագունդը, ուր նա ապրում ու մեռնում է, ուր ընկնում են ըստը տերևները, նա ևս Տիեզերքի անհունութեան մէջ, Մահու և Կեանքի անվախճանութեան մէջ մի ընկնող տերև չէ:

Այո, նա նոյնպէս կընկնի իր աշխարհ որպէս մի տերև...

¹⁾ A. Schopenhauer «Pensées et Fragments» p 74.

Այս երկրի վրայ ամէն անհատի կեանքը,—յայտարարում է Ա. Շոպենհաուէրը,—կայանում է կամենալու մէջ, բայց կամենալ՝ դա էապէս նշանակում է տառապել.

«Կամենալ առանց շարժառիթի, միշտ տառապել, միշտ պայքարել. ապա մեռնել և այսպէս շարունակ դարերի ու դարերի մէջ, մինչև որ մեր մտորակը կը փշրուի փոքր կտորներով ¹⁾»:

Հաւանական է որ այն ինչ որ ստացւել է մեր Երկրագնդի մէջ,—յայտարարում է Մ. Մեթերլինկը,—այնտեղ կը մնայ ու կը պտղաւորուի՝ մինչև իր քայքայուած տարածութեան մէջ:

Այսինքն նախ քան որ մեր հետքերը կանյայտանան անհունութեան մէջ, ուր ոչինչ նրանց չի վերագտնի ²⁾

* * *

Ահն մեր ճտկատագիրը: Դիտել կանխաւ այս անձկութեան պատկերը:

Նրանք մահկանացուներն են, երկրային ողբերգական կատաստրոֆում վերջնականօրէն խեղդուելու ընթացքի մէջ:

Բայց Մահաւան ընդհանրական ու յարատե այս կատաստրոֆի առաջ Մարդը կարող է ասել. Որքան մեծ ու զարմանալի էք դուք, ճ Մարդու որդիներ, դուք՝ զոհերդ այնքան խոր և այնքան սարսափելի ժամանակի Խորհրդաւոր Ովկիանի:

¹⁾ A. Schopenhauer «Pensées et Fragments» p. 78 Paris.

²⁾ M. Maeterlinck «La Grande Féerie» p. 222 Paris 1929.

The first part of the report is devoted to a general survey of the situation in the country. It is followed by a detailed account of the work done during the year. The report concludes with a summary of the results and a list of the names of the members of the committee.

The second part of the report is devoted to a detailed account of the work done during the year. It is followed by a summary of the results and a list of the names of the members of the committee.




The third part of the report is devoted to a detailed account of the work done during the year. It is followed by a summary of the results and a list of the names of the members of the committee.

The fourth part of the report is devoted to a detailed account of the work done during the year. It is followed by a summary of the results and a list of the names of the members of the committee.

Բ.

ԱՂՆԱՆ ԵՒ ՄԵՌԵԼՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ



«Երջանիկ է նա, որ կարողանում է գերագնեկ ազնան յարսառուց հողմերի մէջ արձագանգը մի բայի, մի ձայնի, յիսասակը մի գերագոյն ներկայութեան» — մի Մեռելի:

ԺԵՐՄԵՆ ԲՈՍՈՆ

ԱՇՆԱՆ ԵՒ ՄԵՌՆԵՐԻ ԵՐԿՐՈՒՄԸ

Աշունը մի անսպաս աղբիւր է յիշատակներէ, քաղցր յիշողութիւններէ, նրա խորհուրդը ամէն մարդու հոգում ոգեկոչել է տալիս Մեռելներէ խորհուրդը, յիշատակը իր սիրելի կորածներէ՝ կեանքի սաւերներով պարուրած:

* * *

Աշունը ամէն մարդու հոգում վերապրել է տալիս անցած կեանքը մի բանի, մի էակի՝

* * *

Մեռելները, Երկրի այս գաւազները, Աշուն տերներէ անկամ ընթացքում, հոգմերի շունչով արթնանում են Մահուան քնից և ելնում կեանքի սաւերներից. նրանք արթնանում են մեր սրտում, վասն զի Երկրի այդ գաւազները մեզ նման սիրել են Աշունը և տերներէ անկումը, ուր, խորհրդաւոր կերպով նրանք պատասպարել են:

* * *

Մի ժամանակակից գրող՝ Թովմաս Վոլֆ՝ իր Մեռելներէ սիրահար, իր սիրելի կորածներէ յիշատակը ոգեկոչելով, իր ազգի Մեծ Մեռելներէ, իրաւամբ բացագանչում է.—

«Մեռելները, մեզ նման, չբացին իրենց աչքերն ու նայեցին դիշերի ասպազարդ դէմքին, Երկրագնդի վիթխարի ու մանուշակագոյն լաւարին՝ ապրիլին և Աշունը:

«Նրանք չսպասեցին՝ խորհելով, զգալով, նայելով վիթխարի ու խորհրդաւոր Երկրին գիշերը, Երկրին վայրի ու քնարական, այնքան քաղցր

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— Այս մտքերը վերցւած են իմ մի անտիպ աշխատութիւնից՝ «Մեռելներէ սաւերում» վերնագրի տակ:

ու տարօրէն ընտանի, իր ամբողջ տարածքը, իր վայրենութիւնն ու սարսափը, իր խորհուրդն ու խնդութիւնը, իր երկայնութիւնն ու կոշտութիւնը անսահման, իր գերզ ու հնամենի արգասաւորութիւնը:

«Նրանք չզգացի՞ն, — ինչպէս որ մենք ենք զգում, երբ սպասում էին գերշիւրը, — ցայգափթիթ ու մենաւոր վիթխարի երկիրն Ամերիկան:

«Նրանք չտեսան փխրուն աշխատանքը մանր մարդկանց ժանհակի, որ արտորում են խաւարի մէջ, մի բուռ կորչող արձագանգ ցրելով մեծ գետերի ափերին... Ձճանաչեցի՞ն նրանք, ինչպէս մենք ենք ճանաչել, ուրախութիւնն ու խորհուրդը, զաղտնի ու վայրի՝ անմահ երկիրն ¹⁾»:

* * *

Մեր բարեկամներից մենք պահում ենք խորապէս ու անկեղծօրէն միայն մեր Մեռելներին, որովհետև միայն Մեռելներն են մեզ պատկանում իսկապէս:

* * *

Իշխանուհի Բիբէսկօն, մոգական մի արևատով, ոգեկոչում է Մեռելներին: Նա մի հազագիւտ շնորհք ունի, դա՛ համակրանքն է:

Նրա համար, — յայտարարում է էդ. Ժալուն, — Մեռելները շարունակում են կատարել իրենց դերը այստեղ, երկրի վրայ. նրանք ամբողջովին թաղած չեն փոշու մէջ, ուր խառնում է բոլոր Մեռելների աճիւնը:

Նա գիտէ այն բոլոր շարժումները, որոնք կենդանացնում են Մեռելներին, այն հակումները, որոնք կենդանի են դարձնում նրանց իրենց ճանաչողների համար, ինչպէս և նրանց համար, որոնք երբեք չեն մոտեցել նրանց:

Այսու՝ մի շատ բարձր տաանձնաշնորհում, որ շատ քչերն ունեն, որովհետև գրողները մեծ մասը, որ խօսում է ուրիշների մասին, գործադրում է միայն այն ամսեղովի ռազմավարութիւնը, որ կայանում է նրանց գէպի մոտացութիւն մզելու մէջ:

* * *

Մեր Մեռելները՝ դրանք տերեւներն են կեանքից պոկած:
Այն օրից, երբ նրանք Փիզիքապէս բացակայ են, նրանք ապ-

¹⁾ «Images» № 722, Le Caire, Egypte, 1943.

բողներէ համար նոյնպէս զոգիւելիք տերեւներէ էակներ են, որոնք հազել են մի մոգական գոյն, որ անգնահատելի է: Վազն զի այդ տերեւները—հօգու աչքերի համար գառնում են թափանցիկ՝ որպէս ըւրեզ և նրանց մէջ կը տեսնէք բոլոր ձևերը, բոլոր շարժումներն ու բոլոր հակուռները և բոլոր մըտազրութիւնները որ ունեն և ունեցել են:

«Այս է որ, երբ տերեւները մեռնում են, նրանք ընդունում են ծաղիկների գոյնը, գալիքի ցօլքը ¹⁾».—արդարացիօրէն ասում է սուրբաբանական գիւղի գուշակուհին:

Ոչքննչ աւելի ճիշտ ու աւելի գեղեցիկ՝ քան մի դուշակուհու այս քեղեցիկ միտքը:

* * *

Մեռելները մեզ այցելում են յատկապէս աշնանը: Նրանք մեր սիրտն են մուտք գործում Կեանքի տխրութեան հետ: Նրանք արթնանում են իրենց քնից, երբ Կեանքը լալիս է իր կանաչ հագոստի կորստեան վըրայ, իր բոյրերի կորստեան, իր գոյների ու հրաշագանձ ձևերի:

* * *

Մեռելները, իսկապէս խօսում են մեր սրտին միայն այդ ողբերգական ժամին՝ շատ գեղեցիկ Աշնանը: Երբ անտառներում ծառերը կողքնուկ են իրենց տերեւները և այգիները մարդկանց թւում են աւելի մեծ ու աւելի դատարկ, այն ժամանակ նրանց լեզուն, մեր մեռելների լեզուն բացւում է:

Եւ երբ մեռած ճիւղերի արանքով երկինքը մեզ երևում է գարմանալի լայնքով և ամբողջ Խորհրդաւոր ներկան՝ ընդարձացած ընդթողի և ոչ մի արձագանդ չկայ Կեանքի, այնուհետեւ է, որ մեզ համար բացւում են աչքերը մեր կորածների:

Եւ երբ նոյն ինքն Կեանքը քնած է ու անտարբեր և Մարգը դաշտում, լեռներում, անտառներում զգում է մի տեսակ Խորհրդաւոր Կախարդանք, յուսահատութեան մի կախարդանք ու չի կարող բանալ ճարտար ու խորհրդաւոր իմաստը մեռած տերեւների և անտեսանելի ու հրաշագայտում կորուստը Կեանքի սքանչելի հագոստի, գոյնի, բոյրի ու ձևի՝ այն ժամանակ Մեռելները նայում ու գիտում են Կենդանիներին, երկրի էակներին ու իրերին: Եւ երբ Աշունը,—ինչպէս քերթողն է ասում,—թոխք է տալիս ախրութեան ու գինովութեան՝ թոյլ օդի ²⁾ միջով և այդ օդը, յանկարծ,

1) «Les Nouvelles Littéraires», 19—8—1939.

2) P. Verlaine.

բոլոր մահկանացուներին հաղորդում է մի Խորհրդաւոր սարսուռ, մի անբացատրելի շշուռ՝ այդ ժամանակ Մեռելները թռչում են դէպի մեզ, մեզ հետ խօսելու:

Նրանք իջնում են, որովհետեւ Մեռելները մեզ ձօռ են գալիս հեանքից՝ տխրութեամբ. նրանք գալիս են վեհափառ լեռների կառարներէից, մութ անտառներից, խոր ովկէաններից ու վիթխարի անապատներից...

Ի՞նչ հառաչներ ու Ի՞նչ հեծութիւն են արձակում նրանք հեանքի այդ գերադոյն ժամին:

Բայց Մեռելների Ի՞նչ հառաչներ նոյնպէս և ինչ շշուկներ են լըսում նրանք՝ Ապրողները:

Ու երբեք նորէն Աշունը մահկանացուների համար չի տաղաչափում անոյժ օդի հետ՝ քան այդ գերադոյն ժամին, ուր սգաւոր հեանքը դուրս է բերում իր գաւակներին՝ Մեռելներին՝ իր կրծքից. վասն զի անոյժ օդը արտաայտում է տխրութիւնները գունաթափ հեանքի:

Եւ ապա, այդ ողբերգական ժամին, Մեռելները, մեր սեփական Մեռելները, մեզնից ամէն մէկի սիրելի Կորածնիքը, ցանկանում են խօսել, խօսել Ապրողների հետ: Նրանք խօսում են... Նրանք խօսում են մեզ հետ տերևների անկման միջոցով և երեկոյի ու գիշերի խստաշունչ հողմերի հետ. արևի մայրամուտի մէջ:

Այս վեհափառ բարձունքներից Մեռելներն իջնում են անառափ ծառերի ճիւղերին, ուր թռչում ու երգում են թռչունները՝ և այստեղ նըրանք սպասում են մեր գալուն, մեզ հանդիպելու համար:

Եւ երբ թռչունների թողած ճիւղերից բազմաթիւ տերևներ պոկւում են այդ աժգոյն օրւայ լուսթեան, խորհրդաւոր լուսթեան մէջ, և ընկնում գետին, ուր գիշերւայ տերևներն արգէն ըմպել են հողի գաղջութիւնը, ապա ամէն Մեռել, թափուած ընկնող տերևների մէջ, կերպարանափոխւած աշնան տերևի, ցանկանում է մեզ գրպչել. մեզ հաղթարի...

Որքան այս բոլորը արտակարգ է, բայց՝ ճիշտ:

Ի՞նչ հնչիւն հեանքի, Մահեան ու Սիրոյ՝ Անտառի սքանչելի այս ժամերին, Աշնանը:

Զգում էք ձեզ նւաճւած հեանքով ու Մահով: Ով էլ որ լինի այդ մտրդը, Աշնան գերադոյն այդ ժամին, հեանքի խորը և խորհրդաւոր ժամ, նա իր Մեռելներին զգում է իր մէջ, ուր նրանց սիրում է. մեր Մեռելներն արգէն մտել են մեր սրտի մէջ:

Վասն զի ճիւղը, որտեղից քամին և շշուռջները խստաշունչ քամու ճօճել ու նետել են մէկ կամ երկու, երեք կամ չորս և կամ շատ տերևներ, ապա մի ճիւղ է որ ազդարարում է գալուստն ու էջքը երկրի վրայ

մեր մեռելների և ընկած տերևները մեզ ազգարարում են իրենց մուտքը մեր սրտի մէջ:

* * *

Քայց Մեռները մեզ չեն խօսում միայն Աշնանը, երբ տերևներն ընկնում են, նրանք մեզ խօսում են նաև աստղազարդ գիշերին, երբ նրանք մեզ խօսում են աւելի խորը և պերճախօս: Նրանց լեզուն այդ ժամին արպաւորիչ է ու խորհրդաւոր: Նրանք մեզ ցնցում ու գողացնում են, լացացնում ու աղօթել տալիս:

* * *

Մեռելները ապրողների համար ունեն ոչ միայն իրենց յիշեցումի ժամը, այլ և նրանք ունեն իրենց ձայնը, որով, զբօսելով հեանքի խորհրդաւոր խորքերում, երգում ու խօսում են Ապրողներին: Ի՞նչ գեղեցիկ է այդ ժամը:

Պէտք է որ այդ ձայնը լսելի լինի Ապրողներին այն հրաշալի ժամին, երբ խօսում ու երգում է:

* * *

Մարդը, օբւայ որոշ ժամերին, առանց որ այդ օրը լինի աշնանային մի օր կամ ոչ, իր սովորական զբաղումների ընթացքում, ի տես մի էակի, մի իրի, մի գաղտնակարի՝ անմիջապէս իր սրտում լսում է մի արձագանգ՝ լի վշտոտ մրմունջներով և անբացատրելի քաղցր տխրութեամբ: Ո՞ր տեղից է գալիս այդ:

— Դա գալիս է հեանքի խորհրդաւոր խորքերից. գալիս է մեր Մեռելներից: Դա արձագանգն է մեր սիրելի հորածների ձայնի, որոնք գտնւում են հեանքի ստեղծներում: Դա արձագանգն է մեր Մեռելների, որոնք մոռացւել էին մեր կողմից և որ տեսքը մի մարդու, մի բանի, մի գաղտնակարի՝ որ առնչութիւն ունենալով նրանց գոյութեան հետ, մեզ մշտածեցնել է տալիս նրանց կեանքի մասին, յիշոււ նրանց: Այդ արձագանգը, երբեմն, այնքան ուժեղ է, որ ցնցում է մեր ամբողջ մարմինը և խախտում մեր հոգին: Նա մի մահուան գող է հաղորդում մեր մարմնակազմի բոլոր մասերին և արցունք է յարուցում աչքերում... Եւ ապա այդ արձագանգն օնցնում ու անյայտանում է կամ նիբհում չգիտես հեանքի իր կողմում կամ մութ անկիւնում, բայց չի վրում, նա ապրում է միշտ հեանքի անհունութեան մէջ: Ո՞րտեղ է նիրհում նա:

— Յայտնի չէ իր կայանի ճշգրիտ տեղը: Անտառների կախաբե-
նեքը, սակայն, ասում են, որ այդ արձագանգը նիւհում է ջրհորների խոր-
քում, անտառների ստւերում. ծառերի տերևներում, լճերի մակերեսին, ծա-
ղիկների մէջ, որոնք երազում են աստղազարդ գիշերներին միայն:

Յետոյ այդ արձագանգն անցնում է մեծ անապատներով ու ել-
նում լեռների կատարները... ու կորչում Կեանքի խորքերում:

Ուզում ես զու, ժ՛վ մարդ, նորէն լսել այդ արձագանգը: Ուզում
ես դու նորէն նրան վերապրեցնել քո սրտում:

— Բայց նրան նորէն լսելու համար, վերապրեցնելու համար հո-
գու մէջ, պէտք է նրան հարցնել նորէն Կեանքից. պէտք է նրան դուրս
բերել նոյն ինքն Կեանքի խորքերից. նրան պիտի հարցնել գերեզմանաջա-
րերից, գերեզմանոցի ծառերից, այդ գերեզմանոցում բուսած խոնարհ
բոյսերից:

Նրան պիտի հարցնել լուսնի մեկամազձողովի լուսնից, աստղազարդ
երկնքից, զարնան արևամուտի կախաբեղի ճառագայթներից, Աշնան քամու
մրմունջից, նուրբ արծաթաթոյր անձրևից, երաժշտութեան գիշերային հա-
մանւագից ու երգի ողբերգական շեշտերից: Լսել այս բոլոր երևոյթների
ձայնը, երգը անմեղների՝ թռչունների ու մանուկների՝ դա նշանակում է
լսել Կեանքի արձագանգը: Իրանք են, Կեանքի այդ երևոյթները, որոնք
կարող են, նորէն, վերածաղկեցնել մեր սրտերում մեր սրբելի կորածներին
հոգին:

Պէտք է, մէկ խօսքով, թերթատել Մեռելների երեքնուկը, որտե-
ղից ելնում է այդ արձագանգը:

* * *

Բայց ճիշտ է արդեօք, որ գոյութիւն ունին, իրապէս, ջրհորներ՝
ուր Մեռելները թափնում են, լեռներ՝ որոնց վրայ նրանք բարձրանում են,
և խորհրդաւոր անտառներ, ուր նրանք ապրում են ծառերի խորհրդում և
անապատներ, ուր նրանք զբօսնում են ազատօրէն:

— Ո՛չ, Գոյութիւն չունի օրևէ լեռ, ջրհոր կամ անտառ: Աշխար-
հը նրանց չի ճանաչում: Այդ անտառները, անապատներն ու լեռները՝ դա
Մարդն է, ապրողը. դա մեր սիրտն է: Մեր Մեռելներն ապրում են միայն
մեր հոգում:

Դա այնտեղ, Հոգու Խորքերում է, ուր նրանք թափնում են,
բարձրանում, երգում ու զբօսնում:

Մեր մարմնի մէջ է, որ նրանք թափնւած են ու այնտեղ ապրում
են անտես՝ մի խորհրդաւոր օրէնքի միջոցով, որ կոչւում է ժառանգակա-
նութեան օրէնք, գիտական օրէնք, նրանք մեզ փոխանցել են իրենց սիրտն

ու մարմինը, իրենց արիւնն ու հոգին, իրենց առաքիճութիւններն ու աւազը, իրենց թերութիւնները, իրենց սովորոյթներն ու հակումները, իրենց Փիղիքական ու բարոյական դիմագծերը, մարմնական ու բարոյական նըմանութիւնը:

Հակառակ մեր կամքի՝ նրանք վերադառնում են մեր մէջ և, մեր կեանքի ամէն պահին, վերապրեցնում են բոլոր իրենց հակումները, ցանկութիւններն ու մտքերը:

Միայն թէ Մահւան այդ մասնիկները, անսահմանօրէն փոքր այդ հիւլէներն ու բջիջները մեր մէջ, կազմելով մեր մարմնի մասերը, կեանքի այդ ողբերգական ժամուն, Աշնանը, գուցէ մի խորհրդաւոր պղծեցութեամբ, մի գաղտնի հաղորդականութեամբ, Կեանքի ու Մահւան տարբերի միջև եղած կախուսով, — աղղում են ապրողի վրայ աւելի ուժեղ ու խորապէս, միլիոնաւոր ու միլիարդաւոր բջիջների վրայ, որ անհասն են կազմում, որոնք մեզ ցնցում, դողացնում են, ու զգալ տալիս իրենց ներկայութիւնը մեր մէջ, մեր մարմնում, նրանք մեր մէջ գործում են ինքնիշխան: Ապրողները, — իրաւացիօրէն նկատում է Օ. Կոստը, — կառավարւում են մեռելների կողմից ¹⁾:

ՄԵՌԵԼՆԵՐԻ ԱՏՈՒՆԵՐՈՒՄ

—

ՅԵՇԱՏԱԿՆ ՈՒ ԻՐ ԲՈՅՐԸ

—

ՔԱՂՑՐ ՀԵՌԱՒՈՐԸ

«Օ՛ դուք, պատկերներ ու տեսիլներ իմ երիտասարդութեան: Այսօր ես երազում եմ ձեզ. ինչպէս երազում եմ մեռելներին, որ սիրում էի:

«Ձեզնից է իմ նախասիրած մեռելներ, որ ինձ է գալիս մի անուշ բոյր, որ թեթևացնում է սիրտը և արցունքներ հոսեցնում: Իսկապէս, նա յուզում ու թեթևացնում է սիրտը նրա, որ նաւում է միայնակ ²⁾»:

* * *

Տերերները, որ ընկնում են ծառերից, միշտ երկրի մի կենդանի անկիւն են դառնում, ուր պատասպարւում ու հանգչում են: Նոյնն է պատա-

¹⁾ A. Comte «Cours de philosophie positive».

²⁾ «Ainsi parlait Zarathoustræ», p. 152 «Le chant du tombeau».

հուժ նաև մեր Մեռելներին, որոնք կեանքից պոկւած՝ նոյնպէս մի կենդանի անկիւն պիտի գտնեն ապրողներէ մօտ, մի սրբազոտ անկիւն ամէն մի Ապրողի սրտում:

* * *

Մեռելները, մահից յետոյ, ապաստանում են կեանքի սուերնորում, որոնք թեւածնում են Քաղցր Հեռաւորի պարտէզի հորիզոններում...

* * *

Մեր սիրելի մեռելներն ո՞ր են գտնուում: Ապրճում են նրանք Քաղցր Հեռաւորի մէջ:

— Իսկապէս, Քաղցր Հեռաւոր: Օ՛ր, ինչ քաղցր է նա՛ւ Բայց ձեր է նա՛ւ Նա այստեղ է, այնտեղ. Նա ամենուրեք է և ոչ մի տեղ. նա՛ նրանց պատկանող բաների մէջ է, նա՛ այն էակների մէջ է, որոնց հետ առնչութեան մէջ էր: Նա նրանց գերեզմանների, մեզ հետ անցրած կեանքի մէջ է, Նա՛ այն տան մէջ է, ուր նրանք ապրել են, օգի, բոյրի և կամ պարտէզի ծաղիկների մէջ. ուր նրանք զբօսնում էին կամ սիրում նրանց: Նա՛ նրանց շարժուձևերի, նրանց ժպիտների ու հայտնաբերների, խօսքերի ու շարժումների մէջ է: Նա գտնուում է մէկ խօսքով: Լուսաւոր Հեռուների մէջ, վասն զի լա՛ Մեռելների Հեռաւորն է...

Օ՛ր, ինչպէս մթնշաղի խորքում. նրանք մեր սիրտը սեւտում են այնտեղ, տնտնուորէն, իրենց պատկանող բաների հետ, նրանց մահից յետոյ անձեռնմխելի մեռցած. նրանք մեզ սեւտում են այնտեղ՝ իրենց գէձքերի մեռելաբեր աչքերով. նրանք մեզ սեւտում են իրենց հոգով՝ պարուրած սուերներով, ապաշաւանքով:

Բայց ձեր է կայանը այդ Քաղցր Հեռաւորի:

— Նա մեր մէջ է, նա գտնուում է մեր էութեան ու Հոգու Սորհըրդաւոր խորքերում, վասն զի միշտ սրտի լաւթիւնն է, յիշատակով ծաւալուն, այնքան փոքր բաներից կազմւած. անսահման նուրբ ու քնքոյշ, թնթն ու յուզիչ, որ ապրում է մեր աչքերի առաջ, եւ թողնում ենք որ թովեն ու յուզեն իրենց ոգեկան ներկայութեան ու Ֆիզիքական բացակայութեան խորհրդով: Եւ ասես անձ Մեռելներն են որ լուում են, Մեռելներն են որ միտաբիկ հրօթիշտ են տալիս՝ լսելի լինելու համար Ապրողների հոգմից, Երկրի այս բնակիչների:

Քաղցր Հեռաւորը, սակայն, Յիշատակի մութ ալիքներն է զար

կում, նա կրժուժ է մոռացութեան սարսափելի ալիքները, ալիքները Մահ-
ւան, հասնելու համար Ապրողի հեռաւոր փիլին:

Հոգին, շնորհիւ Յիշատակի նրբին բոյրի, մուտք է գործում Քաղ-
ցըր Հեռաւորի գեղեցիկ պարտէզը և տեսնում է նրա խորհրդաւոր խորքե-
րում յուզիչ, յստակ ու զգայախար հայեացքներ, որոնք նայում են Լուսա-
ւոր Հեռուները, պարուրւած անհասանելի սքանչելիքներով:

Եւ այս Լուսաւոր Հեռուներից, այնուհետեւ, Ապրողներին գալիս են
քաղցր մտքեր, շոյող ձայներ՝ մինչև իսկ ստան կրկինքներ ի տակ: Որովհե-
տեւ Քաղցր Հեռաւորը զանգ առ զանգ կոչ է անում երեկոյի մեր Հոգուն,
Լուսաւոր Հեռուների երեկոյին, որի հնչիւնն իր թրթուռների մէջ բերում
է մեր մեռելների հեկեկանքներն ու արցունքները՝ դէպի մեզ:

Եւ այնուհետեւ միայն, Մարդու Հոգին Աշնան խիստ քամու, տե-
րկների անկման մէջ կարող է լսել Մեռելներին, որ խօսում են ապրողներին.
լսել համր լիզուն իրերի ու էակների, խորհրդաւոր լիզուն Մեռելների ու Ապ-
րողների. որովհետեւ այդ լիզուն նոյնպէս գալիս է Լուսաւոր Հեռուներից...

* * *

Հոտոտելու միակ ծաղիկը, որ Մեռելները թողնում են ապրող-
ներին, դա Յիշատակն է:

* * *

Ահաւասիկ Պաննա լեռան մի բնակիչը, Ապրլտնի որդին, քեր-
թող՝ Յրանսիս կարկօն, որի նուրբ հոգին գիտէ մուտք գործել Քաղցր Հե-
ռաւորի պարտէզը, ներշնչւած Լուսաւոր Հեռուներով, բուրաւէտ ու հեշտալի
ծաղիկներով, կազմւած սուերներից ու ապաշաւանքից:

Լսենք. ահաւասիկ Լուսաւոր Հեռուներից մի շող, որի վրայ նա
տեսաւ կեանքի մի սուեր...

«Պանդոկում ես քեզ սպասում էի գիշերւայ պահուն...»

«Թւում էր սակայն որ դու անկասկած ուշանաս պիտի:

«Մէկը փողոցում հետևում էր քեզ ու անձայն սահում,

«Ու տեսայ ինչպէս մտնելուց առաջ յետ դարձար կրկին:

«Վախիկնում էիր ու ամուր փակում դռները նորէն,

«Եւ սուերը քո մտում էր դուրսը գիշերւայ մթին.

«Դա քո սուերն էր որ հետևում էր քեզ յամառօրէն:

«Ու սուերը քո միշտ էլ փողոցում, դրսուսն է կարծես

«Եւ այն պանդոկում, որտեղ որ յաճախ սպասել եմ քեզ:

«Բայց դու մեռել ես...»

«Եւ քո սուերը միշտ էլ դռան մօտ քո մահւան օրից,
«Երբ հեռանում եմ՝ այժմ էլ նա է որ հեռուում է ինձ,
«Բայց երկնչիւով ու վախով լեցուն որպէս մի անբան.
«Կանգ առած պահուս նա էլ է կանգնում ու գետին կառչում,
«Իսկ երբ խօսում եմ՝ ինձնից խուսափում ու հեռու փախչում... 1)

* * *

Մեզնից սմէն մէկը, չէ՞ որ, նոյնպէս իր Մահւան սուերն ունի,
որ բաղխում է մեր տան դուռը, կանգ առնում և ապա փախչում:
Բայց ինչ քաղցր է խորհել այդ սուերի մասին:

* * *

Ատուծոյ միտքը,—յայտարարում է Մոհամէդը,—հաւատացեալ-
ների հոգում խաղաղութիւնը իշխել կը տայ:

Նրա յիշատակը սրտերի խաղաղութիւն չէ՞:

Այս գեղեցիկ միտքը յատկապէս կիրառոււմ է մեր սիրելի Կո-
րածնների յիշողութեան պահուն:

Վասն զի, իսկապէս մեր սիրելի մի կորած էակի միտքը խաղա-
ղութիւն իշխել կը տայ մեզնից ամէն մէկի հոգու մէջ:

Եւ «Իր յիշատակը նոյնպէս խաղաղութիւն չէ՞ սրտերին»:

Ստուգիւ:

* * *

Յիշատակը նուրբ բոյրն է քնքոյշ ու երախտազէտ հոգու:

* * *

Եւ յիշատակը խորհրդաւոր մի կոչն է Մեռելների՝ Ապրողներին,
կոչ՝ նման մի ձայնի, որ իրեն լսելի է դարձնում գիշերը, մի անտառի
խորքում, և որը բաղխում է մեր սրտի միևնոյն կէտին, աւելի ու աւելի
հապճեպ, այն չափով որ հեռանում է:

* * *

Գիրեզմանը մի խորհրդաւոր քող է Մեռելների ու Ապրողների

1) Francis Carco, «Ombre», «Les Nouvelles Littéraires» 1 janvier
1938. № 794

միջև:

Դա ամենաբարձր աղբիւրն է այն ողբերգական երաժշտութեան, որ մարդուն տանոււմ է դէպի երկու կատարներն ու անգունգները Կիսնքի ու Մահւան՝ Սիրոյ մէջ, որպէս կարապի վերջին երգ:

Ֆերեզմանը, դա Մահւան ու Սիրոյ ոգրեքգութիւնների ողբերգութիւնն է:

Ողբերգութիւնը, ըստ մեծ մտածող Արիստոտէլի ճիշտ կարծիքի, ամենաբարձր ու ամենալրիւ ձևն է քերթողութեան: ¹⁾

* * *

Մեր Մեռելների ապաստարանը մի սրբազան պարտէզ է, որսմանտեղ դա նոյնպէս և մեր ապաստարանն է, մեր պարտէզը:

Երբ մենք այնտեղ ենք, մեզնից ամէն մէկը, բնազգարար, որպէս յարգանքի տուրք Կորածներին, վերցնում է իր գլխարկը մի խորը լուսութեան մէջ, որը խզում է միայն հեկեկանքներով:

Մարդիկ, ասում է հայկական իմաստութիւնը, զնացին Մեռելի տունը և նրանցից ամէն մէկը ողբաց իր Մեռելը:

Ոչինչ աւելի ճիշտ քան այս գիտողութիւնը:

* * *

Յիշատակը Սիրոյ մի գուստրն է, վասն զի նա ծնւել է գեղեցիկ ասուածուհի Չեհնուսի պարտիզում:

Յունական հանճարը յօրինել էր մի գեղեցիկ առասպել՝ բացատրելու համար նկարչութեան ծագումը, որը նաև յիշատակի ծագումն է: Մի սիրուն պղծիկ, ասում են, փափագելով պահել սիրածի պատկերը՝ մի խիճով պատի վրայ փորում է նրա ստւերի շրջագիծը:

° Այսպէս՝ արեեստի ամէն ծնունդ մինչև Չես ²⁾:

* * *

Մեռելների Յիշատակն ունի իր բոյրը, մի արբեցուցիչ ու անպատում բոյր: Դա թարմ երեքնուկների լաւ բոյրը չէ. գաղջ ու թափանցող, ինչպէս ձմեռնային անձրևի նորբ կայակները և կամ սառը այգալոյսի մշուշների ստեբը: Դա նոյնիսկ շուշանների ու վարդերի բոյրը չէ, այն անապակ բոյրը, որ ձեռք համակում է ու չի թողնում:

Այդ շնչելի բոյրը բոլորովին տարբեր է. գա նման է Լուսնի շիկահեր, զոգոջ շողբեր ընդարմացնող շնչին՝ գարնանային գեղեցիկ երեկո-

¹⁾ A. et M. Croiset, «Manuel d'histoire de la Litterature grecque» p 503

²⁾ «Les Nouvelles Litteraires» 17—6—1939 Paris

յին, դա նման է բուրաւէտ գիշերի սարաուսին, որ արթնացնում է ծաղիկներին ու թռչուններին, քերթողներին ու երաժիշտներին, և սիրահարներին, և իմաստուններին և որոնք, իրենց հերթին, արթնացնում են Մեռելներին իրենց ջնից և նրանց դրդում յաւերժահարսերի և ուրախ կարապնիւրի ու ջնած ծաղիկներին քաղցր ուրախութեան, չվախենալով սոււրեների ու երազների հարկանութիւնից:

Ի՞նչ է այդ բոյրը:

Դա մի ինքնօրինակ խառնուրդ է կեանքի, Մահւան ու Սիրոյ, Քաղցր Հեռաւորի պարտիզում տարածւած, Լուսաւոր Հեռուներով շրմացած:

Դա մի ինքնօրինակ խառնուրդ է մոլորաքի և գերեզմաննոցի համեստ ծաղիկների հոտի, դաշտային ծաղիկների, կածանների ու չոր հողի, որոնք բուրում են արևի շողերի գոնձը՝ մթերւած Երկրի ժամանակաւոր գարնան ընթացքում, կեանքի հետ, մեզ հետ ու Մահւան յաւիտենական գարնան ընթացքում, քսած Մեռելների հետ: Դա բոյրն է անստառում մեռած տերևների և մեր հորածների: Վասն զի մի անգամ տարածւելով այս Յիշատակի հողի, անցիալի հողի վրայ, այս օրհնեալ ծաղիկի վրայ՝ մեզնից ամէն մէկը զգում է տակաւ առ տակաւ թմրութիւն, խորասուզում մի տեսակ նրաւութեան մէջ, մի հեշտալի ու անվսխճան երազանքի, անուշ, շնաւանուշ՝ որպէս մանկութեան գորգուրանք մայրական, որպէս անմեղ սիրոյ առաջին համբոյր՝ բզլած մի մաքուր սրտից: որպէս մի անմեղ պատանու հողին, որով նա բուրաւէտ Սորհրդանիշ է:

Այս բոյրը մնայունն է. նա մեր ձեռքի հասողութեան վրայ է: Մենք կարող ենք այնտեղից աննել քերթւածների ու հազւագիւտ զգայնութիւնների մի անհուն գոնձ, մեր յոգնատանջ հոգուն տալ զբոսի կեանքի բարախուսները, իր եթերային սնունդը մաքուր ու երախտագէտ հոգուն յատուկ մտնուկներին, յաւերժահարսերին, հրեշտակներին ու սիրահարներին՝ ամառային աստղազարդ գիշերի լազուրը, գեղեցկութիւնն ու երաժըտութիւնը ապրող:

Բայց այդ եթերային սնունդը շատ գրաւիշ է և իր բոյրը՝ միշտ ուժեղ, որովհետև սրտի քերթւածքը բերում է այդ Սոստացւած Երկրի, Բուրուէտ Դրախտի բեղուն գանձին ոյժերի նորաբթթում և Լուսաւոր Հեռուների ծաւալում:

* * *

Մեռելների Յարութիւն մարդու սրտում կասբուում է նրանց ապաստանի պատեմունքի միջոցով:

* * *

Ի յիշատակ իր սիրելի Մեռելիների՝ մեզնից ամէն մէկը իր տան մի անկիւնում պիտի ստեղծի յիշատակի. պաշտամունքի ու սիրոյ մի օջախ, մի փոքրիկ սրբազան տաճար՝ համր երգերի ու լուռ աղօթքի, ինչպէս որ կատարոււմ էր հնագոյն հասարակութեան մէջ:

* * *

Այսպէս, ի յիշատակ իր ամենասիրելի Մեռելիների, սրանց խորանի առաջ. կը մեկնեն մի փունջ քրիզանթիւս և շէկ ու շառագոյն ոստեր, որոնցից աշունն ախորժում է՝ պճնելու համար արուարձանների գերեզմանատների մենութիւնն ու լուսթիւնը:

* * *

Ոչ ոք,— յայտարարում է Հ. Թէնը, խօսելով Կառլայլի մասին,— աւելի հզօր դիպցմունքով հոգեպիշ չի դիտել համր աստղերը, որոնք յաւերժօրէն թաւալում են տժգոյն երկնակամարում և պարուրում մեր փոքրիկ աշխարհը: Ոչ ոք կրօնական աւելի երկիւղ սժութեամբ հոգեպիշ չի դիտել անհուն խաւարը, որ մեր խեղճ միտքը յայտնուում է մի պահ՝ որպէս ցոլք՝ ու անմիջապէս մեռ կողքին մառյլ անդունդը, ուր գնում է հանգչելու «Կեանքի բորբ մութգնութիւնը»:

Աչքերը սովորաբար սեւեռած են այդ մեծ խաւարների վրայ և նա պաշտամունքի ու յոյսի սօրտուտով պատկերում է այն ճիւղը, որ կրօնները թափել են թափանցելու համար:

Ահա թէ ինչ է ասում Կառլայլը, մեր սրտում կառուցելիք փոքրիկ եկեղեցու առթիւ, այնտեղ պաշտելու համար մեր սիրելի Մեռելիներին.— «Ամենահեռաւոր լինների սրտում կանգնած է փոքրիկ եկեղեցին, մեռելները ննջում են նրա շուրջը, ճերմակ շիրմաքարերի տակ՝ երջանիկ յարութեան սպասումով: Քո հոգին բոլորովին մեռած կլինի, եթէ երբէք. ոչ մի ժամի. կէս գիշերի հեծեծանքի ժամին, երբ այդ եկեղեցու լուսապատկերը կախւած է երկնքում և էութիւնը կլսուած է խաւարներում՝ դու անտարբեր լինես, եթէ նա քեզ չի ասի անպատում բաներ, որոնք կը հասնեն մինչև հոգին քո հոգու. .

Ո ժող է նա, որ մի եկեղեցի ունի, այն՝ ինչ որ կարող ենք եկեղեցի կոչել: Նա կանգուն է նրանով, թէպէտև անհունութեան կենարոնում, յաւիտենութեան համախառնարանում. նա կանգուն է որպէս մարդ՝ Աստուծոյ և մարդու առաջ. Անեզր ու լայնածաւալ տիեզերքը նրա համար

դառնում է մի հաստատուն քաղաք, մի բնակավայր՝ որ ճանաչում է¹⁾;

Մարդը, որի մասին խօսում է հառաջը, մի արտակարգ և ուրիշ-ներկեց անջառուած էակ չէ: Մեղսից ամէն մէկը, ամենահամեստն և ամենամեծը, իր հոգեկան պարտիզում, ներսը, կարող է ունենալ իր «եկեղեցիքն», ուր ննջում են մեր Մեռելները»: Որքան քաղցր է այս ներքին պարտիզում ապրել մեր սիրելի հորածներէ սիրով:

Մեռելները նոյնքան կարիք ունեն սիրոյ, որքան ապրողները: Նրանք չեն մեռնում այն ժամին, երբ հոգ են իջնում, այլ այն չափով՝ որ սուղում են մոռացութեան մէջ. և միայն մոռացութիւնն է որ անջատուը դարձնում է անդարձ: Ձթողները որ մոռացութիւնը խտանայ նրանց վրայ, Քաւական է որ, ամէն օր մէկ հատիկ մտածում յատկացնէք նրանց, մեր այն մտածուցներէ, որ անհաշիւ ցրում ենք այնքան անօգուտ առարկաների վրայ. նրանք չեն երազի այլևս հեռանալ, նրանք կը մնան մեր շուրջ և մենք չենք իմանայ թէ ինչ է գերեզմանը. որովհետև գերեզման չկայ, որքան էլ խորը լինի նա, որ մեր միտքը չբարձրացնի նրա սալաքարը և չցրի նրա բեկորները ²⁾:


Այս առթիւ աւելի գեղեցիկ ու քնարերգական ձևով, Մեթերլինկից էլ առաջ, մեր չքնաղ քնարերգակ Պետրոս Դուրեանն ասում էր «Իմ մահը» իր հոչակաւոր բանաստեղծութեան մէջ.—

«Իսկ աննշան եթէ մնայ

Երկրի մէկ խորշն հողակոյտն իմ,

Եւ յիշատակս ալ թառամի,

Ա՛հ, այն ատեն ես կ'մեռնիմ»:



1) H. Taine, «Histoire de la Litterature Anglaise» t. V. p. 235

2) M. Maeterlinck, «Les Débris de la Guerre» p. 255 Paris 1918

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՒՂԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0073306

[20]

A ^{III}
5093

Շուտով մամուլին կյանձնելի նոյն հեղինակի
«ԱՆԱՀԻՏ ԱՍՏԻԱԾՈՒՀՈՒ ՎԵՐՁԻՆ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ»:

ՆԻԻՐԻՈՒՄ Է ԱՈՅՆ ԳԻՐՔԸ
ԳՈԿՏՈՐ Գ. ՄԱՇՈՒՐԵԱՆԻ
ՅԻՇԱՏԱԿԻՆ
ԻՐ ԱՅՐԻՏ

ԳԻՆՆ Է 100 ԽԻԱԼ
Արտատնտեսական 3 գույր:

Դիմել՝ տպարան «Մոզերն» և Թեհրանի բոլոր
գրախանութները:

Տպարան «ՄՈՂԵՐՆ», Թեհրան